Եթե դեղատնից հաշիվ եք ստանում դեղատոմսով տրվող դեղի, պաշարների կամ հավելումների համար, զանգահարեք Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-977-2273 հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները կարող են զանգահարել 711՝ երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 17:00: Կարող եք նաև այցելել Medi-Cal Rx կայքէջ՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/> հղմամբ:

### **Blue Shield Promise-ից Ձեր ծախսերի փոխհատուցում խնդրելը**

Եթե Դուք վճարել եք Medi-Cal-ի ծառայությունների համար, որոնք արդեն ստացել եք, կարող եք իրավասու լինել փոխհատուցման (հետ վճարման) համար, եթե բավարարեք հետևյալ **բոլոր** պայմանները.

- Ձեր ստացած ծառայությունը ապահովագրված ծառայություն է, որի համար Blue Shield Promise-ը պարտավոր է վճարել: Blue Shield Promise-ը Ձեզ չի փոխհատուցի այն ծառայության համար, որը չի ապահովագրվում Blue Shield Promise-ի կողմից:
- Դուք ստացել եք ապահովագրված ծառայությունը, քանի դեռ Blue Shield Promise-ի իրավունակ անդամ էիք:
- Դուք խնդրում եք հետ վճարել գումարը՝ ապահովագրված ծառայությունը ստանալու ամսաթվից մեկ տարվա ընթացքում:
- Դուք տրամադրում եք ապացույց, որ Դուք կամ Ձեր անունից որևէ մեկը վճարել եք ապահովագրված ծառայության համար, օրինակ՝ մանրամասն անդորրագիր մատակարարից:
- Դուք ստացել եք ապահովագրված ծառայությունը Medi-Cal-ում գրանցված մատակարարից, որը Blue Shield Promise-ի ցանցի անդամ է: Դուք կարիք չունեք բավարարելու այս պայմանը, եթե ստացել եք շտապ օգնության խնամք, ընտանիքի պլանավորման ծառայություններ կամ մեկ այլ ծառայություն, որը Medi-Cal-ը թույլ է տալիս մատուցել ցանցից դուրս մատակարարներին՝ առանց նախավավերացման (նախօրոք լիազորում):
- Եթե ապահովագրված ծառայությունը սովորաբար պահանջում է նախավավերացում (նախօրոք լիազորում), Դուք պետք է մատակարարից ապացույց տրամադրեք, որը ցույց է տալիս ապահովագրված ծառայության բժշկական անհրաժեշտությունը:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## 2 | Տեղեկություններ Ձեր առողջապահական ծրագրի մասին

Blue Shield Promise-ը Ձեզ կտեղեկացնի Ձեր ծախսերը փոխհատուցելու որոշման մասին նամակի միջոցով, որը կոչվում է Գործողության ծանուցագիր (Notice of Action, NOA): Եթե Դուք համապատասխանեք վերոնշյալ բոլոր պայմաններին, Medi-Cal-ում անդամագրված մատակարարը պետք է Ձեզ հետ վճարի Ձեր վճարած ամբողջ գումարի համար: Եթե մատակարարը հրաժարվի Ձեզ հետ վճարել, Blue Shield Promise-ը Ձեզ կվերադարձնի վճարված ողջ գումարը: Մենք Ձեզ կփոխհատուցենք հայր ստանալուց հետո 45 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե մատակարարը անդամագրված է Medi-Cal-ում, բայց Blue Shield Promise-ի ցանցում չէ և հրաժարվում է Ձեզ փոխհատուցել, Blue Shield Promise-ը Ձեզ հետ կվճարի, բայց միայն այն գումարը, որը կվճարեր FFS Medi-Cal-ը: Blue Shield Promise-ը Ձեզ հետ կվճարի շտապ օգնության ծառայությունների, ընտանիքի պլանավորման ծառայությունների կամ այլ ծառայության համար, որը Medi-Cal-ը թույլ է տալիս տրամադրել ցանցից դուրս մատակարարների կողմից՝ առանց նախավավերացման (նախօրոք լիազորում): Եթե Դուք չհամապատասխանեք վերոնշյալ պայմաններից որևէ մեկին, Blue Shield Promise-ը Ձեզ հետ չի վճարի:

Blue Shield Promise-ը Ձեզ հետ չի վճարի, եթե՝

- Դուք խնդրել և ստացել եք ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում Medi-Cal-ի կողմից, օրինակ՝ կոսմետիկ ծառայություններ
- Ծառայությունն ապահովագրված ծառայություն չէ Blue Shield Promise-ի համար
- Դուք ունեք Medi-Cal չբավարարված ծախսաբաժին
- Դուք գնացել եք բժշկի մոտ, ով Medi-Cal չի ընդունում և ստորագրել եք մի ձևաթուղթ, որտեղ նշվել է, որ այնուամենայնիվ ցանկանում եք հետագոտվել, և որ Դուք ինքներդ կվճարեք ծառայությունների համար
- Դուք ունեք Medicare Part D -ի համավճարներ դեղատոմսերի համար, որոնք ապահովագրված են Ձեր Medicare Part D ծրագրի կողմից



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

# 3. Ինչպես խնամք ստանալ

## Առողջապահական խնամքի ծառայություններ ստանալը

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍՁԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱՔ, ԹԵ ՈՒՄԻՑ ԿԱՍ ՈՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԽՄԲԻՑ ԿԱՐԵԼԻ Է ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԱՄՔ ՍՏԱՆԱԼ:

Դուք կարող եք սկսել առողջապահական խնամքի ծառայություններ ստանալ Blue Shield Promise-ում անդամագրման ուժի մեջ մտնելու ամսաթվից: Միշտ Ձեզ հետ ունեցեք Ձեր Blue Shield Promise-ի նույնականացման (ID) քարտը, Medi-Cal-ի նպաստների նույնականացման քարտը (BIC) և առողջապահական ապահովագրության ցանկացած այլ քարտ: Երբեք թույլ մի տվեք որևէ մեկին օգտագործել Ձեր BIC քարտը կամ Blue Shield Promise-ի նույնականացման (ID) քարտը:

Միայն Medi-Cal-ի ապահովագրություն ունեցող նոր անդամները պարտավոր են Առաջնային խնամքի մատակարար (primary care provider, PCP) ընտրել Blue Shield Promise-ի ցանցում: Նոր անդամները, ովքեր ունեն և՛ Medi-Cal, և՛ համապարփակ այլ առողջապահական ապահովագրություն, կարիք չունեն PCP ընտրելու:

Blue Shield Promise-ի ցանցը կազմված է մի խումբ բժիշկներից, հիվանդանոցներից և այլ մատակարարներից, որոնք աշխատում են Blue Shield Promise-ի հետ: Դուք պարտավոր եք PCP ընտրել Blue Shield Promise-ի անդամ դառնալուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե PCP չընտրեք, Blue Shield Promise-ը PCP կընտրի Ձեզ համար:

Blue Shield Promise-ում կարող եք նույն PCP կամ տարբեր PCP-ներ ընտրել ընտանիքի բոլոր անդամների համար, քանի դեռ PCP-ն հասանելի է:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե բժիշկ ունեք, որին ցանկանում եք պահպանել, կամ ուզում եք գտնել նոր PCP, ծանոթացեք Մատակարարների հասցեագրքին՝ Blue Shield Promise-ի ցանցի բոլոր PCP-ների և այլ մատակարարների ցանկը տեսնելու համար: Մատակարարների հասցեագիրքն ունի Ձեր ընտրությանն օգնող այլ տեղեկություններ: Եթե Ձեզ անհրաժեշտ է Մատակարարների հասցեագիրքը, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Մատակարարների հասցեագիրքը կարող եք գտնել նաև Blue Shield Promise-ի կայքում՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal) հղմամբ:

Եթե չեք կարող Ձեզ անհրաժեշտ խնամքն ստանալ Blue Shield Promise-ի ցանցում գտնվող մասնակից մատակարարից, Ձեր PCP-ն կամ Blue Shield Promise-ի ցանցի մասնագետը պարտավոր են Blue Shield Promise-ից հաստատում խնդրել, որպեսզի Ձեզ ուղարկի ցանցից դուրս գործող մատակարարի մոտ: Սա կոչվում է ուղեգիր: Արտացանցային մատակարարին դիմելու համար ուղեգիր պետք չէ, որպեսզի ստանաք զգայուն խնամքի ծառայություններ, որոնք ավելի ուշ նկարագրված են այս գլխում՝ «Զգայուն խնամք» վերնագրի ներքո:

Շարունակեք ծանոթանալ այս գլխի հետ՝ PCP-ների, Մատակարարների հասցեագրքի և մատակարարների ցանցի մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար:

**Medi-Cal Rx ծրագիրը կառավարում է ամբուլատոր դեղատոմսով դեղերի ապահովագրությունը: Հավելյալ տեղեկություններ ստանալու համար ծանոթացեք 4-րդ գլխի «Medi-Cal-ի այլ ծրագրեր և ծառայություններ» բաժնին:**

## Առաջնային խնամքի մատակարար (PCP)

Ձեր առաջնային խնամքի մատակարարն (PCP) այն արտոնագրված մատակարարն է, ում այցելում եք Ձեր առողջապահական խնամքի մեծ մասի համար: Ձեր PCP-ն նաև օգնում է Ձեզ ստանալ Ձեզ անհրաժեշտ այլ տեսակի խնամք: Դուք պարտավոր եք PCP ընտրել Blue Shield Promise-ին անդամագրվելուց հետո 30 օրվա ընթացքում: Ձեր տարիքից և սեռից կախված, կարող եք որպես Ձեր PCP ընտրել ընդհանուր մասնագետի, մանկաբարձ/գինեկոլոգի, ընտանեկան հիվանդությունների մասնագետի, ներքին հիվանդությունների մասնագետի կամ մանկաբույժի:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Առաջնային խնամք տրամադրող բուժքույրը (nurse practitioner, NP), օգնական բժիշկը (physician assistant, PA) կամ վկայագրված բուժքույր-մանկաբարձը նույնպես կարող են գործել որպես Ձեր PCP: NP, PA կամ վկայագրված բուժքույր-մանկաբարձը նստրելու դեպքում, թերևս Ձեզ համար Ձեր խնամքը վերահսկող բժիշկ նշանակեն: Եթե ն՝ Medicare-ի, ն՝ Medi-Cal-ի անդամ եք կամ եթե ունեք առողջապահական խնամքի այլ համապարփակ ապահովագրություն, պարտավոր չեք PCP ընտրել:

Կարող եք ընտրել Հնդկացիների առողջական խնամքի մատակարար (Indian Health Care Provider, IHCP), Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (Federally Qualified Health Center, FQHC) կամ Գյուղական առողջապահական կլինիկա (Rural Health Clinic, RHC) որպես Ձեր PCP: Մատակարարի տեսակից կախված, թերևս կարողանաք ընտրել մեկ PCP Ձեզ և Ձեր ողջ ընտանիքի անդամների համար, ովքեր Blue Shield Promise-ի անդամ են, քանի դեռ PCP-ն հասանելի է:

**Նշում.** Ամերիկյան հնդկացիները կարող են ընտրել IHCP որպես PCP, նույնիսկ եթե IHCP-ն Blue Shield Promise-ի ցանցում չէ:

Անդամագրվելուց հետո 30 օրվա ընթացքում PCP չընտրելու դեպքում, Blue Shield Promise-ը PCP կնշանակի Ձեզ համար: Եթե Ձեզ կցել են PCP-ի, սակայն Դուք ցանկանում եք փոխել նրան, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Փոփոխությունը կկատարվի հաջորդ ամսվա առաջին օրը:

Ձեր PCP-ը կանի հետևյալը՝

- Կուսումնասիրի Ձեր առողջության պատմությունը և կարիքները
- Կպահի Ձեր առողջական արձանագրությունները
- Կտա Ձեզ անհրաժեշտ կանխարգելիչ և սովորական առողջապահական խնամքը
- Անհրաժեշտության դեպքում Ձեզ կուղեգրի համապատասխան մասնագետի մոտ
- Անհրաժեշտության դեպքում կկազմակերպի հիվանդանոցային խնամքը

Blue Shield Promise-ի ցանցում PCP գտնելու համար կարող եք ուսումնասիրել Մատակարարների հասցեագիրքը: Մատակարարների հասցեագիրքն ունի IHCP-ների, FQHC-ների և RHC-ների ցանկը, որոնք աշխատում են Blue Shield Promise-ի հետ:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



Blue Shield Promise-ի Մատակարարների հասցեագիրքը կարող եք գտնել առցանց հետևյալ հղմամբ՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal): Կամ կարող եք խնդրել, որպեսզի Մատակարարների հասցեագիրքը փոստով ուղարկվի Ձեզ՝ զանգահարելով 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Կարող եք նաև զանգահարել՝ պարզելու, թե արդյոք այն PCP-ն, որին ցանկանում եք ընտրել, նոր հիվանդներ է ընդունում:

### Բժիշկների և այլ մատակարարների ընտրությունը

Դուք լավագույնս գիտեք Ձեր առողջապահական խնամքի կարիքները, ուստի լավագույն տարբերակը կլինի այն, որ Դուք ընտրեք Ձեր PCP-ն: Ամենալավ տարբերակը մեկ PCP-ի մոտ մնալն է, որպեսզի նա կարողանա ճանաչել Ձեր առողջապահական խնամքի կարիքները: Մակայն եթե ցանկանում եք անցնել նոր PCP-ի, կարող եք փոխել որևէ ժամանակ: Դուք պետք է PCP ընտրեք, որը Blue Shield Promise-ի մատակարարների ցանցում է և ընդունում է նոր հիվանդներ:

Ձեր նոր ընտրությունը կդառնա Ձեր PCP-ն՝ փոփոխության կատարման հաջորդող ամսի առաջին օրը:

Ձեր PCP-ը փոխելու համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Դուք նաև կարող եք փոխել Ձեր PCP-ին՝ մուտք գործելով Blue Shield Promise-ի անդամի ռեսուրսների հարթակ՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal) հղմամբ:

Blue Shield Promise-ը կարող է փոխել Ձեր PCP-ին, եթե PCP-ն չի ընդունում նոր հիվանդներ, դուրս է եկել Blue Shield Promise-ի ցանցից, խնամք չի տրամադրում Ձեր տարիքի հիվանդներին կամ եթե PCP-ի կողմից մատուցվող ծառայություններում առկա են որակի հետ կապված խնդիրներ, որոնք լուծում չեն ստացել: Blue Shield Promise-ը կամ Ձեր PCP-ն թերևս կարող է խնդրել, որ անցնեք նոր PCP-ի, եթե Ձեր հարաբերությունը լավ չէ Ձեր PCP-ի հետ կամ համաձայն չեք նրա հետ կամ եթե բաց եք թողնում ժամադրությունները կամ ուշ եք ներկայանում: Եթե Blue Shield Promise-ին անհրաժեշտ լինի փոխել Ձեր PCP-ն, Blue Shield Promise-ը գրավոր կտեղեկացնի Ձեզ:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե Ձեր PCP-ն փոխվի, փոստով կստանաք Blue Shield Promise-ի անդամի նույնականացման նոր քարտ: Այն կունենա Ձեր նոր PCP-ի անունը: Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին, եթե հարցեր ունեք նոր նույնականացման (ID) քարտ ստանալու վերաբերյալ:

Որոշ բաներ, որոնց մասին պետք է մտածեք PCP ընտրելիս.

- Արդյո՞ք PCP-ն խնամում է երեխաների :
- Արդյո՞ք PCP-ն աշխատում է այն կլինիկայում, որը ես սիրում եմ հաճախել:
- Արդյո՞ք PCP-ի ընդունարանը մոտ է իմ տանը, աշխատավայրին կամ երեխաների դպրոցին:
- Արդյո՞ք PCP-ի գրասենյակը մոտ է իմ բնակության վայրին և արդյո՞ք հեշտ է PCP-ի գրասենյակ հասնելը:
- Արդյո՞ք PCP-ի գրասենյակը առաջարկում է հեռավար առողջապահական ծառայություններ:
- Արդյո՞ք բժիշկներն ու անձնակազմը խոսում են իմ լեզվով:
- Արդյո՞ք PCP-ն աշխատում է ինձ դուր եկած հիվանդանոցի հետ:
- Արդյո՞ք PCP-ն տրամադրում է ինձ անհրաժեշտ ծառայությունները:
- Արդյո՞ք PCP-ի աշխատանքային ժամերը համապատասխանում են իմ ժամանակացույցին:
- Արդյո՞ք PCP-ն աշխատում է մասնագետների հետ, որոնց ծառայություններից ես օգտվում եմ:
- Արդյո՞ք PCP-ի գրասենյակն ունի այլ կլինիկական բժիշկներ, օրինակ՝ առաջնային խնամք տրամադրող բուժքույր, որոնց կարող եմ տեսակցել PCP-ին հասանելի չլինելու դեպքում:

### Սկզբնական բժշկական ժամադրություն (Initial Health Appointment, IHA)

Blue Shield Promise-ը խորհուրդ է տալիս, որ որպես նոր անդամ 120 օրվա ընթացքում հանդիպեք Ձեր նոր PCP-ին Ձեր առաջին բժշկական այցով, որը կոչվում է Սկզբնական բժշկական ժամադրություն (Initial Health Appointment, IHA): Սկզբնական բժշկական ժամադրության նպատակն է օգնել Ձեր PCP-ին տեղեկանալ Ձեր առողջական խնամքի պատմությանն ու կարիքներին: Ձեր PCP-ն կարող է Ձեզ մի շաբթ հարցեր տալ Ձեր առողջապահական պատմության մասին կամ խնդրել, որ հարցաշար լրացնեք: Ձեր PCP-ն նաև Ձեզ կհայտնի առողջապահական խորհրդատվության և այն դասընթացների մասին, որոնք կարող են օգնել Ձեզ:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Երբ զանգահարեք Ձեր սկզբնական բժշկական ժամադրությունը պլանավորելու, հեռախոսին պատասխանող անձին հայտնեք, որ Blue Shield Promise-ի անդամ եք: Տվեք Ձեր Blue Shield Promise-ի նույնականացման համարը:

Ձեր BIC քարտը և Blue Shield Promise-ի նույնականացման (ID) քարտը վերցրեք Ձեզ հետ այցի գնալիս: Լավ կլինի, որ Ձեր այցի ժամանակ Ձեզ հետ տանեք Ձեր դեղերի ցանկը և հարցեր տաք: Պատրաստվեք Ձեր PCP-ի հետ քննարկել Ձեր առողջական խնամքի կարիքներն ու մտահոգությունները:

Անպայման զանգահարեք Ձեր PCP-ի ընդունարան, եթե պիտի ուշանաք կամ չեք կարող գնալ Ձեր ժամադրության:

Եթե հարցեր ունեք Ձեր սկզբնական բժշկական ժամադրության վերաբերյալ, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

### Սովորական խնամք

Սովորական խնամքը կանոնավոր առողջապահական խնամք է: Այն ընդգրկում է կանխարգելիչ խնամքը, որը կոչվում է քաջառողջության կամ լավ խնամք: Այն օգնում է Ձեզ առողջ մնալ և օգնում է, որ խուսափեք հիվանդանալուց: Կանխարգելիչ խնամքն ընդգրկում է պարբերական ստուգումներ, զննումներ, պատվաստումներ, առողջապահական կրթություն և խորհրդատվություն:

Blue Shield Promise-ը խորհուրդ է տալիս, հատկապես երեխաները կանոնավոր սովորական և կանխարգելիչ խնամք ստանան: Blue Shield Promise-ի անդամները կարող են ստանալ բոլոր առաջարկված վաղ կանխարգելիչ ծառայությունները, որոնք առաջարկվում են Մանկաբույժների ամերիկյան ակադեմիայի և Medicare և Medicaid ծառայությունների կենտրոնների կողմից: Այս ստուգումները ներառում են լսողության և տեսողության սքրինինգ, որոնք կարող են օգնել ապահովել առողջ զարգացում և ուսուցում: Մանկաբույժների կողմից խորհուրդ տրվող ծառայությունների ցանկի համար ծանոթացեք Մանկաբույժների ամերիկյան ակադեմիայի «Պայծառ ապագա» (Bright Futures) ուղեցույցներին՝ [https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity\\_schedule.pdf](https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf) հղմամբ:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Սովորական խնամքը նաև ընդգրկում է խնամք, երբ հիվանդ եք:

Blue Shield Promise-ը ապահովագրում է Ձեր PCP-ի մատուցած խնամքը:

Ձեր PCP-ն կանի հետևյալը՝

- Ձեզ կտրամադրի Ձեր ընթացիկ խնամքի հիմնական մասը, ներառյալ պարբերական ստուգումները, պատվաստումները (սրսկումներ), բուժումը, դեղատոմսերը, անհրաժեշտ զննումները և բժշկական խորհրդատվությունը:
- Կպահի Ձեր առողջական արձանագրությունները
- Անհրաժեշտության դեպքում Ձեզ կուղղորդի մասնագետների մոտ
- Կպատվիրի ռենտգեն պատկերումները, կրծքագիրները կամ լաբորատորային անալիզները, եթե դրանց կարիքն ունեք

Սովորական խնամքի կարիքի դեպքում, Ձեր PCP-ին կգանգահարեք ժամադրության համար: Անպայման զանգահարեք Ձեր PCP-ին բժշկական խնամք ստանալուց առաջ, բացառությամբ արտակարգ իրավիճակի:

Եթե Ձեր PCP-ն հասանելի չէ, կարող եք նաև խնամք ստանալ ոչ արտակարգ իրավիճակի համար հետևյալ միջոցներով՝

- Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ
- Հրատապ խնամք
- Վիրտուալ խնամք, օրինակ՝ հեռավար առողջապահական ծառայություններ
- Առևտրի կետերում գործող կլինիկաներ

Արտակարգ իրավիճակի համար զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա շտապ օգնության կայան:

Ավելին իմանալու համար Blue Shield Promise -ի կողմից ապահովագրվող և չապահովագրվող առողջական խնամքի և ծառայությունների մասին՝ ծանոթացեք այս տեղեկագրի 4-րդ գլխի «Նպաստներ և ծառայություններ» բաժնին և 5-րդ գլխի «Երեխաների և երիտասարդների խնամք» բաժնին:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Blue Shield Promise-ի բոլոր ցանցային մատակարարները կարող են օգտագործել օժանդակ միջոցներ և ծառայություններ՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ հաղորդակցվելու համար: Նրանք կարող են նաև շփվել Ձեզ հետ այլ լեզվով կամ ձևաչափով: Ասեք Ձեր մատակարարին կամ Blue Shield Promise-ին, թե ինչ է Ձեզ անհրաժեշտ:**

## Մատակարարների ցանց

Medi-Cal-ի մատակարարների ցանցը ներկայացնում է մի խումբ բժիշկներ, հիվանդանոցներ և այլ մատակարարներ, որոնք գործում են Blue Shield Promise-ի հետ՝ Medi-Cal-ի անդամներին Medi-Cal-ի ապահովագրված ծառայություններ մատուցելու համար:

Blue Shield Promise-ը կառավարվող խնամքի առողջապահական ծրագիր է: Դուք Ձեր ապահովագրված ծառայությունների հիմնական մասը պետք է ստանաք Blue Shield Promise-ի միջոցով՝ մեր ներցանցային մատակարարների կողմից: Դուք կարող եք դիմել ցանցից դուրս մատակարարին առանց ուղեգրի կամ նախնական վավերացման՝ շտապ օգնության կամ ընտանիքի ծրագրման ծառայությունների համար: Դուք կարող եք նաև այցելել ցանցից դուրս մատակարարի՝ տարածքից դուրս հրատապ խնամքի համար, երբ գտնվում եք մի տարածքում, որը մենք չենք սպասարկում: Դուք պետք է ուղեգիր կամ նախավավերացում ունենաք ցանցից դուրս մնացած բոլոր ծառայությունների համար, հակառակ դեպքում դրանք ապահովագրված չեն լինի:

**Նշում.** Ամերիկյան հնդկացիները կարող են ընտրել IHCP-ին որպես իրենց PCP, նույնիսկ եթե IHCP-ն Blue Shield Promise-ի ցանցում չէ:

Եթե Ձեր PCP-ն, հիվանդանոցը կամ այլ մատակարար բարոյական արգելք ունեն Ձեզ ապահովագրված ծառայություն մատուցելու հարցում, ինչպես, օրինակ, ընտանիքի պլանավորման կամ արորտի դեպքում, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Բարոյական առարկությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այս գլխի հետագա էջերում կարդացեք «Բարոյական առարկության» բաժինը:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:

Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե Ձեր մատակարարը բարոյական առարկություն ունի Ձեզ ապահովագրված առողջապահական ծառայություններ տրամադրելու վերաբերյալ, նա Ձեզ կօգնի գտնել մեկ այլ մատակարար, ով Ձեզ կտա Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Blue Shield Promise-ը նաև կարող է օգնել Ձեզ մատակարար գտնել, որը կմատուցի տվյալ ծառայությունը:

## Ներգանցային մատակարարներ

Ձեր առողջապահական խնամքի կարիքների մեծ մասի համար կօգտվեք Blue Shield Promise-ի ներգանցային մատակարարներից: Ձեր կանխարգելիչ և սովորական խնամքը կստանաք ներգանցային մատակարարներից: Դուք նաև կօգտվեք Blue Shield Promise-ի ցանցի մասնագետներից, հիվանդանոցներից և այլ մատակարարներից:

Ներգանցային մատակարարների Մատակարարների հասցեագիրքը ստանալու համար զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Մատակարարների հասցեագիրքը կարող եք նաև գտնել առցանց՝ հետևյալ հղմամբ՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal): Պայմանագրային դեղերի ցանկի պատճենը ստանալու համար զանգահարեք Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) հեռախոսահամարով և սեղմեք 7 կամ 711: Կամ այցելեք Medi-Cal Rx-ի հետևյալ կայքը՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/> հղմամբ:

Դուք պետք է նախնական հաստատում (նախնական լիազորում) ստանաք Blue Shield Promise-ից՝ նախքան Blue Shield Promise-ի ցանցից դուրս մատակարարին այցելելը, ներառյալ Blue Shield Promise-ի սպասարկման տարածքը, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- Եթե շտապ օգնության կարիք ունեք, զանգահարեք 911 կամ գնացեք մոտակա շտապ օգնության կայան:
- Եթե Դուք գտնվում եք Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից դուրս և հրատապ խնամքի կարիք ունեք, դիմեք հրատապ խնամքի ցանկացած հաստատություն:
- Եթե ընտանիքի պլանավորման ծառայությունների կարիք ունեք, գնացեք Medi-Cal-ի ցանկացած մատակարարի մոտ՝ առանց նախավավերացման (նախօրոք լիազորում):



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Եթե հոգեկան առողջության ծառայությունների կարիք ունեք, դիմեք ցանցային մատակարարի կամ շրջանի հոգեկան առողջության ծրագրի մատակարարի, առանց նախավավերացման (նախօրոք լիազորում):

Եթե վերոնշյալ դեպքերից որևէ մեկը չի վերաբերում Ձեզ և չեք ստանում նախավավերացում (նախօրոք լիազորում) նախքան արտացանցային մատակարարից խնամք ստանալը, Դուք կարող եք պատասխանատու լինել արտացանցային մատակարարներից ստացած ցանկացած խնամքի համար վճարելու համար:

### **Արտացանցային մատակարարներ, ովքեր գտնվում են սպասարկման տարածքում**

Ցանցից դուրս գործող մատակարարները այն մատակարարներ են, որոնք չունեն Blue Shield Promise-ի հետ աշխատելու համաձայնագիր: Բացառությամբ շտապ օգնության, ընտանեկան խնամքի, զգայուն խնամքի և խնամքի, որը նախնական հաստատվել է Blue Shield Promise-ի կողմից, Դուք միգուցե ստիպված լինեք վճարել Ձեր սպասարկման տարածքում գտնվող և ցանցից դուրս գործող մատակարարներից ստացված խնամքի համար:

Եթե Ձեզ անհրաժեշտ են բժշկական տեսանկյունից անհրաժեշտ առողջապահական ծառայություններ, որոնք հասանելի չեն ցանցի ներսում, կարող եք դրանք անվճար ստանալ ցանցից դուրս գործող մատակարարից: Blue Shield Promise-ը կարող է հաստատել ցանցից դուրս գործող մատակարարի մոտ Ձեր ուղեգրումը, եթե Ձեզ անհրաժեշտ ծառայությունները հասանելի չեն ցանցի ներսում կամ մատուցողը գտնվում է Ձեր տնից շատ հեռու: Եթե մենք Ձեզ ցանցից դուրս գործող մատակարարի մոտ ուղեգիր տրամադրենք, ապա մենք կվճարենք Ձեր խնամքի համար:

Blue Shield Promise-ի սպասարկման տարածքում հրատապ խնամքի համար Դուք պետք է այցելեք Blue Shield Promise-ի հրատապ խնամքի ներցանցային մատակարարին: Ներցանցային մատակարարից հրատապ խնամք ստանալու համար նախավավերացման (նախօրոք լիազորում) կարիք չունեք: Դուք պետք է նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանաք՝ Blue Shield Promise -ի սպասարկման տարածքում գտնվող արտացանցային մատակարարից հրատապ խնամք ստանալու համար:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե Դուք հրատապ խնամք եք ստանում արտացանցային մատակարարից Blue Shield Promise-ի սպասարկման տարածքում, միգուցե ստիպված լինեք վճարել այդ խնամքի համար: Դուք կարող եք ավելին իմանալ շտապ օգնության, հրատապ խնամքի և զգայուն խնամքի ծառայությունների մասին այս գլխում:

**Նշում.** Եթե Դուք ամերիկյան հնդկացի եք, կարող եք խնամք ստանալ IHCP-ում մեր մատակարարների ցանցից դուրս՝ առանց ուղեգրի: Արտացանցային IHCP-ն կարող է նաև ուղեգրել ամերիկյան հնդկացի անդամներին ներցանցային մատակարարի մոտ՝ առանց նախապես ներցանցային PCP-ից ուղեգիր պահանջելու:

Եթե օգնության կարիք ունեք արտացանցային ծառայությունների հետ կապված, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

### Սպասարկման տարածքից դուրս

Եթե գտնվում եք Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից դուրս, և Ձեզ անհրաժեշտ է այնպիսի խնամք, որը շտապ օգնություն կամ հրատապ խնամք չէ, անմիջապես զանգահարեք Ձեր PCP-ին: Կամ զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Այն անդամները, որոնք ունեն ոչ շտապ կամ ոչ հրատապ խնամքի կարիք Blue Shield Promise-ի ծառայության տարածքից դուրս (Los Angeles վարչաշրջան) և (կամ) մատակարարների ցանցից դուրս, պետք է ունենան նախնական հաստատում՝ նախքան ծառայությունը ստանալը: Խնդրում ենք զանգահարել Ձեր PCP-ին կամ Blue Shield Promise-ի Հաճախորդների սպասարկման բաժին:

Շտապ օգնության համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենամոտ շտապ օգնության կայան: Blue Shield Promise-ը ապահովագրում է արտացանցային շտապ օգնությունը: Եթե ճանապարհորդեք Կանադա կամ Մեքսիկա և հիվանդանոցային բուժում պահանջող արտակարգ իրավիճակի խնամքի կարիք ունենաք, Blue Shield Promise-ը կապահովագրի Ձեր խնամքը: Եթե ճանապարհորդում եք արտասահման Կանադայի կամ Մեքսիկայի սահմաններից դուրս և շտապ օգնության, հրատապ խնամքի և կամ որևէ առողջապահական ծառայության կարիք ունեք, Blue Shield Promise չի ապահովագրի Ձեր խնամքը:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



Եթե Դուք վճարել եք շտապ օգնության ծառայությունների համար, որոնք պահանջում են հիվանդանոցային բուժում Կանադայում կամ Մեքսիկայում, կարող եք խնդրել Blue Shield Promise-ին, որ փոխհատուցի Ձեզ: Blue Shield Promise-ը կվերանայի Ձեր խնդրանքը: Հետ վճարելու մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար ծանոթացեք այս տեղեկագրքի 2-րդ գլխին՝ «Ձեր առողջապահական ծրագրի մասին» անվանմամբ:

Եթե Դուք գտնվում եք մեկ այլ նահանգում կամ գտնվում եք Միացյալ Նահանգների տարածքներից մեկում, ինչպիսիք են Ամերիկյան Մամոան, Գուամը, Հյուսիսային Մարիանյան կղզիները, Պուերտո Ռիկոն կամ Միացյալ Նահանգների Վիրջինյան կղզիները, Դուք ապահովագրված եք շտապ օգնության դեպքում: Ոչ բոլոր հիվանդանոցներն ու բժիշկներն են ընդունում Medicaid-ը: (Medi-Cal-ն այն է, ինչ Medicaid-ը կոչվում է միայն Կալիֆորնիայում): Եթե շտապ օգնության կարիք ունեք Կալիֆորնիայից դուրս, հնարավորինս շուտ տեղեկացրեք հիվանդանոցին կամ շտապ օգնության կայանի բժշկին, որ ունեք Medi-Cal և Blue Shield Promise-ի անդամ եք:

Խնդրեք հիվանդանոցին պատճենել Ձեր Blue Shield Promise-ի նույնականացման քարտը: Ասեք հիվանդանոցին և բժիշկներին, որ հաշիվ ներկայացնեն Blue Shield Promise-ին: Եթե Դուք հաշիվ եք ստանում մեկ այլ նահանգում ստացած ծառայությունների համար, անմիջապես զանգահարեք Blue Shield Promise-ին: Մենք կաշխատենք հիվանդանոցի և/կամ բժշկի հետ՝ կազմակերպելու, որ Blue Shield Promise-ը վճարի Ձեր խնամքի համար:

Եթե Դուք Կալիֆորնիայից դուրս եք և շտապ անհրաժեշտություն ունեք լրացնելու ամբուլատոր դեղատոմսային դեղերը, ապա խնդրեք դեղատանը զանգահարել Medi-Cal Rx 800-977-2273 հեռախոսահամարով:

**Նշում.** Ամերիկյան հնդկացիները կարող են ծառայություններ ստանալ արտացանցային IHCP-ներում:

Եթե հարցեր ունեք ցանցից կամ տարածքից դուրս խնամքի մասին, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Եթե գրասենյակը փակ է, իսկ Դուք օգնություն եք ցանկանում ստանալ Blue Shield Promise-ի ներկայացուցչի կողմից, զանգահարեք 1-800-609-4166 (TTY 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:

Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե Ձեզ հրատապ խնամք է հարկավոր Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից դուրս, դիմեք մոտակա հրատապ խնամքի հաստատություն: Եթե ճանապարհորդում եք ԱՄՆ-ից դուրս և Ձեզ հրատապ խնամք է հարկավոր, Blue Shield Promise-ը չի ապահովագրի Ձեր խնամքը: Հրատապ խնամքի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք «Հրատապ խնամքը» այս գլխի հետագա բաժիններում:

### Լիազորված մոդելով կառավարվող խնամքի ծրագրեր

Blue Shield Promise-ը գործում է մեծ թվով բժիշկների, մասնագետների, հիվանդանոցների և առողջական խնամքի այլ մատակարարների հետ: Մի շարք այսպիսի մատակարարներ գործում են ինչ-որ ցանցի ներսում, որը երբեմն կոչվում է «բժշկական խումբ» կամ «անկախ կիրառման ընկերակցություն» (independent practice association, IPA): Այս մատակարարները կարող են նաև ուղղակի պայմանագիր կնքած լինել Blue Shield Promise-ի հետ: Դուք իրավունք ունեք ընտրել առաջնային խնամքի ցանկացած բժշկի (Primary Care Physician, PCP), որն անմիջական պայմանագիր ունի Blue Shield Promise-ի կամ մասնակից բժշկական խմբի կամ IPA-ի հետ:

Ձեր PCP-ն Ձեզ կողեգրի այն մասնագետների և ծառայությունների համար, որոնք կապված են իր բժշկական խմբի, IPA-ի կամ Blue Shield Promise-ի հետ: Եթե արդեն հաճախում եք մասնագետի մոտ, խոսեք Ձեր PCP-ի հետ կամ զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Հաճախորդների սպասարկման բաժինը կօգնի որ այցելել այդ մատակարարին, եթե Դուք իրավասու եք խնամքի շարունակման համար: Հավելյալ տեղեկության համար անցեք այս տեղեկագրի խնամքի շարունակություն բաժինը:

### Ինչպես է աշխատում կառավարվող խնամքը

Blue Shield Promise-ը կառավարվող խնամքի առողջապահական ծրագիր է: Blue Shield Promise-ը խնամք է տրամադրում այն անդամներին, որոնք ապրում են Los Angeles վարչաշրջանում: Կառավարվող խնամքի դեպքում Ձեր PCP-ն, մասնագետները, կլինիկան, հիվանդանոցը և այլ մատակարարները միասին աշխատում են Ձեր մասին հոգ տանելու համար:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Blue Shield Promise-ը պայմանագիր է կնքում բժշկական խմբերի հետ՝ Blue Shield Promise-ի անդամներին խնամք տրամադրելու համար: Բժշկական խումբը կազմված է բժիշկներից, որոնք PCP-ներ և մասնագետներ են: Բժշկական խումբն աշխատում է այլ մատակարարների հետ, ինչպիսիք են լաբորատորիաները և տևական օգտագործման բժշկական սարքերի մատակարարները: Բժշկական խումբը կապված է նաև հիվանդանոցի հետ: Ստուգեք Ձեր Blue Shield Promise-ի նույնականացման քարտը Ձեր PCP-ի, բժշկական խմբի և հիվանդանոցի անունների համար:

Երբ միանում եք Blue Shield Promise-ին, Դուք ընտրում եք կամ Ձեզ նշանակում են PCP: Ձեր PCP-ն բժշկական խմբի մի մասն է: Ձեր PCP-ն և բժշկական խումբը ղեկավարում են Ձեր բոլոր բժշկական կարիքների խնամքը: Ձեր PCP-ն կարող է Ձեզ ուղղորդել մասնագետների մոտ կամ պատվիրել լաբորատոր թեստեր և ռենտգեն հետազոտություն: Եթե Ձեզ անհրաժեշտ են ծառայություններ, որոնք պահանջում են նախավավերացում (նախնական լիազորություն), Blue Shield Promise-ը կամ Ձեր բժշկական խումբը կվերանայեն նախավավերացումը (նախօրոք լիազորում) և կորոշեն՝ արդյոք հաստատել ծառայությունը:

Շատ դեպքերում Դուք պետք է դիմեք մասնագետների և այլ առողջապահական մասնագետների, ովքեր աշխատում են նույն բժշկական խմբի հետ, ինչպես Ձեր PCP-ն: Բացառությամբ արտակարգ դեպքերի, Դուք պետք է նաև հիվանդանոցային օգնություն ստանաք Ձեր բժշկական խմբի հետ կապված հիվանդանոցից:

Երբեմն Ձեզ կարող է անհրաժեշտ լինել այնպիսի ծառայություն, որը հասանելի չէ բժշկական խմբի մատակարարից: Այդ դեպքում Ձեր PCP-ն Ձեզ կուղարկի մատակարարի մոտ, որը գտնվում է մեկ այլ բժշկական խմբում կամ գտնվում է ցանցից դուրս: Ձեր PCP-ն կպահանջի նախավավերացում (նախօրոք լիազորում), որպեսզի Դուք այցելեք այս մատակարարին:

Շատ դեպքերում, Դուք պետք է նախօրոք լիազորում ունենաք Ձեր PCP-ից, բժշկական խմբից կամ Blue Shield Promise-ից, նախքան կարողանաք այցելեք ցանցից դուրս մատակարարի կամ այնպիսի մատակարարի, որը Ձեր բժշկական խմբի անդամ չէ: Ձեզ անհրաժեշտ չէ նախավավերացում (նախօրոք լիազորում) արտակարգ իրավիճակների ծառայությունների, ընտանիքի պլանավորման ծառայությունների կամ հոգեկան առողջության ներցանցային ծառայությունների համար:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Բժիշկներ

Դուք բժիշկ կամ այլ մատակարար կընտրեք Blue Shield Promise-ի Մատակարարների հասցեագրքից որպես Ձեր PCP: Ձեր ընտրած PCP-ն պետք է լինի ներցանցային մատակարար: Blue Shield Promise-ի Մատակարարների հասցեագրքի օրինակը ստանալու համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Կամ այն գտեք այն առցանց՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե ընտրում եք նոր PCP, Դուք նույնպես պետք է զանգահարեք PCP-ին՝ համոզվելու, որ նա ընդունում է նոր հիվանդներ:

Եթե այցելում էիք մի բժշկի Blue Shield Promise-ի անդամ դառնալուց առաջ, և այդ բժիշկը Blue Shield Promise-ի ցանցի մաս չէ կազմում, թերևս կարողանաք շարունակել այցելել այդ բժշկին սահմանափակ ժամանակով: Սա կոչվում է խնամքի շարունակում: Խնամքի շարունակման վերաբերյալ ավելին կարող եք կարդալ այս տեղեկագրքում: Ավելին իմանալու համար զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Եթե մասնագետի կարիք ունենաք, Ձեր PCP-ն Ձեզ կուղեգրի Blue Shield Promise-ի ցանցում գտնվող մասնագետի մոտ: Որոշ մասնագետներ ուղեգիր չեն պահանջում: Ուղեգրերի մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար կարդացեք «Ուղեգրեր» այս գլխում հետագա բաժիններում:

Հիշեք, որ եթե PCP չընտրեք, Blue Shield Promise-ը կընտրի նրանք Ձեզ համար, եթե բացի Medi-Cal-ից, չունեք այլ համապարփակ առողջապահական ապահովագրություն: Դուք լավագույնս գիտեք Ձեր առողջական խնամքի կարիքները, ուստի Ձեր ընտրությունը լավագույնը կլինի: Եթե ն՝ Medicare-ի, ն՝ Medi-Cal-ի անդամ եք, կամ եթե ունեք այլ առողջապահական ապահովագրություն, կարիք չկա, որ PCP-ին ընտրեք Blue Shield Promise-ից:

Եթե ցանկանում եք փոխել Ձեր PCP-ին, պետք է PCP ընտրեք Blue Shield Promise-ի Մատակարարների հասցեագրքից: Ստուգեք՝ վստահ լինելու, որ PCP-ը ընդունում է նոր հիվանդների: Ձեր PCP-ին փոխելու համար զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Հիվանդանոցներ

Արտակարգ իրավիճակի դեպքում զանգահարեք **911** կամ դիմեք մոտակա շտապ օգնության կայան:

Եթե չկա արտակարգ իրավիճակ և կարիքը ունեք հիվանդանոցային խնամքի, Ձեր PCP-ն կորոշի, թե որ հիվանդանոց պետք է գնաք: Դուք պետք է գնաք այն հիվանդանոցը, որն օգտագործում է Ձեր PCP-ն և գտնվում է Blue Shield Promise-ի մատակարարների ցանցում: Մատակարարների հասցեագրքում թվարկված են Blue Shield Promise-ի ցանցի հիվանդանոցները:

## Կանանց առողջության մասնագետներ

Կարող եք կանանց առողջության մասնագետի մոտ դիմել Blue Shield Promise-ի ցանցի ներսում՝ ապահովագրված խնամքի համար, որն անհրաժեշտ է կանանց կանխարգելիչ և ընթացիկ խնամքի ծառայություններ մատուցելու նպատակով: Այս ծառայություններն ստանալու համար Ձեր PCP-ից ուղեգրի կամ լիազորության կարիքը չկա: Կանանց առողջության մասնագետ գտնելու հարցում օգնություն ստանալու համար կարող եք զանգահարել 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Կարող եք նաև զանգահարել 24/7 Blue Shield Promise-ի Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ՝ 1-800-609-4166 (TTY 711) հեռախոսահամարով:

Ընտանիքի պլանավորման ծառայություններ մատուցելու համար պարտադիր չէ, որ Ձեր մատակարարը լինի Blue Shield Promise-ի մատակարարների ցանցում: Դուք կարող եք ընտրել Medi-Cal-ի ցանկացած մատակարար և այցելել նրան առանց ուղեգրի կամ նախնական հաստատման (նախօրոք լիազորման): Blue Shield Promise-ի մատակարարների ցանցից դուրս Medi-Cal մատակարար գտնելու հարցում օգնություն ստանալու համար զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

## Մատակարարների հասցեագիրք

Blue Shield Promise-ի Մատակարարների հասցեագիրքը Blue Shield Promise-ի ցանցին մասնակցող մատակարարների ցանկն է: Ցանցը մատակարարների խումբն է, որն աշխատում է Blue Shield Promise-ի հետ:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Blue Shield Promise-ի Մատակարարների հասցեագիրքը ներկայացնում է հիվանդանոցների, PCP-ների, մասնագետների, առաջնային խնամք տրամադրող բուժքույրերի, բուժքույր-մանկաբարձների, օգնական բժիշկների, ընտանեկան պլանավորման մատակարարների, վարքագծային առողջության թերապիայի մատակարարների, FQHC-ների, ամբուլատոր հոգեկան առողջության մատակարարների, կառավարվող երկարաժամկետ ծառայությունների և աջակցությունների (managed long-term services and supports, MLTSS), Անկախ ծննդաբերության կենտրոնների (Freestanding Birth Centers, FBC), IHCP-ների, RHC-ների և օժանդակ մատակարարների, ներառյալ, բայց չսահմանափակվելով ասեղնաբույժներով, աուդիոլոգներով, ոսկրահարդարման մասնագետներով, աշխատանքային թերապստներով, ուռուցքաբաններով, ֆիզիկական թերապստներով, ոտնաբույժներով, գրանցված սննդաբաններով և խոսքի թերապստներով:

Մատակարարների հասցեագիրքը պարունակում է Blue Shield Promise-ի ներգանցային մատակարարների անուններ, մասնագիտություններ, հասցեներ, հեռախոսահամարներ, աշխատանքային ժամեր և խոսված լեզուներ: Այն նշում է, թե արդյոք մատակարարն ընդունում է նոր հիվանդների: Այն նաև նշում է շենքի ֆիզիկական մատչելիությունը, ինչպես՝ կայանատեղ, թեքահարթակներ, կառչածողերով աստիճաններ և լայն բացվող դռներով ու կառչածողերով զուգարաններ:

Բժշկի կրթության, մասնագիտական որակավորումների, օրդինատուրան ավարտելու, վերապատրաստման և բժշկական հավաստագրման մասին ավելին իմանալու համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Մատակարարների առցանց հասցեագիրքը կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե Ձեզ անհրաժեշտ է Մատակարարների հասցեագիրքը տպագիր տարբերակով, զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY կամ 711) հեռախոսահամարով:

Medi-Cal Rx-ի Դեղատների հասցեագրքում կարող եք գտնել Medi-Cal Rx-ի հետ աշխատող դեղատների ցանկը հետևյալ հղմամբ՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:

Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Դուք կարող եք նաև գտնել Ձեր մոտակայքում գտնվող դեղատուն՝ զանգահարելով Medi-Cal Rx 1- 800-977-2273 (TTY 1-800-977-2273) և սեղմելով 7 կամ 711:

**Ժամանակին տրամադրված խնամքի մատչելիություն**

Ձեր ներքանցային մատակարարը պետք է ժամանակին խնամքի մատչելիություն տրամադրի՝ ելնելով Ձեր առողջապահական կարիքներից: Նվազագույնը, նրանք պետք է Ձեզ այց առաջարկեն ստորև բերված աղյուսակում նշված ժամկետների շրջանակում:

Ժամադրության տեսակը	Դուք պետք է ժամադրություն ստանաք հետևյալ շրջանակներում.
Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք չեն պահանջում նախավավերացում (նախօրոք լիազորում)	48 ժամ
Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք պահանջում են նախավավերացում (նախօրոք լիազորում)	96 ժամ
Ոչ-հրատապ (սովորական) առաջնային խնամքի ժամադրություններ	10 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) մասնագետների խնամքի ժամադրություններ	15 աշխատանքային օր
<b>Հոգեկան առողջության խնամք</b>	
Խնամք՝ կյանքին չսպառնացող արտակարգ իրավիճակների համար	6 ժամ
Հրատապ խնամք	48 ժամ



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Ժամադրության տեսակը	Դուք պետք է ժամադրություն ստանաք հետևյալ շրջանակներում.
Ոչ հրատապ (ընթացիկ) նախնական խնամքի այցեր հոգեկան առողջության մատակարարի (ոչ բժիշկ և բժիշկ) մոտ	10 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) հոգեկան առողջության մատակարարի (ոչ-բժիշկ) հետբուժական խնամքի ժամադրություններ	Վերջին ժամադրությունից 10 աշխատանքային օրվա ընթացքում
Ոչ հրատապ (ընթացիկ) հետբուժական խնամքի այցեր հոգեկան առողջության մատակարարի (բժիշկ) մոտ	Վերջին ժամադրությունից 15 աշխատանքային օրվա ընթացքում
Ոչ-հրատապ (սովորական) ժամադրություններ՝ օժանդակ (աջակցող) ծառայությունների համար՝ վնասվածքի, հիվանդության կամ այլ առողջական խնդրի ախտորոշման կամ բուժման նպատակով	15 աշխատանքային օր

Սպասման ժամանակի այլ չափանիշներ	Դուք պետք է կարողանաք կապ հաստատել հետևյալ շրջանակներում.
Հաճախորդների սպասարկման բաժնի գծում սպասման ժամանակ՝ սովորական աշխատանքային ժամերի ընթացքում	10 րոպե
Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծի սպասման ժամերը	30 րոպե (միացված բուժքրոջը)

Երբեմն ժամադրության համար ավելի երկար սպասելը խնդիր չէ: Ձեր մատակարարը կարող է երկարացնել Ձեր սպասման ժամանակը, եթե դա չի վնասում Ձեր առողջությանը: Ձեր գրառումներում պետք է նշվի, որ ավելի երկար սպասման ժամանակը վնաս չի պատճառի Ձեր առողջությանը: Դուք կարող եք սպասել ավելի



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):



ուշ գրանցված այցի կամ էլ զանգահարել Blue Shield Promise՝ Ձեր ընտրությամբ մեկ այլ մատակարարի մոտ գնալու համար: Ձեր մատակարարը և Blue Shield Promise-ը կհարգեն Ձեր ցանկությունը:

Ձեր բժիշկը կարող է խորհուրդ տալ հատուկ ժամանակացույց կանխարգելիչ ծառայությունների, շարունակվող առողջական խնդիրների դեպքում հետբուժակկան խնամքի կամ մասնագետների մոտ մշտական ուղեգրերի համար՝ կախված Ձեր կարիքներից:

Տեղեկացրեք մեզ, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ են բանավոր թարգմանչական ծառայություններ, ներառյալ ժեստերի լեզուն, երբ զանգահարեք Blue Shield Promise կամ երբ ստանաք ապահովագրված ծառայություններ: Բանավոր թարգմանչական ծառայությունները մատուցվում են անվճար: Մենք ընդհանրապես խորհուրդ չենք տալիս օգտագործել անչափահասներին կամ ընտանիքի անդամներին որպես թարգմանիչներ: Մեր կողմից առաջարկվող բանավոր թարգմանչական ծառայությունների մասին ավելին իմանալու համար զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Եթե Ձեզ անհրաժեշտ են բանավոր թարգմանչական ծառայություններ, ներառյալ ժեստերի լեզուն, Medi-Cal Rx դեղատանը, զանգահարեք Medi-Cal Rx-ի Հաճախորդների սպասարկման բաժնի 1-800-977-2273 հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտվողները կարող են զանգահարել 711, երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 17:00:

### **Ուղևորման ժամանակահատված կամ հեռավորություն մինչև խնամքի վայր**

Blue Shield Promise-ը պարտավոր է հետևել ուղևորման ժամանակի կամ խնամքից հեռավորության չափանիշներին Ձեր խնամքի համար: Այդ չափանիշներն օգնում են համոզվել, որ Դուք կարող եք խնամք ստանալ՝ առանց Ձեր բնակության վայրից շատ հեռու ճանապարհորդելու: Ուղևորման ժամանակի կամ հեռավորության չափանիշները կախված են Ձեր բնակած վարչաշրջանից:

Եթե Blue Shield Promise-ը չի կարող խնամք մատուցել Ձեզ ուղևորման ժամանակի կամ հեռավորության չափանիշների շրջանակում, DHCS-ը կարող է թույլատրել այլընտրանքային մատչելիության չափանիշ կոչվող մեկ այլ հասանելիության չափանիշ: Ձեր բնակության վայրում Blue Shield Promise-ի ժամանակի կամ



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժնի 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

հեռավորության չափանիշներին ծանոթանալու համար այցելեք [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal): Կամ զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների սպասարկման բաժնի 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Հեռու է համարվում, եթե չեք կարող այդ մատակարարի մոտ գնալ Blue Shield Promise-ի՝ Ձեր վարչաշրջանի ուղևորման ժամանակի կամ հեռավորության չափանիշների շրջանակում՝ անկախ մատչելիության որևէ այլընտրանքային չափանիշից, որը Blue Shield Promise-ը կարող է օգտագործել Ձեր փոստային դասիչի համար:

Եթե ցանկանում եք խնամք ստանալ մի մատակարարից, որը գտնվում է Ձեր բնակության վայրից հեռու, զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժնի 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Նրանք կարող են օգնել Ձեզ գտնել մոտակայքում գտնվող մատակարարին: Եթե Blue Shield Promise-ը չի կարողանում Ձեզ համար ավելի մոտ մատակարարի մոտ խնամք գտնել, կարող եք Blue Shield Promise-ից խնդրել, որ Ձեզ համար փոխադրում կազմակերպի, որպեսզի գնաք մատակարարի մոտ, նույնիսկ եթե այդ մատակարարը գտնվում է Ձեր բնակության վայրից հեռու:

Եթե դեղատների մատակարարների հետ օգնության կարիք ունեք, զանգահարեք Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) հեռախոսահամարով և սեղմեք 7 կամ 711:

---

## Ժամադրություններ

Երբ առողջական խնամքի կարիք ունեք՝

- Զանգահարեք Ձեր PCP-ին
- Զանգահարելիս, պատրաստ ունեցեք Ձեր Blue Shield Promise-ի նույնականացման համարը
- Ընդունարանը փակ լինելու դեպքում, հաղորդագրություն թողեք Ձեր անունով և հեռախոսահամարով
- Ձեր BIC քարտը և Blue Shield Promise-ի ID քարտը վերցրեք Ձեզ հետ այցի գնալիս:
- Անհրաժեշտության դեպքում, Ձեր ժամադրության համար փոխադրում խնդրեք



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժնի 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Ինդիք անհրաժեշտ լեզվական օգնություն կամ բանավոր թարգմանչական ծառայություններ՝ նախքան Ձեր ժամադրությունը, որպեսզի ծառայությունները ստանաք Ձեր այցելության պահին
- Ժամանակին եկեք Ձեր ժամադրությանը, ժամանելով մի քանի րոպե շուտ՝ մուտք գործելու, ձևաթղթերը լրացնելու և Ձեր PCP-ի ցանկացած հարցի պատասխանելու համար
- Անմիջապես զանգահարեք, եթե չեք կարող Ձեր ժամադրությանը գալ կամ ուշանալու եք
- Պատրաստ ունեցեք Ձեր հարցերն ու դեղերին վերաբերող տեղեկությունները

Եթե արտակարգ իրավիճակ ունեք, զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության կայան: Եթե Ձեզ օգնություն է պետք որոշելու համար, թե որքան շտապ ունեք խնամքի կարիք, իսկ Ձեր PCP-ն հասանելի չէ, որպեսզի խոսի Ձեզ հետ, զանգահարեք Blue Shield Promise-ի Բուժքույրական խորհրդատվական գիծ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը՝ 1-800-609-4166 (TTY 711) հեռախոսահամարով:

## Ժամադրության վայր հասնելը

Եթե Դուք չեք կարողանում հասնել և վերադառնալ առողջապահական խնամքի ծառայություններից և ժամադրություններից ապահովագրված ծառայությունների համար, Blue Shield Promise-ը կարող է օգնել Ձեզ կազմակերպել փոխադրումը: Կախված Ձեր իրավիճակից, Դուք կարող եք որակավորվել բժշկական կամ ոչ բժշկական փոխադրման համար: Այս փոխադրման ծառայությունները արտակարգ իրավիճակների համար չեն և կարող են տրամադրվել անվճար:

Եթե Դուք արտակարգ իրավիճակում եք, զանգահարեք **911**: Փոխադրումը հասանելի է ծառայությունների և ժամադրությունների համար, որոնք կապված չեն արտակարգ իրավիճակի ծառայությունների հետ:

Հավելյալ տեղեկություններ ստանալու համար ծանոթացեք «Փոխադրման նպաստներ այն իրավիճակների համար, որոնք արտակարգ չեն» բաժնին, որը շարադրված է ավելի ուշ այս գլխում:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Չեղարկում և հետաձգում

Եթե չեք կարող ներկայանալ Ձեր ժամադրությանը, անմիջապես զանգահարեք Ձեր մատակարարի ընդունարան: Մատակարարներից շատերը պահանջում են Ձեզ զանգահարել այցից 24 ժամ (1 աշխատանքային օր) առաջ, եթե ցանկանում եք չեղարկել այն: Եթե շարունակաբար բաց թողնեք մի քանի այց, Ձեր մատակարարը կարող է դադարեցնել Ձեր խնամքի մատուցումը, և Դուք ստիպված կլինեք գտնել նոր մատակարար:

## Վճարում

Դուք **չպետք է** վճարեք ապահովագրված ծառայությունների համար, եթե Դուք երկարատև խնամքի ծախսաբաժին չունեք: Հավելյալ տեղեկություններ ստանալու համար կարդացեք «Երկարատև խնամքի կարիքով և ծախսաբաժին ունեցող անդամների համար» գլուխ 2-ում: Շատ դեպքերում, մատակարարից հաշիվ չեք ստանա: Առողջապահական խնամքի ծառայություն կամ դեղատոմս ստանալիս պետք է ցույց տաք Ձեր Blue Shield Promise-ի նույնականացման (ID) քարտը և Ձեր Medi-Cal-ի BIC քարտը, որպեսզի Ձեր մատակարարն իմանա, թե ում պետք է հաշիվ ներկայացնի: Կարող եք մատակարարից Նպաստների բացատրություն (Explanation of Benefits, EOB) կամ հաշվեցույց ստանալ: EOB-ները և հաշվեցույցները հաշիվներ չեն:

Եթե ստացել եք հաշիվը, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Եթե դեղատոմսերի համար հաշիվ եք ստանում, զանգահարեք Medi-Cal Rx 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) և սեղմեք 7 կամ 711: Կամ այցելեք Medi-Cal Rx-ի կայքը՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>:

Blue Shield Promise-ին հայտնեք Ձեզնից գանձվող գումարի չափը, ծառայության ամսաթիվը և հաշիվը ներկայացնելու պատճառը: Blue Shield Promise-ը կօգնի Ձեզ պարզել, թե արդյոք հաշիվն ապահովագրված ծառայության համար էր, թե ոչ: Դուք պարտավոր չեք մատակարարներին վճարել որևէ գումար, որը կազմում է Blue Shield Promise-ի պարտավորությունը որևէ ապահովագրված ծառայության



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal/](https://blueshieldca.com/promise/medi-cal/):

համար: Եթե Դուք խնամք եք ստանում ցանցից դուրս գործող մատակարարից և չեք ստացել նախնական հաստատում (նախօրոք լիազորում) Blue Shield Promise-ից, Դուք միգուցե ստիպված լինեք վճարել Ձեր ստացած խնամքի համար:

Դուք պետք է նախավավերացում (նախօրոք լիազորում) ստանաք Blue Shield Promise-ից՝ նախքան Blue Shield Promise-ի արտացանցային մատակարարին այցելելը, բացառությամբ այն դեպքերի, երբ.

- Շտապ օգնության կարիք ունեք, որի դեպքում պետք է զանգահարեք 911 կամ գնաք մոտակա հիվանդանոց:
- Ձեզ անհրաժեշտ են ընտանիքի պլանավորման ծառայություններ կամ ծառայություններ՝ կապված սեռական ճանապարհով փոխանցվող վարակների թեստավորման հետ, որոնց դեպքում կարող եք դիմել Medi-Cal-ի ցանկացած մատակարարի՝ առանց նախավավերացման (նախօրոք լիազորում)
- Ձեզ անհրաժեշտ են հոգեկան առողջության ծառայություններ, որոնց դեպքում կարող եք այցելել ներցանցային մատակարարի կամ վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի մատակարարի՝ առանց նախավավերացման (նախօրոք լիազորում)

Եթե Ձեզ անհրաժեշտ է բժշկական առումով անհրաժեշտ խնամք ստանալ արտացանցային մատակարարից, քանի որ այն հասանելի չէ Blue Shield Promise-ի ցանցում, Դուք ստիպված չեք լինի վճարել, քանի դեռ խնամքը Medi-Cal-ի ապահովագրված ծառայություն է, և Դուք դրա համար ստացել եք նախավավերացում (նախօրոք լիազորում) Blue Shield Promise-ից: Շտապ օգնության, հրատապ խնամքի և զգայուն խնամքի ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար անցեք այս գլխի այդ վերնագրերին:

Եթե հաշիվ ստանաք կամ Ձեզ խնդրել վճարել համավճար, որը կարծում եք, որ չպետք է վճարեք, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Եթե վճարեք հաշիվը, կարող եք հայց ներկայացնել Blue Shield Promise-ին: Պետք է Blue Shield Promise-ին գրավոր հայտնեք Ձեր կողմից վճարված պարագայի կամ ծառայության մասին: Blue Shield Promise-ը կընթերցի Ձեր հայցը և կորոշի, թե արդյոք կարող եք հետ ստանալ Ձեր գումարը:

Հարցերի համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե Դուք ծառայություններ եք ստանում Վետերանների գործերի համակարգում կամ չապահովագրված կամ չլիազորված ծառայություններ եք ստացել Կալիֆորնիայից դուրս, միգուցե Դուք պարտավոր լինեք վճարել:

Blue Shield Promise-ը Ձեզ հետ չի վճարի, եթե՝

- Ծառայությունները չեն ապահովագրվում Medi-Cal-ի կողմից, ինչպես օրինակ կոսմետիկ ծառայությունները
- Դուք ունեք Medi-Cal-ի չբավարարված ծախսաբաժին
- Դուք գնացել եք բժշկի մոտ, ով Medi-Cal չի ընդունում և ստորագրել եք մի ձևաթուղթ, որտեղ նշվել է, որ այնուամենայնիվ ցանկանում եք հետազոտվել, և որ Դուք ինքներդ կվճարեք ծառայությունների համար
- Դուք խնդրում եք հետ վճարել Medicare Part D-ի համավճարները այն դեղատոմսերի համար, որոնք ապահովագրված են Ձեր Medicare Part D ծրագրով

## Ուղեգրեր

Եթե Ձեր խնամքի համար մասնագետի կարիք ունեք, Ձեր PCP-ն կամ մեկ այլ մասնագետ Ձեզ ուղեգիր կտա այդ մասնագետի մոտ: Մասնագետը մատակարար է, որը մասնագիտացած է մեկ տեսակի առողջապահական ծառայության մեջ: Ձեզ ուղղորդող բժիշկը Ձեզ հետ կաշխատի մասնագետի ընտրության հարցում: Օգնելու համոզվել, որ Դուք կարող եք ժամանակին այցելել մատակարարին, DHCS-ն անդամների համար ժամադրություններ ստանալու ժամկետներ է սահմանում: Այս ժամկետները նշված են այս գլխում ավելի վաղ շարադրված «Ճիշտ ժամանակին մատչելի խնամք» բաժնում: Ձեր PCP-ի գրասենյակը կարող է օգնել, որ ժամադրություն նշանակեք մասնագետին այցելելու համար:

Ուղեգրի կարիք ունեցող այլ ծառայություններն են՝ ընդունարանում իրականացվող բուժակարգեր, ռենտգեն հետազոտություններ, լաբորատոր անալիզներ և մասնագետների ծառայություններ:

Ձեր PCP-ն թերևս Ձեզ ձևաթուղթ տա մասնագետի մոտ տանելու համար: Մասնագետը կլրացնի ձևաթուղթը և հետ կուղարկի Ձեր PCP-ին: Մասնագետը Ձեր կբուժի այնքան ժամանակ, որքան համարի, որ բուժման կարիք ունեք:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե Դուք ունեք առողջապահական խնդիրներ, որոնք պահանջում են հատուկ բժշկական խնամք երկար ժամանակով, Ձեզ կարող է անհրաժեշտ լինել մշտական ուղեգիր: Մշտական ուղեգիր ունենալը նշանակում է, որ կարող եք նույն մասնագետին այցելել մի քանի անգամ՝ առանց ամեն անգամ նոր ուղեգիր ստանալու:

Եթե դժվարանում եք մշտական ուղեգիր ստանալ կամ ցանկանում եք ստանալ ուղեգրերի վերաբերյալ Blue Shield Promise-ի քաղաքականության օրինակը, զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Ձեզ ուղեգիր անհրաժեշտ չէ հետևյալի համար՝

- PCP-ի այցերը
- Մանկաբարձության/գինեկոլոգիայի (OB/GYN) այցեր
- Հրատապ և արտակարգ իրավիճակի խնամքի այցեր
- Չափահասների զգայուն ծառայություններ, օրինակ՝ սեռական ոտնձգության խնամքը
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ (հավելյալ տեղեկություններ ստանալու համար զանգահարեք ընտանիքի պլանավորման տեղեկատվության և ուղղորդման ծառայության գրասենյակ 1-800-942-1054 հեռախոսահամարով)
- ՄԻԱՎ-ի ստուգում և խորհրդատվություն (12 տարեկան կամ ավելի տարեց դեռահասներ)
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակիչ հիվանդությունների ծառայություններ (12 տարեկան կամ ավելի մեծ դեռահասներ)
- Հոգեկան առողջության սկզբնական գնահատում
- Հոգեկան առողջության շարունակական թերապիա

Անչափահասները նույնպես կարող են ստանալ որոշակի հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ, զգայուն ծառայություններ և թմրամիջոցների օգտագործման խանգարմանը վերաբերող ծառայություններ՝ առանց ծնողի կամ խնամակալի համաձայնության: Լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթացեք «Դեռահասների համաձայնությամբ ծառայություններ» բաժնին ավելի ուշ այս գլխում և «Թմրանյութերի օգտագործման խանգարման բուժմանը միտված ծառայություններ» բաժնին այս տեղեկագրքի 4-րդ գլխում:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Քաղցկեղի դեմ պայքարի մասին Կալիֆորնիայի օրենքին համապատասխանող ուղեգրեր

Բարդ քաղցկեղների արդյունավետ բուժումը կախված է բազմաթիվ գործոններից: Դրանք ներառում են ճիշտ ախտորոշումը և քաղցկեղը բուժող մասնագետների կողմից ժամանակին բուժում ստանալը: Եթե Ձեր մոտ ախտորոշվել է բարդ քաղցկեղ, ապաՔաղցկեղի դեմ պայքարի մասին Կալիֆորնիայի նոր օրենքը թույլ է տալիս Ձեզ ուղեգիր խնդրել Ձեր բժշկից՝ քաղցկեղի բուժում ստանալու համար Քաղցկեղի ազգային ինստիտուտի (National Cancer Institute, NCI) կողմից նշանակված քաղցկեղի ներգանցային կենտրոնում, NCI-ի Համայնքային ուռուցքաբանության հետազոտման ծրագրին (NCI Community Oncology Research Program, NCORP) կից կենտրոնում, կամ քաղցկեղի որակավորված ակադեմիական կենտրոնում:

Եթե Blue Shield Promise-ը չունի ներգանցային NCI-ի կողմից նշանակված քաղցկեղի կենտրոն, ապաBlue Shield Promise-ը թույլ կտա Ձեզ ուղեգիր խնդրել՝ Կալիֆորնիայի այս արտացանցային կենտրոններից մեկում քաղցկեղի բուժում ստանալու համար, եթե ցանցից դուրս գործող կենտրոնը և Blue Shield Promise-ը համաձայնում են վճարման հարցում, քանի դեռ չեք ընտրել քաղցկեղի բուժման ծառայությունը մատուցող մեկ այլ մատակարարի:

Եթե Ձեր մոտ քաղցկեղ է ախտորոշվել, կապվեք Blue Shield Promise-ի հետ՝ պարզելու, թե արդյոք Դուք իրավասու եք այս քաղցկեղի կենտրոններից որևէ մեկում ծառայություններ ստանալու համար:

**Պատրաստ եք թողնել ծխելը: Անգլերենով ծառայությունների մասին իմանալու համար զանգահարեք 1-800-300-8086  
 հեռախոսահամարով: Իսպաներենի համար զանգահարեք 1-800-600-8191:  
 Չավելյալ տեղեկություններ ստանալու համար այցելեք <https://kickitca.org/>:**



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
 Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



## Նախավավերացում (նախօրոք լիազորում)

Խնամքի մի շարք տեսակների դեպքում Ձեր PCP-ն կամ մատակարարը պետք է Blue Shield Promise-ից թույլտվություն խնդրեն՝ նախքան Դուք կստանաք խնամքը: Սա կոչվում է նախավավերացում կամ նախօրոք լիազորում: Սա նշանակում է, որ Blue Shield Promise-ը պետք է վստահ լինի, որ խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները տրամաբանական և անհրաժեշտ են Ձեր կյանքը պաշտպանելու համար, պաշտպանում են Ձեզ՝ լրջորեն հիվանդանալուց կամ հաշմանդամ դառնալուց, կամ մեղմացնում են սաստիկ ցավը՝ ախտորոշված ախտից, հիվանդությունից կամ վնասվածքից: 21 տարեկանից ցածր անդամների համար Medi-Cal ծառայությունները ներառում են խնամք, որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ առողջական խնդիրը շտկելու կամ դրան օգնելու համար:

Հետևյալ ծառայությունները **միշտ** նախնական հաստատում (նախնական լիազորում) են պահանջում, նույնիսկ եթե դրանք ստանում եք Blue Shield Promise-ի ներգանցային մատակարարից:

- Հիվանդանոցային բուժում, եթե արտակարգ իրավիճակ չէ
- Ծառայություններ Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից դուրս, եթե ոչ արտակարգ կամ ոչ հրատապ խնամք են
- Ամբուլատոր վիրահատություն
- Երկարատև խնամք կամ հմուտ բուժքույրական ծառայություններ ծերանոցում (ներառյալ չափահասների և մանկական շտապ խնամքի հաստատությունները, որոնք պայմանագիր են կնքել Առողջապահական խնամքի ծառայությունների բաժնի Շտապ խնամքի ենթաբաժնի հետ) կամ միջանկյալ խնամքի հաստատություններում (ներառյալ Միջանկյալ խնամքի հաստատությունը՝ զարգացման արատ ունեցողների համար (Intermediate Care Facility for the Developmentally Disabled, ICF/DD), ICF/DD-Habilitary (ICF/DD-H) և ICF/DD-Nursing (ICF/DD-N))
- Մասնագիտացված բուժում, պատկերում, թեստավորում և բուժգործողություններ
- Բժշկական փոխադրման ծառայություններ, երբ դա արտակարգ իրավիճակ չէ:
- Հիմնական օրգանի փոխպատվաստում



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Շտապ օգնության մեքենայի ծառայությունները չեն պահանջում նախավավերացում (նախօրոք լիազորում):

Blue Shield Promise-ը ունի 5 աշխատանքային օր այն պահից, երբ Blue Shield Promise-ը կստանա հիմնավորված անհրաժեշտ տեղեկությունները՝ նախնական հաստատման (նախնական լիազորման) հայտերի վերաբերյալ որոշում կայացնելու համար (հաստատուի կամ մերժում): Երբ նախնական հաստատման (նախօրոք լիազորման) հայտ է ներկայացվում մատակարարի կողմից, և Blue Shield Promise-ը գտնում է, որ ստանդարտ ժամկետների պահպանումը կարող է լրջորեն վտանգել Ձեր կյանքը կամ առողջությունը կամ կսահմանափակի ֆունկցիոնալությունը առավելագույն չափով ձեռք բերելու, պահպանելու կամ վերականգնելու հնարավորությունը, Blue Shield Promise-ը նախնական հաստատման (նախօրոք լիազորման) որոշում կկայացնի առավելագույնը 72 ժամում: Սա նշանակում է, որ նախնական հաստատման (նախօրոք լիազորման) հայտը ստանալուց հետո Blue Shield Promise-ը Ձեր առողջական վիճակից կախված՝ հնարավորինս արագ պատասխան կտրամադրի, և դա կանի ոչ ուշ, քան ծառայությունների համար հայտը ներկայացնելուց 72 ժամ կամ 5 օր հետո: Նախնական հաստատման (նախօրոք լիազորման) հայտերը ուսումնասիրվում են կլինիկական կամ բժշկական անձնակազմի կողմից, օրինակ՝ բժիշկների, բուժքույրերի և դեղագործների:

Blue Shield Promise-ը չի ազդում վերանայողների որոշման վրա՝ որևէ կերպ մերժելու կամ հաստատելու ապահովագրությունը կամ ծառայությունները: Եթե Blue Shield Promise-ը չվավերացնի խնդրանքը, Blue Shield Promise-ը Ձեզ կուղարկի Գործողության ծանուցագրի (Notice of Action, NOA) նամակ: NOA-ն Ձեզ տեղեկություններ կտրամադրի, թե ինչպես պետք է բողոք ներկայացնել, եթե համաձայն չլինեք որոշման հետ:

Blue Shield Promise-ը կապ կհաստատի Ձեզ հետ, եթե Blue Shield Promise-ին անհրաժեշտ լինի հավելյալ տեղեկատվություն կամ ժամանակ՝ Ձեր հայտը ուսումնասիրելու համար:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Շտապ օգնության համար Ձեզ երբեք նախնական հաստատում (նախօրոք լիազորում) անհրաժեշտ չի լինի, նույնիսկ եթե այն տրամադրվում է Blue Shield Promise-ի ցանցից կամ Ձեր սպասարկման տարածքից դուրս: Մա ներառում է երկունքն ու մանկածնությունը, եթե հղի եք: Ձեզ անհրաժեշտ չէ նախավավերացում (նախօրոք լիազորում) որոշ զգայուն խնամքի ծառայությունների համար: Զգայուն խնամքի ծառայությունների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար կարդացեք «Զգայուն խնամք» այս գլխում հետագա բաժիններում:

Նախնական հաստատման (նախօրոք լիազորման) հետ կապված հարցերի համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժնի 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

---

## Երկրորդ կարծիքներ

Դուք կարող եք երկրորդ կարծիք իմանալ խնամքի վերաբերյալ, որի համար Ձեր մատակարարը հայտնում է, որ այն անհրաժեշտ է Ձեզ, կամ՝ Ձեր ախտորոշման կամ բուժման ծրագրի վերաբերյալ: Օրինակ, Դուք կարող եք երկրորդ կարծիք իմանալ, եթե ցանկանում եք համոզվել, որ Ձեր ախտորոշումը ճիշտ է, վստահ չեք, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ է նշանակված բուժում կամ վիրահատություն, կամ եթե փորձել եք հետևել բուժման ծրագրի և այն չի գործել: Blue Shield Promise-ը կվճարի երկրորդ կարծիքի համար, եթե Դուք կամ Ձեր ներցանցային մատակարարը խնդրեք այն և երկրորդ կարծիքն ստանաք ցանցի մատակարարից: Ձեզ անհրաժեշտ չէ նախավավերացում (նախօրոք լիազորում) Blue Shield Promise-ից ցանցային մատակարարից երկրորդ կարծիք ստանալու համար: Եթե ցանկանում եք երկրորդ կարծիք ստանալ, մենք Ձեզ կուղեգրենք ներցանցային որակավորված մատակարարի մոտ, որը կկարողանա այն տրամադրել Ձեզ:

Երկրորդ կարծիք խնդրելու և մատակարար ընտրելու հարցում օգնություն ստանալու համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժնի՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Ձեր ներցանցային մատակարարը կարող է նաև օգնել Ձեզ ուղեգիր ստանալ երկրորդ կարծիքի համար, եթե դա ցանկանաք:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժնի 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե Blue Shield Promise-ի ցանցում չկա այնպիսի մատակարար, որը կարող է Ձեզ երկրորդ կարծիք տրամադրել, Blue Shield Promise-ը կվճարի ցանցից դուրս գործող մատակարարից երկրորդ կարծիք ստանալու համար: Blue Shield Promise-ը Ձեզ 5 օրվա ընթացքում կհայտնի, որ արդյոք երկրորդ կարծիքի համար Ձեր ընտրած մատակարարը վավերացվել է: Եթե ունեք քրոնիկական, ծանր կամ լուրջ հիվանդություն կամ ունեք Ձեր առողջությանը սպառնացող անմիջական և լուրջ վտանգ, որը ներառում, բայց չի սահմանափակվում հետևյալով՝ կյանքի, վերջույթների կամ մարմնի հիմնական մասերի կամ մարմնի աշխատանքի կորուստ, Blue Shield Promise-ը Ձեզ գրավոր կտեղեկացնի 72 ժամվա ընթացքում:

Եթե Blue Shield Promise-ը մերժի երկրորդ կարծիքի Ձեր խնդրանքը, Դուք կարող եք բողոքարկել: Բողոքների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար կարդացեք այս տեղեկագրի 6-րդ գլխի «Բողոքներ» բաժինը:

---

## Զգայուն խնամք

### Դեռահասների համաձայնությամբ ծառայություններ

Եթե Դուք 18 տարեկանից փոքր եք, կարող եք որոշ ծառայություններ ստանալ առանց ծնողի կամ խնամակալի թույլտվության: Այս ծառայությունները կոչվում են դեռահասների համաձայնությամբ ծառայություններ:

Հետևյալ ծառայությունները կարող եք ստանալ առանց Ձեր ծնողի կամ խնամակալի թույլտվության:

- Ծառայություններ բռնաբարության և այլ սեռական ոտնձգությունների դեպքում
- Հղիության ստուգում և խորհրդատվություն
- Բեղմնական խման ծառայություններ, ինչպիսիք են ծնելիության վերահսկողությունը (չի ներառում ամլացումը)
- Աբորտների ծառայություններ

Եթե Դուք 12 և ավել տարեկան եք, կարող եք ստանալ այս ծառայությունները առանց Ձեր ծնողի կամ խնամակալի թույլտվության.



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ և խորհրդատվություն կամ ապաստարանի ծառայություններ՝ կախված Ձեր հասունության աստիճանից և սեփական առողջական խնամքին մասնակցելու կարողությունից
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խորհրդատվություն, կանխարգելում, թեստավորում և բուժում
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում, ստուգում և բուժում, ներառյալ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, ինչպիսիք են սիֆիլիսը, գոնորեան, քլամիդիան և հասարակ հերպեսը
- Թմրանյութերի և խմիչքի չարաշահման հետ կապված խանգարման բուժում, ներառյալ սքրինինգի, գնահատման, միջամտության և ուղեգրման ծառայությունները
  - Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք «Թմրանյութի օգտագործման խանգարման բուժման ծառայությունները» այս տեղեկագրքի 4-րդ գլխում:

Հղիության ստուգման, բեղմնականիման ծառայությունների կամ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների դեպքում պարտադիր չէ, որ մատակարարը կամ կլինիկան գտնվեն Blue Shield Promise-ի ցանցում: Դուք կարող եք ընտրել Medi-Cal-ի ցանկացած մատակարար և այցելել նրանց այս ծառայությունների համար առանց ուղեգրի կամ նախավավերացման (նախօրոք լիազորման): Ցանցից դուրս գործող մատակարարի ծառայությունները, որոնք կապված չեն զգայուն խնամքի հետ, կարող են ապահովագրությամբ չծածկվել: Medi-Cal-ի մատակարար գտնելու համար, որը գտնվում է Blue Shield Promise Medi-Cal-ի ցանցից դուրս, կամ մատակարարի մոտ հասնելու նպատակով փոխադրման օգնություն խնդրելու համար զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Բեղմնականիս ծառայությունների հետ կապված լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթացեք այս տեղեկագրքի 4-րդ գլխի «Կանխարգելիչ և առողջական ծառայություններ և քրոնիկ հիվանդությունների կառավարում» բաժնին:

Դեռահասների համաձայնությամբ ծառայությունների համար, որոնք հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ են, կարող եք դիմել ներցանցային կամ արտացանցային մատակարարի՝ առանց ուղեգրի և առանց նախնական հաստատման (նախնական լիազորման): Ձեր PCP-ի ուղեգիրը պարտադիր չէ, և Ձեզ անհրաժեշտ չէ նախնական հաստատում (նախնական թույլտվություն) ստանալ Blue Shield Promise-ից՝ դեռահասների համաձայնությամբ ապահովագրված ծառայություններ ստանալու համար:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Blue Shield Promise-ը չի ապահովագրում անչափահասների համաձայնությամբ այն ծառայությունները, որոնք հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ են: Վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագիրը այն վարչաշրջանի համար, որտեղ Դուք ապրում եք, ներառում է դեռահասների համաձայնությամբ ծառայություններ, որոնք հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ են: Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների համար զանգահարեք Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին կամ Ձեր Blue Shield Promise-ի Վարքագծային առողջության կազմակերպությանը ցանկացած ժամանակ, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարները առցանց գտնելու համար անցեք հետևյալ հղմամբ՝ <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx>:

Դեռահասները կարող են իրենց առողջական խնդիրների մասին գաղտնի գրուցել ներկայացուցչի հետ՝ զանգահարելով Blue Shield Promise-ի Բուժքույրական խորհրդատվական 24/7 հեռախոսագիծ՝ 1-800-609-4166 (TTY 711) հեռախոսահամարով:

Եթե օրենքի համաձայն Դուք կարող եք համաձայնություն տալ Ձեր սեփական խնամքի համար առանց ծնողի կամ խնամակալի համաձայնության, ապա Blue Shield Promise-ը Ձեր զգայուն խնամքի ծառայությունների մասին տեղեկատվություն չի տրամադրի Blue Shield Promise ծրագրի Ձեր ապահովադրին կամ առաջնային բաժանորդին կամ Blue Shield Promise-ում անդամագրված որևէ անձի՝ առանց Ձեր գրավոր թույլտվության: Դուք կարող եք նաև դիմել Ձեր բժշկական ծառայությունների մասին որոշակի ձևով կամ ձևաչափով գաղտնի տեղեկատվություն ստանալու համար, եթե դա կիրառելի է, և խնդրել ուղարկել այն Ձեզ՝ մեկ այլ վայր: Ավելի շատ տեղեկություններ ստանալու համար այն մասին, թե ինչպես խնդրել գաղտնի հաղորդակցություն՝ կապված զգայուն ծառայությունների հետ, ծանոթացեք այս տեղեկագրի 7-րդ գլխի «Գաղտնիության դեպքերի մասին ծանուցում» բաժնին:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](http://blueshieldca.com/promise/medi-cal):

## Չափահասի զգայուն խնամքի ծառայություններ

Որպես չափահաս (18 տարեկան և ավելի բարձր)՝ պարտավոր չեք այցելել Ձեր PCP-ին զգայուն կամ գաղտնի խնամքի համար: Կարող եք խնամքի հետևյալ տեսակների համար ընտրել որևէ բժշկի կամ կլինիկա՝

- Ընտանիքի պլանավորում և ծնելիության վերահսկողություն 21 տարեկան և ավելի բարձր չափահասների համար
- Հղիության ստուգում և խորհրդատվություն և հղիության հետ կապված այլ ծառայություններ
- ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելում և ստուգում
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում, ստուգում և բուժում
- Սեռական ոտնձգության խնամք
- Աբորտների ամբուլատոր ծառայություններ

Զգայուն խնամքի ծառայությունների դեպքում պարտադիր չէ, որ բժիշկը կամ կլինիկան լինեն Blue Shield Promise-ի ցանցի անդամ: Դուք կարող եք ընտրել Medi-Cal-ի ցանկացած մատակարար և այցելել նրան այս ծառայությունների համար՝ առանց Blue Shield Promise-ից ուղեգրի կամ նախավավերացման (նախնական լիազորության): Եթե Դուք ստացել եք խնամք, որը նշված չէ որպես զգայուն խնամք արտացանցային մատակարարի կողմից, գուցե ստիպված լինեք վճարել դրա համար:

Այս ծառայությունները մատուցող բժիշկ կամ կլինիկա գտնելու կամ այս ծառայությունները (ներառյալ փոխադրումը) ստանալու հարցում օգնության կարիք ունեք, կարող եք զանգահարել Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Կամ զանգահարեք Blue Shield Promise-ի Բուժքույրական խորհրդատվական 24/7 հեռախոսագիծ՝ 1-800-609-4166 (TTY 711) հեռախոսահամարով:

Blue Shield Promise-ը Ձեր զգայուն խնամքի ծառայությունների մասին տեղեկատվությունը չի տրամադրի Blue Shield Promise ծրագրի Ձեր ապահովադրին, առաջնային բաժանորդին կամ Blue Shield Promise-ին անդամագրված որևէ անձի առանց Ձեր գրավոր թույլտվության: Դուք կարող եք որոշակի ձևով կամ ձևաչափով գաղտնի տեղեկություններ ստանալ Ձեր բժշկական ծառայությունների մասին, եթե դա կիրառելի է, և խնդրել, որ դրանք ուղարկեն Ձեզ՝ մեկ այլ վայր: Ավելի շատ տեղեկություններ ստանալու համար այն մասին, թե ինչպես խնդրել գաղտնի հաղորդակցություն՝ կապված զգայուն ծառայությունների հետ, ծանոթացեք այս տեղեկագրի 7-րդ գլխի «Գաղտնիության դեպքերի մասին ծանուցում» բաժնին:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Բարոյական առարկություն

Մի շարք մատակարարներ բարոյական առարկություն ունեն մի շարք ապահովագրված ծառայությունների նկատմամբ: Նրանք իրավունք ունեն **չմատուցելու** մի շարք ապահովագրված ծառայություններ, եթե բարոյապես համաձայն չեն ծառայությունների հետ: Այս ծառայությունները ամեն դեպքում հասանելի են Ձեզ համար և կմատուցվեն մեկ այլ մատակարարի կողմից: Եթե Ձեր մատակարարն ունի բարոյական առարկություն, նա Ձեզ կօգնի անհրաժեշտ ծառայությունների համար գտնել մեկ այլ մատակարար: Blue Shield Promise-ը կարող է նաև օգնել Ձեզ գտնել մատակարար:

Որոշ հիվանդանոցներ և մատակարարներ չեն տրամադրում այս ծառայություններից մեկը կամ մի քանիսը, նույնիսկ եթե դրանք ապահովագրված են Medi-Cal-ով.

- Ընտանիքի պլանավորում
- Հակաբեղմնավորման ծառայություններ, ներառյալ՝ շտապ հակաբեղմնավորումը
- Ամլացումը, ներառյալ՝ երկունքի և ծննդաբերության ժամանակ արգանդափողի կապումը
- Անպտղության բուժումները
- Աբորտը

Որպեսզի համոզվեք, որ Դուք ընտրում եք մատակարար, ով կարող է Ձեզ տրամադրել Ձեր և Ձեր ընտանիքի կարիքների խնամքը, զանգահարեք Ձեր ցանկացած բժշկին, բժշկական խմբին, անկախ կիրառության ընկերության կամ կլինիկային: Հարցրեք, թե արդյոք մատակարարը կարող է և կտրամադրի Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Կամ զանգահարեք Blue Shield Promise՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Այս ծառայությունները հասանելի են Ձեզ: Blue Shield Promise-ը պետք է համոզվի, որ Դուք և Ձեր ընտանիքի անդամները կարող եք օգտվել այնպիսի մատակարարներից (բժիշկներ, հիվանդանոցներ և կլինիկաներ), որոնք Ձեզ կտրամադրեն Ձեզ անհրաժեշտ խնամքը: Զանգահարեք Blue Shield Promise-ին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով, եթե հարցեր կամ օգնության կարիք ունեք մատակարար գտնելու հարցում: Եթե հարցեր կամ օգնության կարիք ունեք մատակարար գտնելու հարցում:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



## Հրատապ խնամք

Հրատապ խնամքը արտակարգ իրավիճակի կամ կյանքին սպառնացող բնույթի առողջական խնդրի համար չէ: Այն ծառայությունների համար է, որոնք Ձեզ անհրաժեշտ են հանկարծահաս հիվանդությունից, վնասվածքից կամ Ձեր արդեն ունեցած առողջական խնդրի բարդացումից Ձեր առողջությանը հասնելիք լուրջ վնասի կանխարգելման համար: Անհետաձգելի խնամքի ժամադրությունների մեծ մասը նախավավերացման (նախնական լիազորության) կարիք չունեն: Եթե Դուք հրատապ խնամքի ժամադրություն եք խնդրում, Դուք ժամադրություն կստանաք 48 ժամվա ընթացքում: Եթե Ձեզ անհրաժեշտ հրատապ խնամքի ծառայությունները պահանջում են նախավավերացում (նախօրոք լիազորում), Դուք կստանաք ժամադրություն՝ Ձեր խնդրանքից 96 ժամվա ընթացքում:

Հրատապ խնամքի համար զանգահարեք Ձեր PCP-ին: Եթե չեք կարող կապվել Ձեր PCP-ի հետ, զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Կամ կարող եք զանգահարել Բուժքույրական խորհրդատվական հեռախոսագիծ՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը 1-800-609-4166 (TTY 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր՝ ճշտելու Ձեզ համար լավագույն խնամքի մակարդակը:

Եթե Ձեզ հրատապ խնամք է հարկավոր տարածքից դուրս, գնացեք մոտակա հրատապ խնամքի հաստատությունը:

Անհետաձգելի խնամքի կարիքները կարող են ներառել.

- Մրսածություն
- Կոկորդի ցավ
- Տենդ
- Ականջի ցավ
- Չզված մկան
- Մայրության ծառայություններ

Երբ Դուք գտնվում եք Blue Shield Promise-ի սպասարկման տարածքում և հրատապ խնամքի կարիք ունեք, Դուք պետք է հրատապ խնամքի ծառայությունները ստանաք ներգանցային մատակարարից: Ձեզ անհրաժեշտ չէ նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ներգանցային մատակարարների կողմից տրամադրվող հրատապ խնամքի համար Blue Shield Promise-ի սպասարկման տարածքում:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:

Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե Դուք գտնվում եք Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից դուրս, սակայն Միացյալ Նահանգների տարածքում, ապա սպասարկման տարածքից դուրս հրատապ խնամք ստանալու համար նախնական հաստատման (նախօրոք լիազորման) կարիք չունեք: Գնացեք մոտակա հրատապ խնամքի հաստատությունը:

Medi-Cal-ը չի ապահովագրում հրատապ խնամքի ծառայությունները Միացյալ Նահանգներից դուրս: Եթե ճանապարհորդում եք ԱՄՆ-ից դուրս և Ձեզ հրատապ խնամք է հարկավոր, մենք չենք ապահովագրի Ձեր խնամքը:

Եթե հոգեկան առողջությանը վերաբերող հրատապ խնամքի կարիք ունեք, զանգահարեք Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին կամ Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Զանգահարեք Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին կամ Ձեր Blue Shield Promise-ի Վարքագծային առողջության կազմակերպությանը ցանկացած ժամանակ, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարները առցանց գտնելու համար այցելեք՝ <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContaktList.aspx>:

Եթե Դուք դեղեր եք ստանում որպես Ձեր ապահովագրված հրատապ խնամքի այցի մի մաս, քանի դեռ տեղում եք, Blue Shield Promise-ը դրանք կփոխհատուցի որպես Ձեր ապահովագրված այցի մաս: Եթե Ձեր հրատապ խնամքի մատակարարը Ձեզ դեղատոմս տա, որն անհրաժեշտ է դեղատոմս ներկայացնել, Medi-Cal Rx-ը կորոշի, թե արդյոք այն ապահովագրված է: Medi-Cal Rx-ի մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար ծանոթացեք «Medi-Cal Rx-ով ապահովագրվող դեղատոմսային դեղերին»՝ «Medi-Cal-ի այլ ծրագրեր և ծառայություններ» բաժնին, որը տեղ է գտել այս տեղեկագրի 4-րդ գլխում:

## Շտապ օգնություն

Շտապ օգնության համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ շտապ օգնության (emergency room, ER) կայանը: Շտապ օգնություն ստանալու համար Ձեզ անհրաժեշտ չէ Blue Shield Promise-ի նախնական հաստատումը (նախօրոք լիազորումը):



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](http://blueshieldca.com/promise/medi-cal):

Միացյալ Նահանգների ներսում, ներառյալ Միացյալ Նահանգների ցանկացած տարածք, Դուք իրավունք ունեք շտապ օգնության համար օգտագործել ցանկացած հիվանդանոց կամ այլ միջավայր:

Եթե Դուք գտնվում եք Միացյալ Նահանգներից դուրս, միայն Կանադայում և Մեքսիկայում հոսպիտալացում պահանջող արտակարգ իրավիճակի խնամքը կապահովագրվի: Այլ երկրներում շտապ օգնությունը և այլ խնամքը ապահովագրված չեն:

Շտապ օգնությունը կյանքին վտանգ սպառնացող բժշկական խնդիրների համար է: Այս խնամքը նախատեսված է այն հիվանդության կամ վնասվածքի համար, որի դեպքում առողջապահության և բժշկության մասին միջին գիտելիքներ ունեցող տրամաբանող (ողջամիտ) անձը (ոչ թե առողջական խնամքի մասնագետը) հասկանում է, որ խնամքն անմիջապես չստանալու դեպքում Դուք լուրջ վտանգի կենթարկեք Ձեր առողջությունը (կամ Ձեր չծնված երեխայի առողջությունը): Մա ենթադրում է Ձեր մարմնի գործառույթներին, մարմնի օրգաններին կամ մարմնի մասերին սպառնացող լուրջ վտանգը: Օրինակները կարող են ներառել, բայց չսահմանափակվել հետևյալով՝

- Ակտիվ երկունք
- Կոտրված ոսկոր
- Սաստիկ ցավ
- Կրծքավանդակի ցավ
- Շնչառության խանգարում
- Ծանր այրվածք
- Չափից մեծ դեղաչափ
- Ուշաթափություն
- Սաստիկ արյունահոսություն
- Հոգեբուժական արտակարգ իրավիճակներ, ինչպիսիք են ծանր ընկճվածությունը կամ ինքնասպանության մասին մտքերը

Մի գնացեք շտապ օգնության սենյակ (ER) սովորական խնամքի կամ խնամքի համար, որն անհապաղ անհրաժեշտ չէ: Սովորական խնամքը պետք է ստանաք Ձեր PCP-ից, ով լավագույնս ճանաչում է Ձեզ: ER գնալուց առաջ Ձեզ հարկավոր չէ Ձեր PCP-ին կամ Blue Shield Promise-ին դիմել: Ամեն դեպքում, եթե կասկածում եք, թե արդյոք Ձեզ մոտ արտակարգ իրավիճակ է, զանգահարեք Ձեր PCP-ին: Կարող եք նաև զանգահարել 24/7 գործող Blue Shield Promise-ի Բուժքույրական խորհրդատվական հեռախոսագիծ՝ 1-800-609-4166 (TTY 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե շտապ օգնության կարիք ունեք Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից դուրս, գնացեք մոտակա ER, նույնիսկ եթե այն չի գտնվում Blue Shield Promise-ի ցանցում: ER գնալու դեպքում նրանցից խնդրեք զանգահարել Blue Shield Promise: Դուք կամ այն հիվանդանոցը, որտեղ ընդունվել եք, պարտավոր եք Blue Shield Promise զանգահարել շտապ օգնություն ստանալուն հաջորդող 24 ժամվա ընթացքում: Եթե ճանապարհորդում եք Միացյալ Նահանգներից դուրս, բացի Կանադայից կամ Մեքսիկայից, և Ձեզ շտապ օգնություն է հարկավոր, Blue Shield Promise-ը չի ապահովագրի Ձեր խնամքը:

Արտակարգ իրավիճակի փոխադրության կարիքի դեպքում զանգահարեք **911** համարով:

Եթե արտակարգ իրավիճակից հետո խնամքի կարիք ունեք արտացանցային հիվանդանոցում (հետվերականգնողական խնամք), հիվանդանոցը կզանգահարի Blue Shield Promise:

Եթե Դուք կամ որևէ մեկը, ում ճանաչում եք, ճգնաժամի մեջ է, խնդրում ենք զանգահարել 988՝ Ինքնասպանության և ճգնաժամային օգնության գիծ. **Չանգահարեք կամ հաղորդագրություն ուղարկեք 988 համարին կամ գրեք առցանց՝ [988lifeline.org/chat](https://988lifeline.org/chat)** հղմամբ: 988՝ Ինքնասպանության և ճգնաժամային օգնության գիծն առաջարկում է անվճար և գաղտնի աջակցություն ճգնաժամի մեջ գտնվող ցանկացած անձի համար: Այն վերաբերում է մարդկանց, որոնք հուզական սթրեսի մեջ են, ինչպես նաև նրանց, ովքեր աջակցության կարիք ունեն ինքնասպանության, հոգեկան առողջության և/կամ թմրանյութերի օգտագործման ճգնաժամի հետ կապված:

**Հիշե՛ք.** Մի զանգահարեք **911**, եթե հիմնավոր կերպով համոզված չեք, որ բժշկական տեսանկյունից արտակարգ իրավիճակի մեջ եք: Շտապ օգնությունն ստացեք միայն արտակարգ իրավիճակի, ոչ թե սովորական խնամքի կամ հարբուխի կամ կոկորդի ցավի նման երկրորդական հիվանդությունների համար: Եթե արտակարգ իրավիճակ է, զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա ER:



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Blue Shield Promise-ի Բուժքույրական խորհրդատվական հեռախոսագիծը Ձեզ անվճար բժշկական տեղեկատվություն և խորհրդատվություն է տրամադրում օրը 24 ժամ, ողջ տարվա ընթացքում: Չանգահարեք 1-800-609-4166 (TTY 711) հեռախոսահամարով:**

## Բուժքույրի խորհրդատվական գիծ

Blue Shield Promise-ի Բուժքույրական խորհրդատվական հեռախոսագիծը Ձեզ անվճար բժշկական տեղեկատվություն և խորհրդատվություն է տրամադրում օրը 24 ժամ, ողջ տարվա ընթացքում: Չանգահարեք 1-800-609-4166 (TTY 711) հեռախոսահամարով հետևյալ դեպքերում.

- Խոսելու բուժքրոջ հետ, ով կպատասխանի բժշկական հարցերին, խորհուրդ կտա խնամքի համար և կօգնի Ձեզ որոշել, թե արդյոք Դուք պետք է անմիջապես դիմեք մատակարարին:
- Օգնություն ստանալու բժշկական խնդիրների մասին, ինչպիսիք են շաքարախտը կամ ասթման, ներառյալ խորհուրդներ այն մասին, թե ինչպիսի մատակարար կարող է հարմար լինել Ձեր առողջական խնդրի համար

Բուժքույրերի խորհրդատվական գիծը **չի կարող** օգնել կլինիկայում ժամադրությունների կամ դեղերի վերալցումների հարցում: Չանգահարեք Ձեր մատակարարի ընդունարան, եթե դրա հետ կապված օգնության կարիք ունեք:

Բուժքույրական խորհրդատվական հեռախոսագծի համարը նշված է Ձեր առողջապահական ծրագրի նույնականացման (ID) քարտի վրա: Բուժքույրական խորհրդատվական հեռախոսագիծը ներառում է բանավոր թարգմանչի ծառայություններ:

## Նախնական առողջապահական խնամքի հրահանգներ

Առողջապահական խնամքի նախնական հրահանգը կամ նախնական հրահանգը օրինական ձևաթուղթ է: Ձևաթղթում կարող եք թվարկել, թե ինչպիսի



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ գանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

առողջապահական խնամք էք ցանկանում՝ հետագայում խոսելու կամ որոշումներ կայացնելու անկարողության դեպքում: Կարող էք նաև թվարկել, թե առողջական խնամքի որ ծառայությունները **չէք** ցանկանում ստանալ: Կարող էք նշանակել մեկին, ինչպես օրինակ՝ կողակցին, որպեսզի Ձեր առողջական խնամքի համար որոշումներ կայացնի, երբ Դուք չէք կարող:

Նախօրոք հրահանգի ձևաթուղթը կարող էք ստանալ դեղատներից, հիվանդանոցներից, իրավաբանական գրասենյակներից և բժիշկների ընդունարաններից: Հնարավոր է, որ Դուք ստիպված լինեք վճարել ձևաթղթի համար: Կարող էք նաև անվճար ձևաթուղթ գտնել առցանց և ներբեռնել այն՝ [at https://oag.ca.gov/system/files/media/ProbateCodeAdvanceHealthCareDirectiveForm-fillable.pdf](https://oag.ca.gov/system/files/media/ProbateCodeAdvanceHealthCareDirectiveForm-fillable.pdf): Կարող էք Ձեր ընտանիքի անդամից, PCP-ից, կամ վստահելի անձից խնդրել, որ Ձեզ օգնի ձևաթուղթը լրացնելու համար:

Դուք իրավունք ունեք պահանջել, որ Ձեր նախօրոք հրահանգը տեղադրեն Ձեր բժշկական արձանագրություններում: Դուք իրավունք ունեք Ձեր նախօրոք հրահանգը ցանկացած ժամանակ փոխել կամ ջնջել:

Դուք իրավունք ունեք տեղեկանալ նախօրոք հրահանգի օրենքների փոփոխության մասին: Blue Shield Promise-ը Ձեզ կտեղեկացնի նահանգային օրենքի փոփոխությունների մասին՝ փոփոխությանը հաջորդող 90 օրվա ընթացքում:

Հավելյալ տեղեկություններ ստանալու համար կարող էք զանգահարել Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 հեռախոսահամարով:

## Օրգանի և հյուսվածքի նվիրաբերում

Դուք կարող էք օգնել կյանքեր փրկել՝ դառնալով օրգանի կամ հյուսվածքի դոնոր: Եթե 15-ից 18 տարեկան էք, կարող էք դոնոր դառնալ Ձեր ծնողի կամ խնամակալի գրավոր համաձայնությամբ: Կարող էք ցանկացած պահի փոխել օրգանի դոնոր լինելու վերաբերյալ Ձեր մտադրությունը: Եթե ցանկանում էք հավելյալ տեղեկություններ ստանալ օրգանի և հյուսվածքի նվիրաբերման վերաբերյալ, խոսեք Ձեր PCP-ի հետ: Կարող էք նաև այցելել Միացյալ Նահանգների Առողջապահության և անհատներին մատուցվող ծառայությունների վարչության (Department of Health and Human Services) կայքէջը՝ [www.organdonor.gov](http://www.organdonor.gov):



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](http://blueshieldca.com/promise/medi-cal):

# 4. Նպաստներ և ծառայություններ

## Ինչ նպաստներ և ծառայություններ է ապահովագրում Ձեր առողջապահական ծրագիրը

Այս գլուխը բացատրում է Blue Shield Promise-ի կողմից ապահովագրված նպաստներն ու ծառայությունները: Ձեր ապահովագրված ծառայություններն անվճար են, եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և մատուցվում են Blue Shield Promise-ի ներգանցային մատակարարի կողմից: Դուք պետք է դիմեք Blue Shield Promise-ի նախնական հաստատման (նախնական լիազորման) համար, եթե խնամքը տրամադրվում է ցանցից դուրս, բացառությամբ որոշ զգայուն ծառայությունների և շտապ օգնության ծառայությունների: Ձեր առողջապահական ծրագիրը կարող է ապահովագրել ցանցից դուրս մատակարարի բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները, սակայն Դուք պետք է խնդրեք Blue Shield Promise-ի նախավավերացումը (նախօրոք լիազորում) դրա համար:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները տրամաբանական և անհրաժեշտ են Ձեր կյանքը պաշտպանելու համար, պաշտպանում են Ձեզ՝ լրջորեն հիվանդանալուց կամ հաշմանդամ դառնալուց, կամ մեղմացնում են սաստիկ ցավը՝ ախտորոշված ախտից, հիվանդությունից կամ վնասվածքից: 21 տարեկանից ցածր անդամների համար Medi-Cal ծառայությունները ներառում են խնամք, որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ առողջական խնդիրը շտկելու կամ օգնել այն մեղմացնելու համար: Ձեր ապահովագրված ծառայությունների վերաբերյալ ավելին իմանալու համար զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

21 տարեկանից ցածր անդամները ստանում են լրացուցիչ նպաստներ և ծառայություններ: Հավելյալ տեղեկությունների համար ծանոթացեք այս տեղեկագրքի 5-րդ գլխի «Երեխաների և երիտասարդների առողջության խնամքը» բաժնին:

Blue Shield Promise-ի կողմից առաջարկվող հիմնական առողջապահական նպաստներից և ծառայություններից մի քանիսը թվարկված են ստորև: Աստղանիշով (\*) նշված նպաստներն ու ծառայությունները պահանջում են նախնական հաստատման (նախնական լիազորման) առկայություն:



---

Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



- Ալերգիայի ստուգում և ներարկումներ
- Ամբողջ գենոմի արագ հաջորդականացում (սեքվենավորում)\*
- Ամբուլատոր վիրահատություն\*
- Այցեր մասնագետների մոտ
- Անբուժելի հիվանդների խնամք\*
- Անեսթեզիոլոգի ծառայություններ
- Աղիքային և արտաղիքային սնուցում\*
- Աշխատանքային թերապիա\*
- Ասեղնաբուժություն\*
- Ասթմայի կանխարգելում
- Ատամնաբուժական ծառայություններ՝ սահմանափակ (մատուցվում են բժշկական մասնագետի/առաջնային խնամքի մատակարարի (PCP) կողմից բժշկական հաստատությունում), կամ ատամնաբուժական ընդհանուր անզգայացման/խորը ցավազրկման համար, որը չի իրականացվում ատամնաբուժական մատակարարի կողմից)\*
- Աուդիոլոգիա\*
- Դիալիզ ծառայություններ
- Դիալիզի/արյան դիալիզի ծառայություններ
- Դուլայի ծառայություններ
- Երկարատև տնային առողջության բուժում և ծառայություններ\*
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ (կարող եք այցելել ոչ մասնակից մատակարարի)
- Թոքերի վերականգնում
- Լաբորատորիա և ռադիոլոգիա\*
- Լոգոպեդիա\*
- Լսողական սարքեր\*
- Կանանց առողջության ծառայություններ
- Կենսացուցիչների ստուգում\*
- Համայնքային բուժաշխատողների ծառայություններ
- Հեռավար բժշկություն/Հեռավար առողջապահություն
- Հիմնական օրգանի փոխպատվաստում\*
- Հիվանդանոցային ամբուլատոր ծառայություններ\*
- Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ
- Հրատապ խնամք
- Ճանաչողական առողջության գնահատումներ
- Մայրության և նորածնի խնամք
- Մանկաբուժական ծառայություններ
- Մասնագիտացած բուժքույրական հաստատության ծառայություններ, ներառյալ շտապ ծառայությունները\*
- Միջանկյալ խնամքի հաստատության ծառայություններ
- Չափահասի պատվաստումներ (սրսկումներ)
- Շտապ օգնության կայանի այցեր
- Շտապ օգնության ծառայություններ արտակարգ իրավիճակների համար
- Ոսկրահարդարման ծառայություններ\*
- Ոտնաբուժական ծառայություններ\*
- Սեռափոխության ծառայություններ\*
- Ստացիոնար բժշկական և վիրաբուժական խնամք\*



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

- Սրտի վերականգնում
- Սուր (կարճաժամկետ բուժում) տնային առողջապահական թերապիա և ծառայություններ
- Վարքագծային առողջության բուժումներ\*
- Վերականգնողական ծառայություններ և սարքեր\*
- Վիրաբուժական ծառայություններ\*
- Տանը մատուցվող առողջապահական խնամք\*
- Տեսողական ծառայություններ\*
- Տեսական օգտագործման բժշկական սարքեր (DME)\*
- Ցավամոքիչ խնամք\*
- Քիմիաթերապիա և ճառագայթային բուժում
- Օստոմիա և միզական պաշարներ
- Օրթեզ/պրոթեզ\*
- Ֆիզիկական թերապիա\*
- PCP-ի այցերը

Ապահովագրված ծառայությունների սահմանումները և նկարագրությունները կարելի է գտնել այս տեղեկագրքի 8-րդ գլխի «Կարևոր համարներ և բառեր, որոնք պետք է իմանալ» բաժնում:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները տրամաբանական և անհրաժեշտ են Ձեր կյանքը պաշտպանելու համար, արգելում են Ձեր լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը, կամ մեղմացնում են սաստիկ ցավը՝ ախտորոշված ախտից, հիվանդությունից կամ վնասվածքից:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներառում են այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են տարիքին համապատասխան աճի և զարգացման կամ ֆունկցիոնալ կարողությունները ձեռք բերելու, պահպանելու կամ վերականգնելու համար:

Մինչև 21 տարեկան անդամների համար ծառայությունը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, եթե անհրաժեշտ է շտկել կամ ուղղել թերությունները, ֆիզիկական և մտավոր խնդիրները կամ այն առողջական խնդիրները, որոնք ներառված են մանկական և դեռահասների համար նախատեսված Medi-Cal-ի (Նաև հայտնի է որպես վաղ և պարբերական զննում, ախտորոշում և բուժում (Early and Periodic Screening, Diagnostic and Treatment, EPSDT)) նպաստի մեջ: Սա ներառում է խնամք, որն անհրաժեշտ է՝ շտկելու կամ օգնելու թեթևացնել ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ առողջական խնդիրը կամ պահպանել անդամի վիճակը, որպեսզի այն չվատթարանա:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները չեն ներառում հետևյալը.

- Բուժումներ, որոնք չեն փորձարկվել կամ դեռ փորձարկվում են
- Ծառայություններ կամ ապրանքներ, որոնք ընդհանուր առմամբ ընդունված չեն որպես արդյունավետ
- Ծառայություններ, որոնք շեղվում են նորմալ ընթացքից և բուժման տևողությունից կամ ծառայություններ, որոնք չունեն կլինիկական ուղեցույցներ
- Ծառայություններ խնամողի կամ մատակարարի հարմարության համար

Blue Shield Promise-ը համագործակցում է այլ ծրագրերի հետ՝ համոզվելու համար, որ Դուք ստանում եք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բոլոր ծառայությունները, նույնիսկ եթե այդ ծառայությունները ապահովագրված են մեկ այլ ծրագրով, այլ ոչ թե Blue Shield Promise-ով:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Բժշկական առումով անհրաժեշտ ծառայությունները ներառում են ապահովագրված ծառայություններ, որոնք ողջամիտ են և անհրաժեշտ՝

- Կյանքը պաշտպանելու,
- Լուրջ հիվանդությունների կամ էական հաշմանդամության կանխարգելման համար,
- Սաստիկ ցավը մեղմացնելու,
- Տարիքին համապատասխան աճ և զարգացում ձեռք բերելու կամ
- Ֆունկցիոնալ կարողություններ ձեռք բերելու, պահպանելու և վերականգնելու

21 տարեկանից ցածր անդամների համար բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներառում են վերոնշյալ բոլոր ապահովագրված ծառայությունները, ինչպես նաև ցանկացած այլ անհրաժեշտ առողջապահական խնամք, զննում, պատվաստումներ, ախտորոշիչ ծառայություններ, բուժում և այլ միջոցներ՝ թերությունները, ֆիզիկական և հոգեկան հիվանդություններն ու առողջական խնդիրները շտկելու կամ ուղղելու համար, ինչպես պահանջում է երեխաների և դեռահասների համար նախատեսված Medi-Cal-ը: Այս նպաստը հայտնի է որպես դաշնային օրենքի համաձայն գործող՝ վաղ և պարբերական զննման, ախտորոշման և բուժման (Early and Periodic Screening, Diagnostic, and Treatment, EPSDT) նպաստ:

Երեխաների և դեռահասների համար նախատեսված Medi-Cal-ը տրամադրում է կանխարգելման, ախտորոշման և բուժման ծառայություններ ցածր եկամուտ ունեցող մանուկների, երեխաների և մինչև 21 տարեկան դեռահասների համար: Երեխաների և դեռահասների համար նախատեսված Medi-Cal-ը ընդգրկում է ավելի շատ ծառայություններ, քան չափահասների նպաստները: Այն նախատեսված է երեխաների հիվանդությունների վաղ հայտնաբերման համար, որպեսզի նրանք խնամք ստանան առողջական խնդիրները կանխելու կամ ախտորոշելու և բուժելու համար: Երեխաների և դեռահասների համար նախատեսված Medi-Cal-ի նպատակն է համոզվել, որ յուրաքանչյուր երեխա ստանում է իրեն անհրաժեշտ առողջական խնամքը, երբ դրա կարիքն ունի. ճիշտ խնամք ճիշտ երեխայի համար ճիշտ ժամանակին և ճիշտ հաստատությունում:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Blue Shield Promise-ը կհամագործակցի այլ ծրագրերի հետ՝ համոզվելու համար, որ Դուք ստանում եք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բոլոր ծառայությունները, նույնիսկ եթե այդ ծառայությունները ապահովագրված են մեկ այլ ծրագրով, այլ ոչ թե Blue Shield Promise-ով: Ծանոթացեք «Medi-Cal-ի այլ ծրագրեր և ծառայություններ» բաժնին ստորև այս գլխում:

## Medi-Cal նպաստներ, որոնք ապահովագրված են Blue Shield Promise-ի կողմից

### Երբևեկ հիվանդի (ամբուլատոր) ծառայություններ

#### *Ալերգիայի խնամք*

Blue Shield Promise-ն ապահովագրում է ալերգիայի ստուգումը և բուժումը, ներառյալ՝ ալերգիայի ապագայացումը, գերզգայացումը կամ իմունոթերապիան:

#### *Ամբուլատոր վիրահատություն*

Blue Shield Promise-ը ապահովագրում է ամբուլատոր վիրահատական բուժգործողություններ: Որոշ բուժգործողությունների համար Դուք պետք է ստանաք նախավավերացում (նախօրոք լիազորում) նախքան այդ ծառայությունները ստանալը: Ախտորոշիչ բուժգործողությունները և որոշակի ամբուլատոր բժշկական կամ ատամնաբուժական բուժգործողությունները համարվում են ընտրովի: Դուք պետք է ստանաք նախավավերացում (նախօրոք լիազորում):

#### *Անեսթեզիոլոգի ծառայություններ*

Blue Shield Promise-ը ապահովագրում է անզգայացման ծառայությունները, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են ամբուլատոր խնամք ստանալիս: Սա կարող է ներառել անզգայացում ատամնաբուժական բուժգործողությունների համար, երբ տրամադրվում է անզգայացնողի կողմից, որը կարող է պահանջել նախնական հաստատում (նախօրոք լիազորում):



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

### *Բժշկի ծառայություններ*

Blue Shield Promise-ը ապահովագրում է բժշկի ծառայությունները, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են:

### *Բուժման թերապիաներ*

Blue Shield Promise-ն ապահովագրում է բուժման տարբեր թերապիաներ, ներառյալ՝

- Քիմիաթերապիան
- Ճառագայթային բուժումը

### *Դիաղիկ ծառայություններ*

Blue Shield Promise-ն ապահովագրում է անդամների և նրանց խնամակալների համար բժշկական տեսանկյունից անհրաժեշտ վարքագծային առողջության (DBH) խնամքի դիաղիկ ծառայությունները: Դիաղը երեխան, նրա ծնողները կամ խնամողներն են: Դիաղիկ խնամքը ծառայում և՛ ծնողներին կամ խնամողներին, և՛ երեխային: Այն ուղղված է ընտանիքի բարեկեցությանը՝ աջակցելու երեխայի առողջ զարգացմանը և հոգեկան առողջությանը:

Դիաղիկ խնամքի ծառայությունները ներառում են՝

- DBH-ի երեխայի առողջության այցեր
- Համայնքային աջակցության դիաղիկ համապարփակ ծառայություններ
- Դիաղիկ հոգե-կրթական ծառայություններ
- Ծնողի կամ խնամողի դիաղիկ ծառայություններ
- Ընտանիքի դիաղիկ ուսուցում, և
- Երեխաների զարգացման հետ կապված խորհրդատվություն և մայրական հոգեկան առողջության ծառայություններ

### *Դիալիզի և արյան դիալիզի ծառայություններ*

Blue Shield Promise-ն ապահովագրում է դիալիզի բուժումները: Blue Shield Promise-ը նաև ապահովագրում է արյան դիալիզի (քրոնիկական դիալիզ) ծառայությունը, եթե Ձեր բժիշկը խնդրանք է ներկայացնում, և Blue Shield Promise-ը վավերացնում է այն:

Medi-Cal-ի ապահովագրությունը չի ներառում հետևյալը.

- Հարմարանք, հարմարավետություն կամ շքեղ սարքավորումներ, պարագաներ և առանձնահատկություններ



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Ոչ բժշկական իրեր, ինչպիսիք են գեներատորները կամ արքեստուարները՝ տնային դիալիզի սարքավորումները ճանապարհորդելու նպատակով շարժական դարձնելու համար

### **Դուլայի ծառայություններ**

Blue Shield Promise-ն ապահովագրում է դուլայի ծառայությունները, որոնք տրամադրվում են անդամի հղիության ընթացքում դուլայի ծառայությունների ներգանցային մատակարարների կողմից՝ կծկումների և ծննդաբերության ժամանակ, ներառյալ մեռելաձնությունը, վիժումը և աբորտը, ինչպես նաև անդամի հղիության ավարտից հետո մեկ տարվա ընթացքում: Medi-Cal-ը չի ապահովագրում դուլայի բոլոր ծառայությունները:

Դուլայի ծառայությունների մատակարարները մանկաբարձության ոլորտի այն աշխատողներն են, որոնք տրամադրում են առողջապահական կրթություն և պաշտպանություն, ինչպես նաև ֆիզիկական, էմոցիոնալ և ոչ բժշկական աջակցություն հղիներին և ծննդաբերած կանանց՝ ծննդաբերությունից առաջ, դրա ընթացքում և ծննդաբերությունից հետո, ներառյալ աջակցություն մեռելաձնության, վիժման և աբորտի դեպքում:

Որպես կանխարգելիչ նպաստ, դուլայի ծառայությունները պահանջում են գրավոր առաջարկություն բժշկի կամ բուժիչ արվեստի այլ արտոնագրված մասնագետի կողմից՝ իրենց պրակտիկայի շրջանակներում: DHCS-ը դուլայի ծառայությունների վերաբերյալ թողարկել է մշտապես գործող առաջարկներ, ինչը բավարարում է սկզբնական առաջարկության պահանջին: Դուլայի ծառայությունների սկզբնական առաջարկը ներառում է հետևյալ թույլտվությունները.

- Մեկ սկզբնական այց
- Մինչև 8 լրացուցիչ այց, որոնք կարող են լինել ինչպես նախածննդյան, այնպես էլ հետծննդյան այցեր:
- Աջակցություն կծկումների և ծննդաբերության ժամանակ (ներառյալ կծկումները և ծննդաբերությունը, որն ավարտվում է մեռելաձնությամբ, աբորտով կամ վիժումով)
- Մինչև 2 երկարացված 3-ժամանոց հետծննդյան այց՝ հղիության ավարտից հետո

Անդամները կարող են ստանալ մինչև ինը լրացուցիչ հետծննդյան այց՝ բժշկի կամ այլ արտոնագրված մասնագետի կողմից ներկայացված լրացուցիչ գրավոր առաջարկության դեպքում:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Blue Shield Promise-ը պետք է կազմակերպի ցանցից դուրս մատուցվող դուրայի ծառայություններից օգտվելու հնարավորությունը անդամների համար, եթե դուրայի ծառայությունների ներցանցային մատակարարը հասանելի չէ:

**Համայնքային բուժաշխատողների ծառայություններ**

Blue Shield Promise-ը ապահովագրում է համայնքային բուժաշխատողի (CHW) ծառայությունները անհատների համար, երբ խորհուրդ է տրվում բժշկի կամ այլ արտոնագրված մասնագետի կողմից՝ կանխելու հիվանդությունները, հաշմանդամությունը և առողջական այլ խնդիրները կամ դրանց զարգացումը, երկարացնելու կյանքը և խթանելու ֆիզիկական և մտավոր առողջությունն ու արդյունավետությունը: CHW ծառայությունները չունեն ծառայության վայրի սահմանափակումներ, և անդամները կարող են ծառայություններ ստանալ այնպիսի հաստատություններում, ինչպիսիք են, օրինակ, շտապ օգնության բաժանմունքները: Ծառայությունները կարող են ընդգրկել՝

- Առողջապահական կրթություն և անհատական աջակցություն կամ պաշտպանություն, ներառյալ քրոնիկական կամ վարակիչ հիվանդությունների վերահսկում և կանխարգելում, վարքային, պերինատալ և բերանի խոռոչի առողջության խնդիրներ, բռնության կամ վնասվածքի կանխարգելում
- Առողջության խթանում և ուսուցում, ներառյալ նպատակների սահմանումը և գործողությունների պլանների ստեղծումը՝ ուղղված հիվանդությունների կանխարգելմանը և կառավարմանը
- Առողջապահական օգնություն, ներառյալ տեղեկատվության տրամադրում, ուսուցում և աջակցություն, որոնք կօգնեն ստանալ առողջապահական խնամք և համայնքային ռեսուրսներ
- Ջնման և գնահատման ծառայություններ, որոնք օգնում են անդամին միանալ ծառայությունների և բարելավել իրենց առողջությունը:

CHW բռնության կանխարգելման ծառայությունները հասանելի են այն անդամներին, որոնք բավարարում են հետևյալ հանգամանքներից որևէ մեկին, ինչը հաստատվել է արտոնագրված մասնագետի կողմից.

- Անդամը լուրջ վնասվածք է ստացել համայնքում կատարված բռնության հետևանքով:
- Անդամը համայնքում կատարված բռնության հետևանքով լուրջ վնասվածք ստանալու մեծ վտանգի տակ է:
- Անդամը շարունակաբար ենթարկվել է համայնքում կատարվող բռնության:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



CHW բռնության կանխարգելման ծառայությունները ուղղված են համայնքում կատարվող բռնության դեմ (օրինակ՝ խմբակային բռնություն): CHW ծառայությունները կարող են տրամադրվել անդամներին միջանձնային/տնային բռնության դեպքում՝ այդ կարիքներին հատուկ ուսուցման/գնահատման այլ ուղիների միջոցով:

### ***Ճանաչողական առողջության գնահատումներ***

Blue Shield Promise-ը ապահովագրում է կոգնիտիվ առողջության տարեկան գնահատումն այն անդամների համար, որոնք 65 տարեկան և ավել են, և այլ կերպ իրավասու չեն նմանատիպ գնահատման՝ Medicare ծրագրի տարեկան առողջական այցի շրջանակում: Կոգնիտիվ առողջության գնահատումը իրականացվում է Ալցհեյմերի հիվանդությունը կամ դեմենցիայի նշանները բացահայտելու նպատակով:

### ***Չափահասների պատվաստումներ (սրսկումներ)***

Չափահասի պատվաստումները (սրսկումներ) կարող եք ստանալ ներքանցային մատակարարից առանց նախնական հաստատման (նախնական լիազորման), երբ դրանք հանդիսանում են որպես կանխարգելիչ ծառայություն: Blue Shield Promise-ը ապահովագրում է պատվաստումները (սրսկումները), որոնք առաջարկվում են Հիվանդությունների կառավարման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, CDC) Պատվաստման գործընթացի խորհրդատվական կոմիտեի (Advisory Committee on Immunization Practices, ACIP) կողմից որպես կանխարգելիչ ծառայություններ, ներառյալ պատվաստումները (սրսկումները), որոնք անհրաժեշտ են ճանապարհորդելիս:

Դուք կարող եք նաև չափահասների պատվաստման (սրսկումների) ծառայություններ ստանալ դեղատնից՝ Medi-Cal Rx-ի միջոցով: Medi-Cal Rx-ի մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար ծանոթացեք «Medi-Cal-ի այլ ծրագրեր և ծառայություններ» բաժնին ստորև այս գլխում:

### ***Ոսկրահարդարման ծառայություններ***

Blue Shield Promise-ը ապահովագրում է ոսկրահարդարման ծառայությունները, այն սահմանափակելով ձեռքով ուղղելու միջոցով ողնաշարի բուժմամբ: Ոսկրահարդարման ծառայությունները սահմանափակվում են առավելագույնը 2 այցով յուրաքանչյուր ամսում: Սահմանափակումները չեն տարածվում



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

21 տարեկանից ցածր երեխաների վրա: Blue Shield Promise-ը կարող է նախավավերացնել այլ ծառայություններ, եթե դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինեն:

Այս անդամները որակավորվում են ոսկրահարդարման ծառայությունների համար.

- 21 տարեկանից ցածր երեխաներ
- Հղի կանայք՝ մինչև հղիության ավարտին հաջորդող 60 օր ընդգրկող ամսվա վերջը
- Հնուտ բուժքույրական հաստատության, միջանկյալ խնամքի հաստատության կամ մասնագիտական խնամքի հաստատության բնակիչները
- Բոլոր անդամները, երբ ծառայություններ են մատուցվում վարչաշրջանային հիվանդանոցների ամբուլատոր բաժանմունքներում, ամբուլատոր կլինիկաներում, Դաշնային որակավորման առողջապահական կենտրոնում (Federally Qualified Health Center, FQHC) կամ RHC-ներում, որոնք գտնվում են Blue Shield Promise-ի ցանցի ներսում: Ոչ բոլոր FQHC-ները, RHC-ները կամ վարչաշրջանային հիվանդանոցներն են առաջարկում ամբուլատոր ոսկրահարդարման ծառայություններ:

***Ոսնաբուժական (նոքթի) ծառայություններ***

Blue Shield Promise-ն ապահովագրում է ոսնաբուժական ծառայությունները՝ մարդու նոքթի ախտորոշման և բժշկական, վիրաբուժական, մեխանիկական, ձեռքի շարժումներով բուժման և էլեկտրական բուժման համար: Սա ներառում է կոճի և նոքթի հետ կապված ջլերի բուժումը: Այն ներառում է նաև նոքթի մկանների և ջլերի ոչ վիրահատական բուժում, որը վերահսկում է նոքթի գործառույթները:

**Մայրության և նորածնի խնամք**

Blue Shield Promise-ն ապահովագրում է մայրության և նորածնի խնամքի հետևյալ ծառայությունները՝

- Արտոնագրված մանկաբարձ (LM)
- Դուլայի ծառայություններ
- Խնամքի համակարգում
- Խորհրդատվություն
- Ծննդաբերության և հետ-ծննդաբերության խնամք
- Ծննդաբերական կենտրոնի ծառայություններ
- Կերակրման վերաբերյալ կրթություն
- Կրծքի կթիչներ և պարագաներ



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Կրծքով սնուցման կրթություն և օգնություն
- Հղիության ընթացքում առողջությանը վերաբերող կրթություն
- Մայրական հոգեկան առողջության ծառայություններ
- Նախածնական խնամք
- Նորածնի խնամք
- Պտղի գենետիկական խանգարումների ախտորոշում և խորհրդատվություն
- Սոցիալական և հոգեկան առողջության գնահատումներ և ուղեգրեր
- Վիտամիններ և հանքային հավելումներ
- Վկայագրված բուժքույր-մանկաբարձ (CNM)

### **Հեռավար առողջապահության ծառայություններ**

Հեռավար առողջապահությունը ծառայություններ ստանալու միջոց է՝ առանց Ձեր մատակարարի հետ նույն տեղում գտնվելու: Հեռավար առողջապահությունը կարող է ներառել Ձեր մատակարարի հետ ուղիղ զրույց ունենալ հեռախոսով, տեսակապով կամ այլ միջոցներով: Կամ հեռավար առողջապահությունը կարող է ներառել Ձեր մատակարարի հետ տեղեկատվության փոխանակում առանց իրական ժամանակում զրույցի: Դուք կարող եք շատ ծառայություններ ստանալ հեռավար առողջապահության միջոցով:

Հեռավար առողջապահությունը կարող են հասանելի չլինել բոլոր ապահովագրված ծառայությունների դեպքում: Կարող եք կապվել Ձեր մատակարարի հետ՝ տեղեկանալու, թե որ տեսակի ծառայությունները կարող են մատուցվել հեռավար առողջապահության միջոցով: Կարևոր է, որ ն՝ Դուք, և՛ Ձեր մատակարարը համաձայնեք, որ որոշակի առողջության համար հեռավար առողջապահության օգտագործումը Ձեզ համար հարմար է: Դուք իրավունք ունեք անձամբ օգտվելու ծառայություններից: Ձեզնից չի պահանջվում օգտվել հեռավար առողջապահությունից, նույնիսկ եթե Ձեր մատակարարը համարում է, որ այն համապատասխանում է Ձեզ:

### **Հոգեկան առողջության ծառայություններ**

#### *Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ*

Blue Shield Promise-ը ապահովագրում է հոգեկան առողջության սկզբնական գնահատումը առանց նախավավերացման (նախնական լիազորության)



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

անհրաժեշտության: Դուք կարող եք ցանկացած ժամանակ առանց ուղեգրի Հոգեկան առողջության գնահատում ստանալ Blue Shield Promise-ի ցանցում արտոնագրված հոգեկան առողջության մատակարարից:

Ձեր PCP-ն կամ հոգեկան առողջության մատակարարը ուղեգիր կտա Blue Shield Promise-ի ցանցում մասնագետի մոտ հոգեկան առողջության հավելյալ գննման համար՝ Ձեզ անհրաժեշտ խնամքի մակարդակը որոշելու նպատակով: Եթե Ձեր հոգեկան առողջության գննման արդյունքների հիման վրա պարզվի, որ Դուք մեղմ կամ չափավոր անհանգստություն ունեք կամ մտավոր, հուզական կամ վարքագծային գործառույթի խանգարում ունեք, Blue Shield Promise-ը կարող է հոգեկան առողջության ծառայություններ մատուցել Ձեզ: Blue Shield Promise-ն ապահովագրում է հոգեկան առողջության հետևյալ ծառայությունները՝

- Անհատական և խմբային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեբուժություն)
- Հոգեբանական ստուգում՝ հոգեկան առողջության խնդրի գնահատման համար, երբ կլինիկական տեսանկյունից ցուցված է
- Ճանաչողական հմտությունների զարգացման վարքագծային առողջության բուժում՝ ուշադրության, հիշողության և խնդիրների լուծման բարելավման, նոր հմտություններ սովորելու, հաղորդակցվելու, դրական վարքագծի ավելացման և դժվար վարքագծի նվազեցման համար
- Ամբուլատոր ծառայություններ, որոնք նպատակ ունեն վերահսկել դեղերով բուժումը
- Ամբուլատոր լաբորատոր ծառայություններ
- Ամբուլատոր դեղեր, որոնք արդեն ներառված չեն Medi-Cal Rx պայմանագրային դեղերի ցանկում (<https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>), պարագաներ և հավելումներ
- Հոգեբուժական խորհրդատվություն
- Ընտանեկան թերապիա, որը ներառում է ընտանիքի առնվազն 2 անդամի Ընտանեկան թերապիայի օրինակները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով.
  - Երեխա-ծնող հոգեթերապիա (0-ից 5 տարեկան)
  - Ծնող երեխա ինտերակտիվ թերապիա (2-ից 12 տարեկան)
  - Զույգերի ճանաչողական-վարքագծային թերապիա (չափահասներ)

Blue Shield Promise-ի կողմից մատուցվող հոգեկան առողջության ծառայությունների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար զանգահարեք 1-800-855-765-9701 (TTY 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե հոգեկան առողջության խանգարման համար Ձեզ անհրաժեշտ բուժումը հասանելի չէ Blue Shield Promise-ի ցանցում, կամ Ձեր PCP-ն կամ հոգեկան առողջության մատակարարը չի կարող Ձեզ անհրաժեշտ օգնություն ցուցաբերել «Ժամանակին տրաշադրված խնամքի մատչելիություն» բաժնում նշված ժամանակահատվածում, Blue Shield Promise-ը կապահովագրի և կօգնի Ձեզ ցանցից դուրս ծառայություններ ստանալ:

Եթե Ձեր հոգեկան առողջության գնման արդյունքները ցույց տան, որ ավելի բարձր մակարդակի խանգարում ունեք և կարիք ունեք մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունների (SMHS), Ձեր PCP-ն կամ հոգեկան առողջության մատակարարը Ձեր կուղղորդեն վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին՝ անհրաժեշտ խնամք ստանալու համար: Blue Shield Promise-ը կօգնի Ձեզ համակարգել Ձեր առաջին ժամադրությունը վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի մատակարարի մոտ՝ Ձեզ համար ճիշտ խնամք ընտրելու համար: Հավելյալ տեղեկություններ ստանալու համար կարդացեք այս տեղեկագրի 4-րդ գլխի «Medi-Cal-ի այլ ծրագրեր և ծառայություններ» բաժինը՝ Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունների ներքո:

## Շտապ օգնության ծառայություններ

### *Ստացիոնար և ամբուլատոր ծառայություններ, որոնք անհրաժեշտ են բժշկական արտակարգ իրավիճակի բուժման համար*

Blue Shield Promise-ն ապահովագրում է բոլոր անհրաժեշտ ծառայությունները՝ կարգավորելու համար ԱՄՆ-ում տեղի ունեցած բժշկական արտակարգ իրավիճակը (ներառյալ այն տարածքները, ինչպիսիք են Պուերտո Ռիկոն, Միացյալ Նահանգների Վիրջինյան կղզիները և այլն): Blue Shield Promise-ը նաև ապահովագրում է շտապ օգնության ծառայությունը, որը պահանջում է հոսպիտալացում Կանադայում կամ Մեքսիկայում:

Բժշկական շտապ օգնությունն առողջական խնդիր է՝ ուժեղ ցավով կամ լուրջ վնասվածքով: Խնդիրն այնքան լուրջ է, որ եթե դրան անմիջապես բժշկական միջամտություն չցուցաբերվի, խելամիտ (ողջամիտ) ոչ մասնագետը (ոչ առողջապահության մասնագետ) կարող է ենթադրել, որ այն կհանգեցնի հետևյալի.



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Առողջությանը սպառնացող լուրջ վտանգ
- Մարմնի գործառույթներին հասցված լուրջ վնաս
- Մարմնի որևէ օրգանի կամ մասի գործունեության լուրջ խանգարում
- Լուրջ ռիսկի ակտիվ ծննդաբերության մեջ գտնվող հղի կնոջ դեպքում, այսինքն՝ ծննդաբերություն այն ժամանակ, երբ տեղի կունենա հետևյալներից որևէ մեկը.
  - Մինչև ծննդաբերությունը բավարար ժամանակ չկա, որպեսզի Ձեզ անվտանգ կերպով տեղափոխեն մեկ այլ հիվանդանոց:
  - Փոխադրումը կարող է Ձեր կամ Ձեր չճնված երեխայի առողջության կամ անվտանգության համար սպառնալիք ներկայացնել:

Եթե հիվանդանոցի շտապ օգնության կայանը Ձեզ տրամադրի մինչև 72 ժամվա ամբուլատոր դեղատոմսով դեղի պաշար՝ որպես Ձեր բուժման մաս, դեղատոմսով դեղը կփոխհատուցվի Blue Shield Promise-ի կողմից՝ որպես Ձեր ապահովագրված արտակարգ իրավիճակի ծառայությունների մաս: Եթե հիվանդանոցի շտապ օգնության կայանի մատակարարը Ձեզ դեղատոմս տա, որը Դուք պետք է տանեք ամբուլատոր դեղատուն՝ լրացնելու համար, Medi-Cal Rx-ը պատասխանատու կլինի այդ դեղատոմսի ապահովագրման համար:

Եթե ճանապարհորդելիս Ձեզ անհրաժեշտ լինի ամբուլատոր դեղատոմսից դեղի շտապ պաշար, ապա դեղը պարտավոր կլինի ապահովագրել Medi-Cal Rx-ը, այլ ոչ թե Blue Shield Promise-ը: Եթե դեղատունն օգնության կարիք ունի Ձեզ շտապ օգնության դեղերը տրամադրելու հարցում, խնդրեք նրանց զանգահարել Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 հեռախոսահամարով:

***Արտակարգ իրավիճակի փոխադրման ծառայություններ***

Blue Shield Promise-ն ապահովագրում է շտապօգնության մեքենայի ծառայությունները, որպեսզի օգնի, որ արտակարգ իրավիճակի դեպքերում հասնեք մոտակա խնամքի վայրը: Սա նշանակում է, որ Ձեր վիճակը այնքան լուրջ է, որ խնամքի վայր հասնելու այլ միջոցները կարող են վտանգի ենթարկել Ձեր առողջությունը կամ կյանքը: Ոչ մի ծառայություն չի ապահովագրվում ԱՄՆ-ից դուրս, բացի շտապ օգնության խնամքից, որը պահանջում է հիվանդանոց ընդունվել Կանադայում կամ Մեքսիկայում: Եթե Դուք շտապ օգնության ծառայություններ եք ստանում Կանադայում և Մեքսիկայում և հիվանդանոցային բուժում չեք ստացել այդ խնամքի ընթացքում, Ձեր շտապ օգնության ծառայությունները չեն ապահովագրվի Blue Shield Promise-ով:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Հոսփիսի և ցավամոքիչ խնամք

Blue Shield Promise-ը ապահովագրում է երեխաների և չափահասների համար հոսփիսի խնամքը, ինչպես նաև ցավամոքիչ խնամքը, որն օգնում է ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհանգստությունների նվազեցմանը: 21 տարեկան և բարձր տարիքի չափահասները չեն կարող միաժամանակ ստանալ և՛ հոսփիսի, և՛ բուժիչ խնամքի ծառայություններ:

### *Հոսփիսի (անբուժելի հիվանդների) խնամք*

Հոսփիսի խնամքը նպաստ է անբուժելի հիվանդ անդամների համար: Հոսփիսի խնամքը անդամին տրամադրվում է միայն այն դեպքում, եթե նա ունի վեց ամիս կամ ավելի քիչ ապրելու ակնկալիք: Դա միջամտություն է, որը հիմնականում կենտրոնանում է ցավի և ախտանշանի կառավարման վրա՝ բուժման կամ երկարակեցության փոխարեն:

Հոսփիսի խնամքն ընդգրկում է՝

- Բուժքույրական ծառայություններ
- Ֆիզիկական, աշխատանքային կամ խոսքի ծառայություններ
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Տնային առողջապահության օգնականի և տնային տնտեսի ծառայություններ
- Բժշկական պաշարներ և սարքեր
- Որոշ դեղեր և կենսաբանական ծառայություններ (մի քանիսը կարող են հասանելի լինել Medi-Cal Rx-ի միջոցով)
- Խորհրդատվական ծառայություններ
- 24-ժամյա դրությամբ անընդմեջ բուժքույրական ծառայություններ ճգնաժամային պահերին, և ըստ անհրաժեշտության՝ անբուժելի հիվանդին տանը պահելու համար



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Ստացիոնար հանգստի խնամք մինչև հինգ շաբունակական օր յուրաքանչյուր անգամ՝ հիվանդանոցում, հմուտ բուժքույրական հաստատություններ կամ հոսփիսի հաստատությունում
- Կարճատև ստացիոնար խնամք ցավի կառավարման կամ ախտանշանի դեկավարման համար՝ հիվանդանոցում, հմուտ բուժքույրական հաստատությունում կամ հոսփիսի հաստատությունում

Blue Shield Promise-ը կարող է պահանջել, որ Դուք հոսփիսի խնամք ստանաք ներքանցային մատակարարից, բացառությամբ եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները հասանելի չեն ցանցում:

### ***Ցավամոքիչ խնամք***

Ցավամոքիչ խնամքը հիվանդի և ընտանիքի վրա կենտրոնացված խնամք է, որ բարելավում է կյանքի որակը՝ նախատեսելով, կանխարգելելով և բուժելով տառապանքը: Ցավամոքիչ խնամքը անդամից չի պահանջում ունենալ վեց ամիս կամ նվազ ապրելու ակնկալություն Ցավամոքիչ խնամքը հնարավոր է մատուցել բուժիչ խնամքի հետ միաժամանակ:

Ցավամոքիչ խնամքն ընդգրկում է՝

- Խնամքի նախնական պլանավորում
- Ցավամոքիչ խնամքի գնահատում և խորհրդատվություն
- Խնամքի ծրագիր՝ ներառյալ բոլոր լիազորված ցավամոքիչ և բուժիչ խնամքը
- Պալիատիվ խնամքի թիմը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալ անձնակազմով.
  - Բժիշկ կամ կմախքամկանային բժիշկ
  - Օգնական բժիշկ
  - Գրանցված բուժքույր
  - Արտոնագրված մասնագիտական բուժքույր կամ առաջնային խնամք տրամադրող բուժքույր
  - Սոցիալական աշխատող
  - Հոգևորական
- Խնամքի համակարգում
- Ցավի և ախտանիշների կառավարում
- Հոգեկան առողջության և բժշկական սոցիալական ծառայություններ



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):



21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասները չեն կարող միաժամանակ ստանալ և՛ պալիատիվ (բուժիչ), և՛ հոսփիսի խնամք: Եթե Դուք ստանում եք ցավամոքիչ խնամք և համապատասխանում եք հոսփիսի խնամք ստանալու չափանիշներին, կարող եք ցանկացած պահի խնդրել անցնել հոսփիսի խնամքի:

## Հիվանդանոցային բուժում

### *Անեսթեզիոլոգի ծառայություններ*

Blue Shield Promise-ը ապահովագրում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ անեսթեզիոլոգի ծառայությունները հիվանդանոցային կեցության ընթացքում: Անեսթեզիոլոգը մատակարար է, ով մասնագիտացել է հիվանդներին անզգայացում տրամադելու: Անեսթեզիան բժշկության մի տեսակ է, որն օգտագործվում է մի շարք բժշկական կամ ատամնաբուժական գործողությունների ընթացքում:

### *Ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ*

Blue Shield Promise-ն ապահովագրում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ստացիոնար հիվանդանոցային խնամքը, երբ Ձեզ հիվանդանոց են ընդունում:

### *Ամբողջ գենոմի արագ հաջորդականացում (սեքվենավորում)*

Ամբողջական գենոմի արագ հաջորդականությունը (Rapid Whole Genome Sequencing, rWGS) ապահովագրված նպաստ է Medi-Cal-ի 1 տարեկան կամ ավելի փոքր տարիքի ցանկացած անդամի համար, որը ստանում է հիվանդանոցային ծառայություններ վերակենդանացման և ինտենսիվ խնամքի բաժանմունքում: Այն ներառում է անհատական հաջորդականությունը, ծնողի կամ ծնողների և նրանց երեխայի համար եռակի հաջորդականությունը և չափազանց արագ հաջորդականությունը:

RWGS-ը հիվանդությունները ժամանակին ախտորոշելու նոր միջոց է, որը կազդի 1 տարեկան և ավելի փոքր տարիքի երեխաների վերակենդանացման և ինտենսիվ խնամքի բաժանմունքում (Intensive Care Unit, ICU) մատուցվող խնամքի վրա: Եթե Ձեր երեխան իրավասու է California Children's Services (CCS) ծրագրի համար, CCS-ը կարող է ապահովագրել հիվանդանոցում մնալը և RWGS-ը:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

### **Վիրաբուժական ծառայություններ**

Blue Shield Promise -ն ապահովագրում է հիվանդանոցում իրականացված՝ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները:

### **Հետծննդաբերական երկարացված ապահովագրություն**

Blue Shield Promise-ն ապահովագրում է ամբողջական ծածկույթը հղիության ավարտից հետո մինչև 12 ամիս՝ անկախ քաղաքացիությունից, իմիգրացիոն կարգավիճակից, եկամտի փոփոխություններից կամ այն բանից, թե ինչպես է հղիությունն ավարտվում:

### **Վերականգնողական և թերապևտիկ (թերապիա) ծառայություններ և սարքեր**

Այս նպաստը ներառում է ծառայություններ և սարքեր, որոնք կօգնեն վնասվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկական հիվանդություններ ունեցող մարդկանց մտավոր և ֆիզիկական հմտություններ ձեռք բերել կամ վերականգնել:

Blue Shield Promise-ը ապահովագրում է այս բաժնում նկարագրված վերականգնողական և թերապևտիկ ծառայությունները, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պահանջները.

- Ծառայությունները բժշկական առումով անհրաժեշտ են
- Ծառայությունները նախատեսված են առողջական խնդիրը լուծելու համար
- Ծառայություններ, որոնք օգնում են, որ պահեք, սովորեք կամ բարելավեք ունակությունները և գործունեությունները առօրյա կյանքի համար:
- Դուք ծառայությունները ստանում եք ներցանցային հաստատությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ ներցանցային բժիշկը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չի համարում, որ Դուք ծառայություններ ստանաք այլ վայրում, կամ ներցանցային հաստատությունը հասանելի չէ Ձեր առողջական խնդիրը բուժելու համար



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

**Blue Shield Promise-ն ապահովագրում է հետևյալ վերականգնողական/թերապևտիկ ծառայությունները՝**

**Աղիքային և արտաղիքային սնուցում**

Մարմնին սնունդ տալու այս մեթոդներն օգտագործվում են երբ բժշկական խնդիրն արգելում է սննդի բնականոն ընդունումը: Աղիքային և արտաղիքային սնուցման արտադրանքը կարող են ապահովագրվել Medi-Cal Rx-ի միջոցով, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է: Blue Shield Promise-ը ապահովագրում է աղիքային և արտաղիքային պոմպերն ու խողովակները, երբ դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են:

**Աշխատանքային թերապիա**

Blue Shield Promise-ն ապահովագրում է աշխատանքային թերապիայի ծառայությունները, ներառյալ՝ աշխատանքային թերապիայի գնահատման, բուժման պլանավորման, բուժման, ուսուցման և խորհրդատվության ծառայությունները: Աշխատանքային թերապիայի ծառայությունները սահմանափակվում են ամսական 2 ծառայություններով (սահմանափակումները չեն տարածվում 21 տարեկանից ցածր երեխաների վրա): Blue Shield Promise-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորում) հավելյալ ծառայություններ որպես բժշկական տեսանկյունից անհրաժեշտ:

**Ասեղնաբուժություն**

Blue Shield Promise-ն ապահովագրում է ասեղնաբուժական ծառայությունները՝ կանխարգելելու, փոփոխելու կամ մեղմացնելու համար սաստիկ, շարունակական քրոնիկ ցավի զգացողությունը, որն առաջանում է լայնորեն հայտնի բժշկական խնդրի պատճառով:

Ասեղների էլեկտրական կամ ոչ-էլեկտրական գրգռումով ամբուլատոր ասեղնաբուժական ծառայությունները սահմանափակվում են երկու ծառայությամբ մեկ ամսում: Սահմանափակումները չեն տարածվում 21 տարեկանից ցածր երեխաների վրա: Blue Shield Promise-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորում) հավելյալ ծառայություններ որպես բժշկական տեսանկյունից անհրաժեշտ:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Աուդիոլոգիա (լսողություն)**

Blue Shield Promise-ն ապահովագրում է աուդիոլոգիայի ծառայությունները: Ամբուլատոր լսաբանությունը սահմանափակվում է ամսական երկու ծառայություններով (սահմանափակումները չեն տարածվում 21 տարեկանից փոքր երեխաների վրա): Blue Shield Promise-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորում) հավելյալ ծառայություններ որպես բժշկական տեսանկյունից անհրաժեշտ:

**Բժշկական պաշարներ, սարքեր և գործիքներ**

Blue Shield Promise-ն ապահովագրում է բժշկական պարագաները, որոնք նշանակվում են բժիշկների, բժիշկ օգնականի, Առաջնային ինսանք տրամադրող բուժքույրերի և կլինիկական բուժքույրերի մասնագետների կողմից: Որոշ բժշկական պարագաներ ապահովագրված են Medi-Cal Rx-ի միջոցով, որպես Fee-for-Service (FFS) Medi-Cal-ի մաս, այլ ոչ թե Blue Shield Promise-ի: Երբ Medi-Cal Rx-ն ապահովագրում է պարագաները, մատակարարը հաշիվ է ներկայացնում Medi-Cal-ին:

Medi-Cal-ը չի ապահովագրում հետևյալը.

- Ընդհանուր կենցաղային իրեր, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով.
  - Կաշուն ժապավեն (բոլոր տեսակի)
  - Բժշկական սպիրտ
  - Կոսմետիկա
  - Բամբակյա գնդիկներ և վիրախճուճներ
  - Ցանափոշի
  - Կտորի անձեռոցիկներ
  - Witch hazel
- Ընդհանուր կենցաղային միջոցներն ընդգրկում, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝
  - Սպիտակ վազելին
  - Չոր մաշկի յուղեր և լոսյոններ
  - Տակի և տակի համակցված արտադրանք
  - Օքսիդացնող նյութեր, ինչպիսիք են ջրածնի պերօքսիդը
  - Կարբամիդի պերօքսիդ և նատրիումի պերբորատ
- Առանց դեղատոմսի շամպուններ
- Տեղական պատրաստուկներ, որոնք պարունակում են բենզոյան և սալիցիլաթթու քսուք, սալիցիլաթթվի կրեմ, քսուք կամ հեղուկ և ցինկի օքսիդի մածուկ



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Այլ ապրանքներ, որոնք հիմնականում չեն օգտագործվում առողջության պահպանման համար, և որոնք կանոնավոր և հիմնականում օգտագործվում են այն անձանց կողմից, ովքեր չունեն դրանց հատուկ բժշկական կարիքը:

***Թոքերի վերականգնում***

Blue Shield Promise-ը ապահովագրում է թոքերի վերականգնումը, եթե դա բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է և նշանակվել է բժշկի կողմից:

***Լսողական սարքեր***

Blue Shield Promise-ը ապահովագրում է լսողական օժանդակ սարքերը, եթե ստուգման եք ենթարկվել լսողական կորստի համար, լսողական սարքերը բժշկականորեն անհրաժեշտ են և դեղատոմս եք ստացել Ձեր բժշկից:

Ապահովագրությունը ծածկում է միայն Ձեր բժշկական կարիքները բավարարող ամենաեժան լսողական սարքերը: Blue Shield Promise-ը կապահովագրի մեկ լսողական սարք, բացառությամբ եթե յուրաքանչյուր ականջի համար մեկական լսողական սարք է անհրաժեշտ՝ ավելի լավ արդյունք ունենալու համար, քան այն դեպքում, եթե ունենաք մեկ լսողական սարք:

Լսողական սարքեր 21 տարեկանից ցածր անդամների համար.

Նահանգային օրենքը պահանջում է, որ մինչև 21 տարեկան երեխաները, որոնք լսողական սարքերի կարիք ունեն, ուղղորդվեն California Children’s Services (CCS) ծրագիր՝ որոշելու, թե արդյոք երեխան իրավասու է CCS-ի համար: Եթե երեխան իրավասու է CCS-ի համար, CCS-ը կհոգա բժշկականորեն անհրաժեշտ լսողական սարքերի ծախսերը: Եթե երեխան իրավասու չէ CCS-ի համար, Blue Shield Promise-ը կփոխհատուցի բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լսողական սարքերը՝ որպես Medi-Cal-ի ապահովագրության մաս:

Լսողական սարքեր 21 և ավելի բարձր տարիքի անդամների համար

Medi-Cal-ի ներքո Blue Shield Promise-ը կապահովագրի հետևյալը՝ յուրաքանչյուր ապահովագրված լսողական սարքի համար.

- Ականջի կաղապարներ, որոնք անհրաժեշտ են տեղադրման համար
- Մեկ ստանդարտ մարտկոցի փաթեթ
- Այցեր՝ համոզվելու, որ լսողական սարքը ճիշտ է աշխատում
- Այցեր՝ Ձեր լսողական սարքը մաքրելու և տեղադրելու համար
- Ձեր լսողական սարքի վերանորոգում
- Լսողական սարքերի պարագաներ և վարձույթ



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
 Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Medi-Cal-ի շրջանակներում Blue Shield Promise-ը կփոխհատուցի լսողական սարքի փոխարինումը, եթե՝

- Ձեր լսողության կորուստն այնպիսին է, որ Ձեր ներկայիս լսողական սարքը չի կարող շտկել այն
- Ձեր լսողական սարքը կորել է, գողացել են կամ կոտրվել է և հնարավոր չէ այն շտկել, և դա Ձեր մեղքը չի եղել: Դուք պետք է մեզ գրավոր տեղեկացնեք, թե ինչպես է դա տեղի ունեցել

21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասների դեպքում Medi-Cal-ը չի ապահովագրում

- Լսողական սարքի մարտկոցների փոխարինում

### ***Լոգոպեդիա***

Blue Shield Promise-ը ապահովագրում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լոգոպեդիան: Լոգոպեդիայի ծառայությունները սահմանափակվում են ամսական 2 ծառայություններով: Սահմանափակումները չեն տարածվում 21 տարեկանից ցածր երեխաների վրա: Blue Shield Promise-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորում) հավելյալ ծառայություններ որպես բժշկական տեսանկյունից անհրաժեշտ:

### ***Հմուտ բուժքույրական հաստատության ծառայություններ***

Blue Shield Promise-ը ապահովագրում է հմուտ բուժքույրական հաստատության ծառայությունները, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են, եթե Դուք հաշմանդամ եք և կարիք ունեք բարձր մակարդակի խնամքի: Այս ծառայություններն ընդգրկում են սենյակը և գիշերումը արտոնագրված հաստատությունում՝ օրական 24 ժամ հմուտ բուժքույրական խնամքի հիմքով:

### ***Սրտի վերականգնում***

Blue Shield Promise-ը ապահովագրում է սրտի վերականգնման ստացիոնար և ամբուլատոր ծառայությունները:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Վարքագծային առողջության բուժումներ**

Blue Shield Promise-ը ապահովագրում է վարքագծային առողջության բուժման (behavioral health treatment, BHT) ծառայությունները 21 տարեկանից փոքր անդամների համար՝ երեխաների և դեռահասների համար նախատեսված Medi-Cal-ի նպաստի միջոցով: BHT-ն ներառում է ծառայությունների և բուժումների ծրագրեր, ինչպիսիք են՝ վարքագծի կիրառական վերլուծությունը և ապացույցի հիմքով վարքագծի միջամտության ծրագրերը, որոնք զարգացնում կամ վերականգնում են (գործնականում հնարավոր առավելագույն չափով) մինչև 21 տարեկան անհատի գործունեությունը:

BHT ծառայությունները սովորեցնում են հմտություններ՝ օգտագործելով վարքագծային դիտարկումը և ամրապնդումը կամ նպատակային վարքագծի յուրաքանչյուր քայլ սովորեցնելու հուշման միջոցով: BHT ծառայությունները հիմնվում են վստահելի ապացույցի վրա: Դրանք չունեն փորձարարական բնույթ: BHT ծառայությունների օրինակներ են վարքագծային միջամտությունները, ճանաչողական վարքագծային միջամտական փաթեթները, համապարփակ վարքագծային բուժումը և վարքագծի կիրառական վերլուծությունը:

BHT ծառայությունները պետք է լինեն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ, նշանակված արտոնագրված բժշկի կամ հոգեբանի կողմից, վավերացված Blue Shield Promise-ի կողմից և մատուցված այնպիսի եղանակով, որը համապատասխանում է հաստատված ծրագրին:

**Տեսական օգտագործման բժշկական սարքեր (DME)**

Blue Shield Promise-ն ապահովագրում է DME պաշարների, սարքերի և այլ ծառայությունների գնումը կամ վարձակալումը՝ բժշկի, բժշկի օգնականի, առաջնային խնամք տրամադրող բուժքույրի և կլինիկական բուժքրոջ մասնագետի դեղատոմսով: Դեղատոմսով նշանակված DME-ի իրերն ապահովագրված են որպես բժշկական տեսանկյունից անհրաժեշտ՝ պահպանելու մարմնի գործառույթները, որոնք կենսական են առօրյա գործունեությունների համար կամ ֆիզիկական գլխավոր հաշմանդամության կանխարգելման նպատակով:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Ընդհանուր առմամբ, Blue Shield Promise-ը չի ապահովագրում հետևյալը.

- Հարմարավետ, հարմար կամ շքեղ սարքավորումներ, գործառույթներ և պարագաներ, բացառությամբ կրծքի մանրածախ կթիչների, որոնք ավելի վաղ նկարագրված են այս գլխի «Մայրական և նորածինների խնամքը» բաժնում «Կրծքի կթիչներ և պարագաներ» վերնագրի ներքո:
- Առօրյա կյանքի բնականոն գործունեության պահպանման համար չնախատեսված իրեր, ինչպիսիք են մարզասարքերը (ներառյալ սարքերը, որոնք նախատեսված են հանգստի կամ մարզական գործունեության լրացուցիչ աջակցություն տրամադրելու համար)
- Հիգիենայի սարքավորումներ, բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է 21 տարեկանից ցածր անդամի համար
- Ոչ բժշկական պարագաներ, ինչպիսիք են սաունայի լոգարանները կամ վերելակները
- Փոփոխություններ Ձեր տան կամ մեքենայի մեջ
- Արյան կամ մարմնի այլ նյութերի փորձարկման սարքեր (շաքարախտի արյան գլյուկոզայի ցուցասարքերը, գլյուկոզայի շարունակական մոնիտորինգի ցուցասարքեր, ստուգման երիզներ և նշտարները ապահովագրված են Medi-Cal Rx-ով)
- Սրտի կամ թոքերի էլեկտրոնային ցուցասարքեր, բացառությամբ մանկական շնչականգի ցուցասարքերի
- Սարքավորումների վերանորոգում կամ փոխարինում կորստի, գողության կամ չարաշահման հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է մինչև 21 տարեկան անդամի համար
- Այլ իրեր, որոնք հիմնականում չեն օգտագործվում առողջության պահպանման համար

Որոշ դեպքերում, այս պարագաները կարող են հաստատվել, երբ Ձեր բժիշկը դիմում է ներկայացնում նախավավերացման (նախնական լիազորության) համար:

***Տնային առողջական ծառայություններ***

Blue Shield Promise-ն ապահովագրում է առողջական ծառայությունները, որոնք մատուցվում են Ձեր տանը, երբ դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և նշանակվում են Ձեր բժշկի կամ բժշկի օգնականի, բուժքույրի կամ կլինիկական բուժքրոջ կողմից:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



Տնային առողջական ծառայությունները սահմանափակվում են միայն այն ծառայություններով, որոնք Medi-Cal-ն ապահովագրում է, ներառյալ՝

- Կես դրույքով հմուտ բուժքույրական խնամք
- Կես դրույքով տնային առողջության օգնական
- Որակավորված ֆիզիկական, մասնագիտական թերապիա և լոգոպեդիա
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Բժշկական պաշարներ

### ***Օստոմիա և ուրոլոգիական պաշարներ***

Blue Shield Promise-ն ապահովագրում է օստոմիայի տոպրակները, միզային կաթետերները, դրենաժային տոպրակները, լվացման պաշարները և կաչուն նյութերը: Սա չի ներառում հանգստի, հարմարավետության կամ պերճանքի սարքեր, հատուկ գովազդված իրեր և պաշարներ:

### ***Օրթեզ/պրոթեզ***

Blue Shield Promise-ն ապահովագրում է օրթեզի և պրոթեզի սարքերը և ծառայությունները, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և նշանակվել են Ձեր բժշկի, ոտնաբույժի, ատամնաբույժի, կամ ոչ-բժիշկ բժշկական մատակարարի կողմից: Դրանք ներառում են փոխպատվաստված լսողական սարքերը, կրծքի պրոթեզները/մաստէկտոմիայի կրծկալները, այրվածքի սեղմիչ հանդերձանքը և մարմնի գործառնություն կամ մարմնի անդամը վերականգնող կամ մարմնի թուլացած կամ դեֆորմացված մասին աջակցող պրոթեզները:

### ***Ֆիզիկական թերապիա***

Blue Shield Promise-ը ապահովագրում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ֆիզիկական թերապիայի ծառայությունները, ներառյալ՝ ֆիզիկական թերապիայի գնահատում, բուժման պլանավորում, բուժում, ուսուցում, խորհրդատվական ծառայություններ և տեղային դեղերի կիրառում:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Սեռափոխության ծառայություններ

Blue Shield Promise-ը ապահովագրում է սեռափոխության ծառայությունները (սեռի հաստատման ծառայություններ) որպես նպաստ, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են կամ երբ ծառայությունը բավարարում է վերականգնողական վիրահատության կանոնները:

## Կլինիկական փորձարկումներ

Blue Shield Promise-ը ապահովագրում է հիվանդների ընթացիկ խնամքի ծախսերը կլինիկական փորձարկումներում ընդգրկված հիվանդների համար, ներառյալ քաղցկեղի բուժման կլինիկական փորձարկումները, որոնք ընդունված են Միացյալ Նահանգներում և թվարկված են այստեղ՝ <https://clinicaltrials.gov> : Medi-Cal Rx-ը՝ FFS Medi-Cal-ի մասը, ապահովագրում է ամբուլատոր դեղատոմսով դուրս գրվող դեղերի մեծ մասը: Հավելյալ տեղեկություններ ստանալու համար կարդացեք «Ամբուլատոր դեղատոմսային դեղերը» այս գլխի հետագա բաժիններում:

## Լաբորատոր և ռադիոլոգիական ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է լաբորատոր և ռենտգեն պատկերումի ամբուլատոր և ստացիոնար ծառայությունները, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են: Պատկերման տարբեր ընդլայնված բուժգործողություններ, ինչպիսիք են CT սկանավորումը, MRI-ները և PET սկանավորումներն ապահովագրվում են՝ ելնելով բժշկական անհրաժեշտությունից:

## Կանխարգելիչ և քաջատողջության ծառայություններ և քրոնիկական հիվանդության կառավարում

Blue Shield Promise-ն ապահովագրում է՝

- Պատվաստման գործընթացի խորհրդատվական կոմիտեի (Advisory Committee for Immunization Practices, ACIP) կողմից խորհուրդ տրվող պատվաստումներ
- Ընտանիքի պլանավորման ծառայությունները
- Մանկաբույժների ամերիկյան ակադեմիայի «Bright Futures» առաջարկությունները ([https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity\\_schedule.pdf](https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf))
- Մանկության անբարենպաստ փորձառությունների (ACE) սքրինինգ



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Ասթմայի կանխարգելիչ ծառայություններ
- Կանանց համար կանխարգելիչ ծառայություններ մանկաբարձ-գինեկոլոգների ամերիկյան քոլեջի կողմից
- Օգնություն ծխելուց հրաժարվելու հարցում, որը կոչվում է նաև ծխելը դադարեցնելու ծառայություններ
- Միացյալ Նահանգների կանխարգելիչ ծառայությունների աշխատանքային խմբի (United States Preventive Services Task Force) Ա և Բ մակարդակների համար խորհուրդ տրվող կանխարգելիչ ծառայությունները

**Ընտանիքի պլանավորման ծառայություններ**

Ընտանիքի պլանավորման ծառայությունները մատուցվում են մանկածնության տարիքի անդամներին, որպեսզի կարողանան որոշել երեխաների քանակը և նրանց ծննդյան ամսաթվերի միջև եղած տարբերությունը: Այս ծառայությունները ներառում են Մննդի և դեղորայքի վարչության (Food and Drug Administration, FDA) կողմից վավերացված բոլոր հակաբեղմնավորիչ միջոցները: Blue Shield Promise-ի PCP-ն և մանկաբարձության/գինեկոլոգիայի մասնագետները հասանելի են ընտանիքի ծրագրման ծառայությունների համար:

Ընտանիքի պլանավորման ծառայությունների համար Դուք կարող եք ընտրել Medi-Cal-ի ցանկացած բժիշկ կամ կլինիկա, որը Blue Shield Promise-ի ցանցում չէ՝ առանց նախնական հաստատում (նախնական լիազորում) ստանալու: Blue Shield Promise-ից: Եթե Դուք ընտանիքի պլանավորման ծառայություններ եք ստանում ցանցից դուրս գործող մատակարարից, այդ ծառայությունները կարող են չապահովագրվել: Ավելին իմանալու համար զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

**Քրոնիկ հիվանդությունների կառավարում**

Blue Shield Promise-ը նաև ծածկում է քրոնիկ հիվանդությունների կառավարման ծրագրեր, որոնք կենտրոնացած են հետևյալ խնդիրների վրա՝

- Շաքարախտ
- Սրտանոթային հիվանդություն
- Ասթմա

21 տարեկանից ցածր տարիքի անդամների կանխարգելիչ խնամքի մասին տեղեկությունների համար կարդացեք այս տեղեկագրի 5-րդ գլուխը՝ «Երեխաների և երիտասարդների խնամք»:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Շաքարախտի կանխարգելման ծրագիր

Շաքարախտի կանխարգելման ծրագիրը (DPP) ապացույցի վրա հիմնված ապրելակերպի փոփոխության ծրագիր է: Այս 12-ամյա ծրագիրը կենտրոնացած է ապրելակերպի փոփոխության վրա: Այն նախատեսված է կանխարգելելու կամ հետաձգելու 2-րդ տիպի շաքարախտի առաջացումը նախադիաբետով ախտորոշված անձանց մոտ: Այն կարող է իրավասու անդամների համար երկարաձգվել մինչև երկու տարի: Ծրագիրը տրամադրում է կրթություն և խմբային աջակցություն: Մեթոդները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- Նույն տարիքի մարզիչ տրամադրելով
- Ինքնավերահսկման և խնդիրների լուծման ուսուցմամբ
- Խրախուսման և հետադարձ կապի տրամադրմամբ
- Նպատակակետերին աջակցելու համար նախատեսված տեղեկատվական նյութերի տրամադրմամբ
- Նպատակների իրականացման համար սովորական միջամտություններին հետևելով

DPP-ին միանալու համար անդամները պարտավոր են բավարարել որոշ կանոններ: Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 հեռախոսահամարով՝ տեղեկանալու, թե արդյոք իրավունակ եք ծրագրի համար:

## Վերականգնողական ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է վիրահատությունը՝ շտկելու կամ վերականգնելու մարմնի անբնականոն կառուցվածքները, որպեսզի բարելավվի կամ ստեղծի հնարավորինս բնականոն տեսք: Մարմնի անբնականոն կառուցվածքներն այն կառուցվածքներն են, որոնք առաջանում են բնածին արատների, զարգացման անոմալիաներից, վնասվածքի, վարակի, ուռուցքների, հիվանդությունների կամ հիվանդության բուժման հետևանքով, որոնք հանգեցրել են մարմնի կառուցվածքի կորստի, օրինակ՝ մաստէկտոմիա: Կարող են կիրառվել որոշ սահմանափակումներ և բացառություններ:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Թմրանյութերի օգտագործման խանգարման ստուգման ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է.

- Ալկոհոլի և թմրամիջոցների զննում, գնահատում, համառոտ միջամտություններ և բուժման ուղեգիր (SABIRT)

Վարչաշրջանի միջոցով բուժման ապահովագրության համար կարդացեք «Թմրանյութերի օգտագործման խանգարման բուժման ծառայությունները» ստորև այս գլխում:

## Տեսողության նպաստներ

Blue Shield Promise-ն ապահովագրում է.

- Աչքի ընթացիկ հետազոտություն 24 ամիսը մեկ անգամ: Աչքի ավելի հաճախակի հետազոտություններն ապահովագրվում են, եթե դա բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է անդամների համար, օրինակ՝ շաքարային դիաբետով հիվանդների դեպքում
- Ակնոցներ (շրջանակներ և ոսպնյակներ) 24 ամիսը մեկ անգամ վավեր դեղատոմսով
- Ակնոցների փոխարինում 24 ամսվա ընթացքում, եթե դեղատոմսի փոփոխություն ունեք կամ Ձեր ակնոցները կորել են, գողացվել կամ կոտրվել են (և չեն կարող շտկվել), և դա Ձեր մեղքը չէ: Դուք պետք է մեզ գրավոր տեղեկացնեք, թե ինչպես են Ձեր ակնոցները կորել, գողացվել կամ կոտրվել:
- Ցածր տեսողության սարքեր, եթե ունեք տեսողության խանգարում, որն ազդում է առօրյա գործողություններ կատարելու Ձեր կարողության վրա (օրինակ՝ տարիքային մակույթի դեգեներացիա), իսկ ստանդարտ ակնոցները, կոնտակտային ոսպնյակները, դեղորայքը կամ վիրահատությունը չեն կարող շտկել Ձեր տեսողության խանգարումը:
- Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ կոնտակտային ոսպնյակներ: Կոնտակտային ոսպնյակների փորձարկումը և կոնտակտային ոսպնյակները կարող են ապահովագրվել, եթե ակնոցների օգտագործումը հնարավոր չէ աչքի հիվանդության կամ վիճակի պատճառով (այսինքն՝ ականջի բացակայությունը): Բժշկական վիճակները, որոնք համապատասխանում են հատուկ հպովի ոսպնյակների օգտագործմանը, ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ անիրիդիա, աֆակիա և կերատոկոնուս:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Փոխադրման նպաստներ այն իրավիճակների համար, որոնք արտակարգ իրավիճակներ չեն

Դուք կարող եք ստանալ բժշկական փոխադրում, եթե ունեք բժշկական կարիքներ, որոնք թույլ չեն տալիս օգտագործել մեքենա, ավտոբուս, գնացք կամ տաքսի՝ Ձեր բժշկական խնամքի այցերին գնալու համար: Դուք կարող եք բժշկական փոխադրում ստանալ ապահովագրված ծառայությունների և Medi-Cal-ի ապահովագրված դեղատան ժամադրությունների համար: Դուք կարող եք բժշկական փոխադրում խնդրել՝ խնդրելով դրա համար Ձեր բժշկին, ատամնաբույժին, ոտնաբույժին կամ հոգեկան առողջության կամ թմրամիջոցների օգտագործման խանգարումների մատակարարին: Ձեր բժիշկը կորոշի փոխադրման ճիշտ տեսակը՝ Ձեր կարիքները բավարարելու համար:

Եթե նրանք գտնեն, որ Ձեզ անհրաժեշտ է բժշկական փոխադրում, նրանք կնշանակեն այն՝ լրացնելով ձևաթուղթը և կներկայացնելով այն Blue Shield Promise-ին:

Վավերացնելուց հետո թույլտվությունը ուժի մեջ է 12 ամիս՝ կախված բժշկական կարիքից: Հաստատվելուց հետո Դուք կարող եք ստանալ այնքան ուղևորություններ, որքան անհրաժեշտ է: Ձեր բժիշկը պետք է վերագնահատի բժշկական փոխադրման Ձեր բժշկական կարիքը և, եթե կիրառելի է, վերահաստատի բժշկական փոխադրման Ձեր դեղատոմսը, երբ այն սպառվի, եթե Դուք դեռ իրավունք ունեք: Ձեր բժիշկը կարող է կրկին հաստատել բժշկական փոխադրումը մինչև 12 ամիս կամ ավելի պակաս ժամկետի համար:

Բժշկական փոխադրումը ենթադրում է փոխադրում շտապ օգնության մեքենայի, սանիտարական մեքենայի կամ անվասայլակ տեղափոխող մեքենայի միջոցով կամ օդային ճանապարհով փոխադրում: Blue Shield Promise-ը թույլատրում է ամենաեժան բժշկական փոխադրումը Ձեր բժշկական կարիքների համար, երբ Ձեզ փոխադրություն է հարկավոր Ձեր ժամադրության համար: Մա նշանակում է, օրինակ, որ եթե ֆիզիկապես կամ բժշկական տեսանկյունից կարող եք անվաթոռի համար նախատեսված միկրոավտոբուսով փոխադրվել, Blue Shield Promise-ը չի վճարի շտապօգնության մեքենայի համար: Դուք օդային փոխադրման իրավունք ունեք միայն այն դեպքում, եթե Ձեր բժշկական խնդիրն անհնար է դարձնում որևէ տեսակի ցամաքային փոխադրում:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Դուք կստանաք բժշկական փոխադրում, եթե.

- Այն անհրաժեշտ է ֆիզիկական կամ բժշկակ կարիքներից ելնելով, բժշկի կամ այլ մատակարարի գրավոր լիազորումով, քանի որ Դուք ֆիզիկապես կամ բժշկական տեսանկյունից չեք կարող օգտվել մեքենայից, ավտոբուսից, գնացքից կամ տաքսիից՝ Ձեր ժամադրությանը գնալու համար
- Ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամության պատճառով Ձեզ անհրաժեշտ է վարորդի օգնությունը՝ դեպի Ձեր տուն, մեքենա կամ բուժման վայր գնալու և վերադառնալու համար:

Բժշկական փոխադրում խնդրելու համար, որը Ձեր բժիշկը նշանակել է ոչ հրատապ (ընթացիկ) այցերի համար, զանգահարեք Blue Shield Promise -ին 1-877-433-2178 (TTY 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր կամ 1-800-605-2556 (TTY 711) երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից մինչև 18:00՝ Ձեր ժամադրությունից առնվազն 24 ժամ առաջ: Հրատապ ժամադրությունների համար զանգահարեք որքան հնարավոր է շուտ: Զանգահարելուց Ձեր Blue Shield Promise-ի անդամի նույնականացման (ID) քարտը պատրաստ պահեք:

### Բժշկական փոխադրման սահմանափակումները

Blue Shield Promise-ը տրամադրում է ամենաէժան բժշկական փոխադրումը, որը բավարարում է Ձեր բժշկական կարիքները, Ձեր տանը ամենամոտ մատակարարի մոտ, որտեղ հնարավոր է ժամադրություն վերցնել: Դուք չեք կարող բժշկական փոխադրում ստանալ, եթե Medi-Cal-ը չի ապահովագրում Ձեր ստացած ծառայությունը, կամ դա Medi-Cal-ով ապահովագրված դեղատան ժամադրություն չէ: Ապահովագրվող ծառայությունների ցանկը ներկայացված է այս տեղեկագրի 4-րդ գլխի «Նպաստներ և ծառայություններ» բաժնում:

Եթե Medi-Cal-ը ապահովագրում է ժամադրության տեսակը, բայց ոչ առողջապահական ծրագրի միջոցով, Blue Shield Promise-ը չի ապահովագրի բժշկական փոխադրումը, բայց կարող է օգնել Ձեզ պլանավորել Ձեր փոխադրումը Medi-Cal-ի միջոցով: Փոխադրումը չի ապահովագրվում Blue Shield Promise-ի ցանցից կամ սպասարկման տարածքից դուրս, բացառությամբ եթե նախապես հաստատված չէ Blue Shield Promise-ի կողմից: Հավելյալ տեղեկություններ ստանալու կամ բժշկական փոխադրում խնդրելու համար զանգահարեք Blue Shield Promise 1-877-433-2178 (TTY 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր կամ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից մինչև 18:00:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Ծախս անդամի համար**

Ոչ մի ծախս չկա, եթե փոխադրումը կազմակերպվում է Blue Shield Promise-ի կողմից:

***Ինչպես ստանալ ոչ-բժշկական փոխադրում***

Ձեր նպաստները ներառում են դեպի ժամադրության վայր ճանապարհորդություն, եթե ժամադրությունը Medi-Cal-ի ապահովագրված ծառայությունների համար է, և Դուք չունեք փոխադրումից օգտվելու հնարավորություն: Դուք կարող եք անվճար ուղևորության հնարավորություն ստանալ, եթե դիմել եք փոխադրման համար բոլոր այլ ուղիներով և.

- Medi-Cal-ի ապահովագրված ծառայության համար Ձեր մատակարարի լիազորումով նշանակված ժամադրության եք գնում և այնտեղից վերադառնում կամ
- Վերցնում եք դեղատոմսային դեղեր և բժշկական պաշարներ

Blue Shield Promise-ը Ձեզ թույլ է տալիս օգտվել մեքենայից, տաքսիից, ավտոբուսից կամ այլ հանրային կամ մասնավոր միջոցներից՝ Ձեր բժշկական ժամադրություններին գնալու նպատակով Medi-Cal-ի կողմից ապահովագրված ծառայությունների համար: Blue Shield Promise-ը կապահովագրի ոչ-բժշկական փոխադրման ամենաէժան տարբերակը, որը համապատասխանում է Ձեր կարիքներին: Երբեմն Blue Shield Promise-ը կարող է փոխհատուցել Ձեր կողմից պատվիրված մասնավոր մեքենայով երթևեկելու համար: Blue Shield Promise-ը պետք է հաստատի սա նախքան երթևեկելը:

Դուք պետք է ասեք մեզ, թե ինչու չեք կարող երթևեկել այլ կերպ, օրինակ՝ ավտոբուսով: Կարող եք զանգահարել, էլեկտրոնային փոստով գրել կամ անձամբ հայտնել մեզ: Եթե Դուք հնարավորություն ունեք փոխադրմանը կամ կարող եք մեքենայով հասնել ժամադրությանը, Blue Shield Promise-ը Ձեզ չի փոխհատուցի: Այս նպաստը միայն այն անդամների համար է, ովքեր չենք կարող օգտվել փոխադրումից: Վազքը փոխհատուցելու համար Դուք պետք է ներկայացնեք հետևյալ վարորդական փաստաթղթերի պատճենները.

- Վարորդական իրավունք,
- Տրանսպորտային միջոցների գրանցում և
- Մեքենայի ապահովագրության վկայագիր



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



Լիազորված ծառայություններ ստանալու նպատակով ուղևորություն խնդրելու համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-877-433-2178 (TTY 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր կամ 1-800-605-2556 (TTY 711) երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00՝ Ձեր ժամադրությունից առնվազն 24 ժամ առաջ, կամ որքան հնարավոր է շուտ, եթե ժամադրությունը հրատապ է: Չանգահարելուց Ձեր Blue Shield Promise-ի անդամի նույնականացման (ID) քարտը պատրաստ պահեք:

**Նշում.** Ամերիկացի հնդկացիները կարող են նաև կապ հաստատել իրենց Հնդկացիների առողջապահական մատակարարի հետ՝ խնդրելու համար ոչ բժշկական փոխադրում:

### Ոչ-բժշկական փոխադրման սահմանափակումները

Blue Shield Promise-ը տրամադրում է ամենաէթան բժշկական փոխադրումը, որը բավարարում է Ձեր բժշկական կարիքները, Ձեր տանը ամենամոտ մատակարարի մոտ, որտեղ հնարավոր է ժամադրություն վերցնել: Անդամները չեն կարող իրենք վարել մեքենան կամ ուղղակիորեն փոխհատուցվել ոչ բժշկական փոխադրումների համար: Ավելի իմանալու համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-877-433-2178 (TTY 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր կամ 1-800-605-2556 հեռախոսահամարով:

### Ոչ բժշկական փոխադրումը չի կիրառվում, եթե՝

- Շտապօգնության մեքենա, զուգարանով միկրոավտոբուս, անվաթոռով միկրոավտոբուս կամ բժշկական փոխադրման այլ ձև է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ Medi-Cal-ի ապահովագրված ծառայության գնալու համար:
- Ֆիզիկական կամ առողջական խնդրի պատճառով Ձեզ անհրաժեշտ է վարորդի օգնությունը՝ դեպի տուն, մեքենա կամ բուժման վայր գնալու և վերադառնալու համար:
- Դուք անվասայլակ եք օգտագործում և ի վիճակի չեք տեղափոխվել և դուրս գալ մեքենայից՝ առանց վարորդի օգնության
- Medi-Cal-ը չի ապահովագրում ծառայությունը

### Ծախս անդամի համար

Ոչ մի ծախս չկա, եթե ոչ բժշկական փոխադրումը կազմակերպվում է Blue Shield Promise-ի կողմից:



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

### Երթևեկելու ծախսեր

Որոշ դեպքերում, երբ պետք է գնաք բժշկի այցերի, որոնք Ձեր տան մոտ հասանելի չեն, Blue Shield Promise-ը կարող է ապահովագրել ուղևորության այնպիսի ծախսերը, ինչպիսիք են սնունդը, հյուրանոցում մնալը և հարակից այլ ծախսեր, օրինակ՝ ավտոկայանատեղը, վճարները և այլն: Այս ուղևորության ծախսերը կարող են ապահովագրվել նաև այն անձի համար, որը ճանապարհորդում է Ձեզ հետ, որպեսզի օգնի Ձեզ ժամադրության հարցում, կամ այն անձի համար, որը Ձեզ օրգան է նվիրաբերում օրգանի փոխպատվաստման համար: Դուք պետք է ստանաք նախնական հաստատում (նախնական լիազորում) այս ծառայությունների համար՝ կապվելով Blue Shield Promise-ի հետ 1-877-433-2178 (TTY 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր կամ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

### Ատամնաբուժական ծառայություններ

Medi-Cal-ն օգտագործում է կառավարվող խնամքի ծրագրեր՝ Ձեր ատամնաբուժական ծառայությունները տրամադրելու համար: Ավելին իմանալու համար այցելեք Health Care Options՝ <http://dhcs.ca.gov/mymedi-cal>: Դուք կարող եք մնալ Fee-for-Service Dental-ում կամ կարող եք ընտրել Ատամների կառավարվող խնամքը: Ձեր ատամնաբուժական ծրագիրը ընտրելու կամ փոխելու համար զանգահարեք Առողջական խնամքի ընտրանքներ 1-800-430-4263 համարով: Հնարավոր է, որ Դուք միաժամանակ գրանցված չլինեք PACE կամ SCAN ծրագրում և ատամնաբուժական կառավարվող խնամքի ծրագրում: Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելին իմանալ Fee-for-Service ատամնաբուժական ծառայությունների մասին, զանգահարեք Medi-Cal Dental՝ 1-800-322-6384 (TTY 1-800-735-2922 կամ 711) հեռախոսահամարով: Կարող եք նաև այցելել Medi-Cal Dental-ի կայքը հետևյալ հասցեով՝ <https://www.dental.dhcs.ca.gov>:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Medi-Cal-ն ապահովագրում է մի շարք ատամնաբուժական ծառայություններ, ներառյալ՝

- Ախտորոշիչ և կանխարգելիչ ատամնաբուժական ծառայություններ, օրինակ՝ քննություններ, ռենտգեն պատկերումներ և ատամների մաքրում
- Ցավի կառավարման համար արտակարգ իրավիճակի ծառայություններ
- Ատամի հեռացումներ
- Ատամնալիցքեր
- Ատամնաբուժական խողովակի բուժումներ (առաջամասի/հետին)
- Ատամնաշապիկներ (նախօրոք պատրաստված/լաբորատոր)
- Ատամնաքարի և լնդատակի մաքրում
- Ամբողջական և մասնակի ատամնաշարեր
- Իրավասու երեխաների համար ատամնաշարի ուղղման ծառայություններ
- Տեղային ֆտորիդ

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելին իմանալ ատամնաբուժական ծառայությունների մասին և անդամագրված եք Ատամնաբուժական կառավարվող խնամքի ծրագրում, զանգահարեք Ձեր նշանակված Ատամնաբուժական կառավարվող խնամքի ծրագիր:

## Blue Shield Promise-ի այլ ապահովագրված նպաստներ և ծրագրեր

### Երկարաժամկետ ծառայություններ և աջակցություններ

Blue Shield Promise-ը իրավունակ անդամների դեպքում ապահովագրում է երկարաժամկետ խնամքի ծառայությունները և աջակցությունը հետևյալ տեսակների երկարատև խնամքի հաստատություններում կամ տներում.

- Հմուտ բուժբույրական հաստատության ծառայություններ, ինչպես վավերացվել են Blue Shield Promise-ի կողմից
- Թերապևտիկ խնամքի հաստատության ծառայություններ (ներառյալ չափահասների և մանկաբուժական)՝ հաստատված Blue Shield Promise-ի կողմից
- Միջանկյալ խնամքի հաստատության ծառայությունները Blue Shield Promise-ը հաստատում է, ներառյալ՝
  - Միջանկյալ խնամքի հաստատություն/զարգացման արատ ունեցող անձինք (Intermediate care facility/developmentally disabled, ICF/DD)



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Միջանկյալ խնամքի հաստատություն/զարգացման արատ ունեցող անձինք, հաբիլիտատիվ (Intermediate care facility/developmentally disabled-habilitative, ICF/DD-H) և
- Միջանկյալ խնամքի հաստատություն/զարգացման հաշմանդամություն ունեցող. բուժքույրական (ICF/DD-N)

Եթե Դուք որակավորվում եք երկարատև խնամքի ծառայությունների համար, Blue Shield Promise-ը կերաշխավորի, որ Դուք տեղավորվեք առողջապահական հաստատությունում կամ տանը, որն ապահովում է Ձեր բժշկական կարիքներին առավելագույնս համապատասխան խնամքի մակարդակը:

Երկարատև խնամքի ծառայությունների վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

### Հիմնական խնամքի կառավարում

Բազմաթիվ մատակարարներից կամ տարբեր առողջապահական համակարգերում խնամք ստանալը բարդ է: Blue Shield Promise-ը ցանկանում է համոզվել, որ անդամները ստանում են բոլոր բժշկական անհրաժեշտ ծառայությունները, դեղատոմսային դեղերը և վարքագծային առողջության ծառայությունները: Blue Shield Promise-ը կարող է Ձեզ անվճար օգնել համակարգել և կառավարել Ձեր առողջական կարիքները: Այս օգնությունը հասանելի է նույնիսկ այն դեպքում, երբ մեկ այլ ծրագիր է ապահովագրում ծառայությունները:

Դժվար է պարզել, թե ինչպես կարելի է բավարարել Ձեր առողջապահական կարիքները հիվանդանոցից դուրս գալուց հետո, կամ եթե խնամք եք ստանում տարբեր համակարգերում: Ահա մի քանի տարբերակներ, թե ինչպես է Blue Shield Promise-ը կարող օգնել Ձեզ.

- Եթե հիվանդանոցից դուրս գրվելուց հետո Դուք դժվարանում եք ստանալ հետհիվանդանոցային խնամք կամ դեղորայք, Blue Shield Promise-ը կարող է օգնել Ձեզ:
- Եթե Դուք օգնության կարիք ունեք անձամբ հանդիպելու համար, Blue Shield Promise-ը կարող է օգնել Ձեզ ստանալ անվճար փոխադրում:

Եթե Ձեր կամ Ձեր երեխայի առողջության վերաբերյալ ունեք հարցեր կամ մտահոգություններ, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Համալիր խնամքի կառավարում (CCM)

Առողջության ավելի բարդ կարիքներ ունեցող անդամները կարող են որակավորվել խնամքի համակարգման վրա կենտրոնացած լրացուցիչ ծառայությունների համար: Blue Shield Promise-ն առաջարկում է Համալիր խնամքի կառավարման (Complex Care Management, CCM) ծառայություններ բարձր ռիսկի խմբի անդամներին:

Համալիր խնամքի կառավարման (CCM) անդամագրման չափանիշները.

- Հիմնական օրգանի փոխապատվաստում
- Խոշոր տրավմա
- Չորս կամ ավելի քրոնիկական առողջական խնդիրներ
- Երեք կամ ավելի ընդունում 12 ամսվա ընթացքում
- Կրկնակի ընդունումը 30 օրվա ընթացքում՝ նույն կամ համանման ախտորոշմամբ կամ վիճակով
- Բազմազան դեղերի օգտագործումը բաղկացած է ավելի քան 30 դեղատոմսից եռամսյակում
- Քաղցկեղի ախտորոշում, որը պահանջում է բուժման բազմաթիվ եղանակներ՝ բազմաթիվ առարկաների համալիր խնամքի համակարգմամբ

Եթե Դուք անդամագրված եք CCM-ում կամ Ընդլայնված խնամքի կառավարման ծրագրում (կարդացեք ստորև), ապա Blue Shield Promise-ը պետք է համոզվի, որ Դուք ունեք նշանակված խնամքի կառավարիչ, որը կարող է օգնել Ձեզ վերը նկարագրված հիմնական խնամքի կառավարման և այլ հասանելի անցումային խնամքի աջակցությունների հարցում, եթե Դուք դուրս եք գրվել հիվանդանոցից, մասնագիտացված բուժքույրական հաստատությունից, հոգեբուժարանից կամ ավարտել եք ստացիոնար բուժումը:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Խնամքի ընդլայնված կառավարում (ECM)

Blue Shield Promise-ն ապահովագրում է Խնամքի ընդլայնված կառավարման (Enhanced Care Management, ECM) ծառայությունները խիստ բարդ կարիքներ ունեցող անդամների համար: ECM-ն ունի լրացուցիչ ծառայություններ, որոնք կօգնեն Ձեզ ստանալ այն խնամքը, որն անհրաժեշտ է առողջ մնալու համար: Այն համակարգում է բժիշկների և այլ մատակարարների կողմից իրականացվող Ձեր խնամքը: ECM-ն օգնում է համակարգել առաջնային և կանխարգելիչ խնամքը, կարճատև, բայց ծանր վնասվածքի կամ հիվանդության ակտիվ խնամքը, վարքագծային առողջությունը, զարգացման, բերանի խոռոչի առողջությունը, համայնքահեն երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունը (long-term services and supports, LTSS) և ուղեգրերը համայնքի հասանելի ռեսուրսներին:

Եթե Դուք իրավասու լինեք, Ձեզ հետ կարող են կապ հաստատել ECM ծառայությունների կապակցությամբ: Կարող եք նաև զանգահարել Blue Shield Promise որպեսզի պարզեք, թե արդյոք և երբ կարող եք ստանալ ECM: Կամ խոսեք Ձեր բուժաշխատողի հետ: Նրանք կարող են պարզել, թե արդյոք Դուք համապատասխանում եք ECM-ին կամ ուղղորդել Ձեզ խնամքի կառավարման ծառայությունների համար:

### *Ապահովագրված ECM ծառայություններ*

Եթե Դուք որակավորվում եք ECM-ի համար, Դուք կունենաք խնամքի Ձեր սեփական խումբը և առաջատար խնամքի կառավարիչ: Նրանք կխոսեն Ձեր և Ձեր բժիշկների, մասնագետների, դեղագործների, գործերի կառավարիչների, սոցիալական ծառայությունների մատակարարների և այլոց հետ: Նրանք հետևում են, որ բոլորը համագործակցեն՝ Ձեզ անհրաժեշտ խնամք տրամադրելու համար: Խնամքի առաջատար կառավարիչը կարող է նաև օգնել Ձեզ գտնել և դիմել Ձեր համայնքում այլ ծառայությունների համար: ECM-ը ներառում է.

- Տեղեկությունների տրամադրում և ներգրավվածություն
- Համապարփակ գնահատում և խնամքի կառավարում
- Խնամքի ընդլայնված համակարգում



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Առողջության խթանում
- Համապարփակ անցումային խնամք
- Անդամների և ընտանեկան աջակցության ծառայություններ
- Համակարգում և ուղեգրեր համայնքային և սոցիալական աջակցությունների համար

Պարզելու համար, թե արդյոք ECM-ը կարող է ճիշտ լինել Ձեզ համար, խոսեք Ձեր Blue Shield Promise-ի ներկայացուցչի կամ առողջապահական խնամքի մատակարարի հետ:

### ***Ծախս անդամի համար***

Անդամը ոչինչ չի վճարի ECM ծառայությունների համար:

### **Համայնքային օժանդակություններ**

Դուք կարող եք իրավասու լինել որոշակի Համայնքային օժանդակության ծառայություններ ստանալու համար, եթե դա կիրառելի է: Համայնքային օժանդակությունները բժշկական տեսանկյունից համապատասխան և ծախսարդյունավետ այլընտրանքային ծառայություններ կամ կարգավորումներ են, որոնք նախատեսված են Medi-Cal State Plan-ի ներքո: Անդամների համար այս ծառայությունները պարտադիր չեն: Եթե Դուք որակավորվում և համաձայնում եք ստանալ այս ծառայությունները, դրանք կարող են օգնել Ձեզ ավելի անկախ ապրել: Դրանք չեն փոխարինում այն նպաստներին, որոնք Դուք արդեն ստանում եք Medi-Cal-ի շրջանակներում:

Համայնքային օժանդակությունները, որոնք Blue Shield Promise-ն առաջարկում է.

- Բնակարանային անցումային ծառայություններ
  - Այն անդամները, որոնք անօթևան են կամ անօթևան դառնալու վտանգի տակ են, օգնություն են ստանում բնակարան գտնելու, դիմելու և ապահով բնակվելու համար:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Բնակարանային ավանդներ
  - Անդամները օգնություն են ստանում բնակարանային ապահովության ավանդների, կոմունալ ծառայությունների կարգավորման վճարների, առաջին և վերջին ամիսների վարձակալության և առաջին ամսվա կոմունալ ծառայությունների համար: Անդամները կարող են նաև ֆինանսավորում ստանալ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ իրերի համար, ինչպիսիք են օդափոխիչները, տաքացուցիչները և հիվանդանոցային մահճակալները՝ համոզված լինելու համար, որ իրենց նոր տունն անվտանգ է տեղաշարժման համար:
- Բնակարանների վարձակալության և պահպանման ծառայություններ
  - Անդամները աջակցություն են ստանում ապահով և կայուն վարձակալության պահպանման համար, երբ բնակարանն ապահովված է, ինչպես, օրինակ, խնդիրների լուծման ընթացքը տարածքի տերերի հետ համակարգելը, բնակարանի վերագնահատման տարեկան գործընթացի հարցում օգնությունը և կապվածությունը համայնքի ռեսուրսների հետ՝ վտարումը կանխելու համար:
- Կարճաժամկետ հետհիվանդանոցային բնակություն
  - Այն անդամները, որոնք բնակավայր չունեն և ունեն բժշկական կամ հոգեկան առողջության և թմրամիջոցների օգտագործման խանգարման հետ կապված լուրջ կարիքներ, ստանում են կարճաժամկետ բնակության հնարավորություն մինչև վեց ամիս ժամկետով՝ իրենց վերականգնումը շարունակելու համար: Այս աջակցությունը ստանալու համար ծրագրի մասնակիցները պետք է դուրս գրվեն ստացիոնար կլինիկական հաստատությունից, թմրամիջոցների օգտագործման դեպքում բուժման կամ օգտագործումից հետո վերականգնման ստացիոնար հաստատությունից, հոգեկան առողջության բուժման հաստատությունից, ուղղիչ հաստատությունից, բուժքույրական հաստատությունից կամ վերականգնողական խնամքի հաստատությունից:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):



- Վերականգնողական խնամք (բժշկական տնային խնամքի ժամանակավոր թեթևացում)
  - Անկայուն բնակարանային պայմաններ ունեցող անդամները, որոնք այլևս հոսպիտալացման կարիք չունեն, բայց դեռ պետք է ապաքինվեն վնասվածքից կամ հիվանդությունից, ստանանում են կարճաժամկետ բնակության խնամք: Բնակության խնամքը ներառում է բնակարան, սնունդ, անդամի վիճակի շարունակական մոնիտորինգ և այլ ծառայություններ, օրինակ՝ ժամադրությունների համար փոխադրման համակարգումը:
- Հանգստի ծառայություններ
  - Կարճաժամկետ օգնություն անդամների խնամողների համար: Անդամները կարող են խնամողի ծառայություններ ստանալ իրենց տանը կամ հաստատված հաստատությունում ժամային, օրեկան կամ գիշերային հիմունքով՝ ըստ անհրաժեշտության:
- Ցերեկային աբիլիտացիոն ծրագրեր
  - Այն անդամները, որոնք անօթևան են, անօթևան մնալու վտանգի տակ են կամ նախկինում անօթևան են եղել, վերապատրաստված խնամողի կողմից խորհրդատվություն են ստանում ինքնօգնության, սոցիալական և հարմարվողականության հմտությունների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են համայնքում հաջողությամբ ապրելու համար: Այս հմտություններն ընդգրկում են հանրային տրանսպորտի օգտագործումը, խոհարարությունը, մաքրության պահպանումը, անձնական ֆինանսների կառավարումը, պետական մարմինների և անձնակազմի հետ գործակցելը եւ համապատասխանաբար արձագանքելը, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների զարգացումն ու պահպանումը: Այս աջակցությունը կարող է տրամադրվել անդամի տանը կամ տնից դուրս, ոչ շենքային պայմաններում:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Բուժքույրական հաստատության անցում/փոխակերպում աջակցվող բնակության հաստատության
  - Տանը կամ ծերանոցում ապրող անդամները փոխադրվում են աջակցվող բնակության հաստատություն, որպեսզի ապրեն իրենց համայնքում և հնարավորության դեպքում խուսափեն ծերանոցում բնակություն հաստատելուց: Աջակցվող բնակության հաստատությունները ծառայություններ են մատուցում համայնքային հաստատության բնակության վայր հաստատելու համար, ինչպիսիք են՝ աջակցություն առօրյա գործողություններում, դեղերի վերահսկողություն և խնամող անձնակազմի 24-ժամյա ներկայություն:
- Համայնքային անցումային ծառայություններ/ծերանոցից անցում դեպի տուն
  - Այն անդամները, որոնք ծերանոցից անցում են կատարում մասնավոր բնակության վայր, որտեղ նրանք պատասխանատու կլինեն իրենց սեփական ծախսերի համար, ստանում են ֆինանսավորում սահմանված ծառայությունների համար, ինչը ներառում է անվտանգության դեպոզիտները, կոմունալ ծառայությունների համար սահմանված վճարները և առողջության հետ կապված սարքերը, օրինակ՝ օդափոխիչներ, տաքացուցիչներ կամ հիվանդանոցային մահճակալներ:
- Անձնական խնամքի և տնային տնտեսության ծառայություններ
  - Այն անդամները, որոնք օգնության կարիք ունեն առօրյա կենսագործունեության կամ առօրյա կենսագործունեության գործիքների օգտագործման հետ կապված, ստանում են տնային աջակցություն, ինչը ներառում է լողանալը կամ կերակրելը, ճաշի պատրաստումը, մթերային գնումները և բժշկական ժամադրություններին ուղեկցումը:
- Շրջակա միջավայրի մատչելիության հարմարեցումներ (տան փոփոխություններ)
  - Անդամների տներում ֆիզիկական փոփոխություններ են կատարվում՝ ապահովելու իրենց առողջությունն ու անվտանգությունը և թույլ տալու նրանց լինել ավելի անկախ: Տան փոփոխությունները կարող են ներառել թեքահարթակներ և կառչածոդեր, դռների լայնացում այն անդամների համար, որոնք օգտագործում են անվասայլակ, վերելակներ կամ բաղնիքներում անվասայլակների հասանելիության կազմակերպում:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Բժշկական տեսանկյունից օժանդակող սնունդ/բժշկական տեսանկյունից հարմարեցված կերակուրներ
  - Անդամները ստանում են սննդարար, եփված կերակուրների և առողջարար նպարեղենի առաքումներ՝ իրենց առողջական կարիքները հոգալու համար: Անդամները ստանում են նաև առողջ սննդի և/կամ սնվելու վերաբերյալ գիտելիքների կտրոններ:
- Սթափեցնող կենտրոններ
  - Այն անդամներին, որոնց մոտ գրանցվել է հրապարակայնորեն հարբած վիճակ, տրամադրվում է կարճաժամկետ, անվտանգ, աջակցող միջավայր, որտեղ նրանք կարող են սթափվել: Սթափեցման կենտրոնները մատուցում են այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են բժշկական տեսակավորումը, ժամանակավոր մահճակալը, սնունդը, թմրանյութերի օգտագործման վերաբերյալ կրթությունը և խորհրդատվությունը, ինչպես նաև կապը այլ առողջապահական ծառայությունների հետ:
- Ասթմայի բուժում
  - Անդամների տներում կատարվում են ֆիզիկական փոփոխություններ՝ խուսափելու համար ասթմայի սուր նոպաներից, որոնց պատճառը կարող են լինել շրջակա միջավայրում առկա խթանիչները, օրինակ՝ բորբոսը: Փոփոխությունների օրինակ կարող են լինել ֆիլտրով փոշեկուլները, օդի չորացուցիչները, օդային ֆիլտրերը և օդափոխության բարելավումները:

## GEDWorks

### Ստացեք Ձեր GED-ը, որն անվճար է Blue Shield Promise-ի անդամների համար

Մենք վստահ ենք, որ որակյալ առողջական խնամքը ավելին է, քան պարզապես ֆիզիկական խնամքը: Դա է պատճառը, որ որպես Blue Shield Promise-ի անդամ մենք Ձեզ առաջարկում ենք միանալ GEDWorks™-ին:

GEDWorks™-ը հատուկ ծրագիր է, որը կարող է օգնել Ձեզ ստանալ ավագ դպրոցին համարժեք դիպլոմ: GEDWorks™-ը տրամադրում է GED թեստը անցնելու համար Ձեզ անհրաժեշտ աջակցությունը և գործիքները:

- Հատուկ ուսումնական ծրագրերի հասանելիություն
- Անվճար առցանց ուսուցում 24/7



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Առցանց թեստավորում 24/7
- Երկլեզու խորհրդատու
- Պրակտիկ թեստեր

Անդամագրվելու համար Դուք պետք է.

- Լինեք Blue Shield Promise-ի ընթացիկ անդամ
- Լինեք առնվազն 18 տարեկան
- Չունենաք ավագ դպրոցի դիպլոմ կամ համարժեք դիպլոմ
- Ներկայումս գրանցված չլինեք ավագ դպրոցում

Սկսելը հեշտ է.

1. Այցելեք [blueshieldca.com/GEDWorks](https://blueshieldca.com/GEDWorks): Գրանցումը տևում է ընդամենը մի քանի րոպե
2. Նախատեսեք առնվազն 2-3 աշխատանքային օր՝ Ձեր դիմումը ուսումնասիրելու և հաստատելու համար
3. Շնորհավորում ենք, Դուք GED ուսանող եք: Մուտք գործեք Ձեր [GED.com](https://GED.com) էջ՝ Ձեր հետագա քայլերի համար

Այս ծրագրին մասնակցությունն անվճար և կամավոր է Blue Shield of California Promise Health Plan-ի բոլոր իրավունակ անդամների համար: Դուք կարող եք դադարեցնել Ձեր մասնակցությունը ցանկացած ժամանակ, ցանկացած պատճառով: Այս ծրագրին մասնակցությունը չի ազդի Ձեր Medi-Cal-ի նպաստների կամ ապահովագրության վրա:

## LA Care և Blue Shield Promise համայնքային ռեսուրս կենտրոններ

Այս կենտրոնները առողջության և բարեկեցության Ձեր ռեսուրսն են: Կենտրոնները բաց են անդամների և լայն հանրության համար: Դուք կարող եք օգտվել մի շարք անվճար առողջապահական և համայնքային ռեսուրսներից, ինչպիսիք են.

- Անհատական օգնություն՝ Ձեր բժշկին ընտրելու կամ փոխելու, ժամադրություն նշանակելու կամ նոր ID քարտ խնդրելու համար
- Աջակցություն առողջապահության համայնքային պաշտպանի կողմից, որը կօգնի Ձեզ ստանալ սնունդ, կոմունալ ծառայություններ և այլ ռեսուրսներ



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Խնամքի պլանավորում և առողջապահական կրթություն
- Աջակցություն հանրային առողջապահական ծրագրերի և սննդի աջակցություն ծրագրերի մեջ ներգրավվելու և դրանց թարմացման հարցում
- Անվճար Wi-Fi հեռավար առողջապահական ծառայությունների համար
- Առողջության և սնվելու անհատական դասընթացներ
- Ֆիթնեսի և լավ ինքնագզացողության դասընթացներ

Ձեր մոտակայքում գտնվող ռեսուրս կենտրոն գտնելու կամ ավելին իմանալու համար զանգահարեք 1-877-287-6290 (TTY` 711) հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 09:00-ից 17:00 կամ այցելեք [communityresourcecenterla.org](http://communityresourcecenterla.org):

Եթե օգնության կարիք ունեք կամ ցանկանում եք պարզել, թե ինչպիսի համայնքային օժանդակություն է հասանելի Ձեզ, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Կամ զանգահարեք Ձեր առողջապահական խնամքի մատակարարին:

## Հիմնական օրգանի փոխպատվաստում

### *Փոխպատվաստումներ 21 տարեկանից ցածր երեխաների համար*

Los Angeles վարչաշրջանում նահանգային օրենքը պահանջում է փոխպատվաստման կարիք ունեցող երեխաներին ուղղորդել Կալիֆորնիայի մանկական ծառայությունների (California Children’s Services, CCS) ծրագիր՝ որոշելու, թե արդյոք երեխան կարող է որակավորվել է CCS-ի համար: Եթե երեխան որակավորվի CCS-ի համար, ծրագիրը կհոգա փոխպատվաստման և դրա հետ կապված ծառայությունների ծախսերը:

Եթե երեխան չորակավորվի CCS-ի համար, ապա Blue Shield Promise-ը երեխային կուղեգրի մասնագիտացված փոխպատվաստման կենտրոն՝ գնահատման համար: Եթե փոխպատվաստման կենտրոնը հաստատի, որ փոխպատվաստումն անվտանգ է և անհրաժեշտ երեխայի առողջական վիճակի համար, Blue Shield Promise-ը կապահովագրի փոխպատվաստումը և դրա հետ կապված այլ ծառայությունները:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](http://blueshieldca.com/promise/medi-cal):

**Փոխապատվաստումներ 21 տարեկան և ավելի բարձր չափահասների համար**

Եթե Ձեր բժիշկը որոշի, որ Ձեզ կարող է անհրաժեշտ լինել հիմնական օրգանի փոխապատվաստում, Blue Shield Promise-ը Ձեզ կուղարկի որակավորված փոխապատվաստման կենտրոն՝ գնահատման համար: Եթե փոխապատվաստման կենտրոնը հաստատի, որ փոխապատվաստումն անհրաժեշտ և անվտանգ է Ձեր առողջական վիճակի համար, Blue Shield Promise-ը կապահովագրի փոխապատվաստումը և դրա հետ կապված այլ ծառայությունները:

Հետևյալ հիմնական օրգանների փոխապատվաստումները, որոնք ապահովագրված են Blue Shield Promise-ի կողմից, ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- Ոսկրածուծ
- Միրտ
- Միրտ/թոքեր
- Երիկամ
- Երիկամ/Ենթաստամոքսային գեղձ
- Լյարդ
- Լյարդ/բարակ աղիք
- Թոքեր
- Բարակ աղիք

**Փողոցային բժշկության ծրագրեր**

Այն անդամները, որոնք անօթևան են, կարող են ապահովագրված ծառայություններ ստանալ փողոցային բժշկական մատակարարներից Blue Shield Promise-ի մատակարարների ցանցի ներքո: Այն անդամները, որոնք անօթևան են, կարող են ընտրել Blue Shield Promise-ի փողոցային բժշկության մատակարարին որպես իրենց առաջնային խնամքի մատակարար (primary care provider, PCP), եթե փողոցային բժշկության մատակարարը համապատասխանում է PCP-ի իրավասության կանոններին և համաձայն է լինել անդամի PCP-ն: Blue Shield Promise-ի փողոցային բժշկության ծրագրի մասին ավելին իմանալու համար զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

**Անցումային խնամքի ծառայություններ (Transitional Care Services, TCS)**

Blue Shield Promise Medi-Cal-ի անդամները, որոնք վերջերս ընդունվել են հիվանդանոց, իրավասու են Անցումային խնամքի ծառայությունների (Transitional Care Services, TCS) ծրագրին: Անդամները ստանում են աջակցություն՝ համոզվելու, որ ունեն ճիշտ ծառայություններ և ռեսուրսներ՝ տուն անվտանգ վերադառնալու համար: TCS ծրագիրը կարող է օգնել անդամներին բժշկի այցերի, շտապ օգնության



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

կայանի օգտագործման կրճատման, համայնքային ռեսուրսներից օգտվելու, խնամող գտնելու և դեղերը կառավարելու հարցերում, ինչպես նաև կօգնի սովորել, թե ինչպես օգտագործել իրենց նպաստները: Աջակցման ծառայությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ հետբուժական բժշկական այցերի գրանցում, փոխադրման համակարգում և խնամողների օգնության համան ուղեգրեր:

TCS ծրագրի մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-877-702-5566 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 17:00:

### Հեռավար առողջապահություն

Blue Shield Promise-ի հեռավար առողջապահական նպաստների գործընկեր Teladoc®-ը առաջարկում է արտոնագրված բժիշկներ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, որպեսզի նրանք օգնեն Ձեզ խնամք ստանալ այն ժամանակ, երբ չեք կարող հասնել Ձեր PCP-ին և ցանկանում եք խնամք ստանալ Ձեր սեփական հարմարավետ տնից:

Teladoc մուտք գործելու համար.

1. Ստեղծեք Ձեր հաշիվը Teladoc.com կայքում: Ձեզ անհրաժեշտ կլինի Ձեր անդամի նույնականացման (ID) համարը:
2. Այց խնդրեք Teladoc-ի զանգերի կենտրոնի, անդամների կայքի կամ բջջային հավելվածի միջոցով ցանկացած ժամանակ:
3. Անհրաժեշտ խնամքի անմիջական հասանելիություն

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք

<https://www.blueshieldca.com/en/home/be-well/live-healthy/teladoc>:

---

## Medi-Cal-ի այլ ծրագրեր և ծառայություններ

Այլ ծառայություններ, որոնք կարող եք ստանալ Վճարովի ծառայությամբ (FFS) Medi-Cal-ի կամ այլ Medi-Cal-ի ծրագրերի միջոցով

Blue Shield Promise-ը չի ապահովագրում որոշ ծառայություններ, բայց այնուամենայնիվ կարող եք դրանք ստանալ FFS Medi-Cal ծրագրի կամ Medi-Cal-ի այլ ծրագրերի միջոցով: Blue Shield Promise-ը կհամագործակցի այլ ծրագրերի հետ՝ վստահ լինելու համար, որ Դուք ստանում եք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

բոլոր ծառայությունները, նույնիսկ եթե այդ ծառայություններն ապահովագրված են մեկ այլ ծրագրով, այլ ոչ թե Blue Shield Promise-ով: Այս բաժնում թվարկված են այս ծառայություններից մի քանիսը: Ավելին իմանալու համար զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

## Ամբուլատոր դեղատոմսային դեղեր

### Դեղատոմսով դեղեր, որոնք ապահովագրված են Medi-Cal Rx-ի կողմից

Դեղատոմս կողմից տրվող դեղատոմսով դեղերը ապահովագրված են Medi-Cal Rx-ի կողմից, որը FFS Medi-Cal-ի մաս է: Blue Shield Promise-ը կարող է ապահովագրել որոշ դեղամիջոցներ, որոնք մատակարարը տալիս է գրասենյակում կամ կլինիկայում: Եթե Ձեր մատակարարը դեղեր նշանակի, որոնք տրվում են բժշկի ընդունարանում կամ ներարկման կենտրոնում, դրանք կարող են համարվել բժշկի կողմից նշանակվող դեղեր:

Եթե ոչ-դեղատոմս վրա հիմնված առողջապահական խնամքի մասնագետը դեղ ներարկի, այն կապահովագրվի բժշկական նպաստի ներքո: Ձեր մատակարարը կարող է Ձեզ դեղեր նշանակել, որոնք Medi-Cal Rx-ի պայմանագրային դեղերի ցանկում են:

Երբեմն դեղն անհրաժեշտ է, և այն չկա պայմանագրային դեղերի ցանկում: Այս դեղերը հաստատման կարիք ունեն՝ նախքան դեղատոմսը դեղատոմսից լրացնելը: Medi-Cal Rx-ը այսպիսի խնդրանքները կվերանայի և կորոշի 24 ժամվա ընթացքում:

- Ձեր ամբուլատոր դեղատոմս դեղագործը կարող է Ձեզ 14-օրյա շտապ պաշար տրամադրել, եթե նա համարի, որ դրա կարիքն ունեք: Medi-Cal Rx-ը կվճարի ամբուլատոր դեղատոմս կողմից տրվող շտապ դեղերի համար:
- Medi-Cal Rx-ը կարող է մերժել ոչ շտապ օգնության խնդրանքը: Այդ դեպքում, Ձեզ նամակ կուղարկեն՝ տեղեկացնելու, թե ինչու: Նրանք կբացատրեն Ձեզ, թե որոնք են Ձեր ընտրությունները: Հավելյալ տեղեկությունների համար կարդացեք այս տեղեկագրի 6-րդ գլխի «Բողոքներ» բաժինը:

Պարզելու, թե արդյոք դեղը ներառված է պայմանագրային դեղերի ցանկում, կամ պայմանագրային դեղերի ցանկի պատճենը ստանալու համար, զանգահարեք Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) հեռախոսահամարով և սեղմեք 7 կամ 711: Կամ այցելեք Medi-Cal Rx-ի կայքը՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal/](https://blueshieldca.com/promise/medi-cal/):



**Դեղատներ**

Եթե լցնում կամ վերալցնում եք դեղատոմսը, պարտավոր եք Ձեր դեղատոմսով դեղերն ստանալ Medi-Cal Rx-ի հետ գործող դեղատնից: Medi-Cal Rx Դեղատների հասցեագրքում կարող եք գտնել Medi-Cal Rx-ի հետ աշխատող դեղատների ցանկը հետևյալ հասցեով՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>

Դուք կարող եք նաև գտնել Ձեր մոտակայքում գտնվող դեղատուն կամ այնպիսի դեղատուն, որը կարող է փոստով ուղարկել Ձեր դեղատոմսը, եթե զանգահարեք Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) հեռախոսահամարով և սեղմեք 7 կամ 711:

Դեղատունն ընտրելուց հետո Ձեր մատակարարը կարող է դեղատոմսը ուղարկել Ձեր դեղատուն էլեկտրոնային եղանակով: Ձեր մատակարարը կարող է նաև Ձեզ գրավոր դեղատոմս տալ՝ դեղատուն տանելու համար: Դեղատանը տվեք Ձեր դեղատոմսը Ձեր Medi-Cal Նպաստների ճանաչողական քարտի (BIC) հետ միասին: Համոզվեք, որ դեղագործը ծանոթ է Ձեր կողմից օգտագործվող բոլոր դեղամիջոցներին և որևէ դեղի նկատմամբ ունեցած ալերգիաներին: Եթե Ձեր դեղատոմսի մասին ունեք որևէ հարց, հարցրեք դեղագործին:

Անդամները կարող են նաև փոխադրման ծառայություններ ստանալ Blue Shield Promise-ից՝ դեղատներ հասնելու համար: Փոխադրման ծառայությունների մասին հավելյալ տեղեկությունների համար կարդացեք այս տեղեկագրի 4-րդ գլուխը ստորև՝ «Փոխադրման նպաստներ այն իրավիճակների համար, որոնք արտակարգ իրավիճակներ չեն»:

**Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ (Specialty mental health services, SMHS)**

Հոգեկան առողջության որոշ ծառայություններ մատուցվում են շրջանի հոգեկան առողջության ծրագրերով՝ Blue Shield Promise-ի փոխարեն: Դրանք ներառում են SMHS-ը Medi-Cal-ի այն անդամների համար, ովքեր համապատասխանում են SMHS-ի ծառայությունների կանոններին: SMHS-ը կարող է ընդգրկել հետևյալ ստացիոնար, բնակության վայրի հետ կապված և ամբուլատոր ծառայությունները՝



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal/](https://blueshieldca.com/promise/medi-cal/):

**Ամբուլատոր ծառայություններ՝**

- Հոգեկան առողջության ծառայություններ
- Դեղամիջոցների աջակցության ծառայություններ
- Ցերեկային բուժման լարված ծառայություններ
- Ցերեկային վերականգնողական ծառայություններ
- Ճգնաժամի միջամտության ծառայություններ
- Ճգնաժամի կայունացման ծառայություններ
- Նպատակային գործի կառավարումը
- Թերապևտիկ վարքագծային ծառայություններ (ապահովագրված են մինչև 21 տարեկան անդամների համար)
- Ինտենսիվ խնամքի համակարգում (Intensive care coordination, ICC) (ապահովագրված են մինչև 21 տարեկան անդամների համար)
- Ինտենսիվ տնային ծառայություններ (Intensive home-based services, IHBS) (ապահովագրված են մինչև 21 տարեկան անդամների համար)
- Խնամատուի թերապևտիկ խնամք (Therapeutic foster care, TFC) (ապահովագրված են մինչև 21 տարեկան անդամների համար)
- Բջջային ճգնաժամային ծառայություններ
- Գործընկերների աջակցության ծառայություններ (PSS) (ընտրանքային)

**Բնակության վայրում ծառայություններ՝**

- Բնակության վայրում չափահասների բուժման ծառայություններ
- Բնակության վայրում ճգնաժամային բուժման ծառայություններ

**Ստացիոնար ծառայություններ՝**

- Հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ
- Հոգեբուժական առողջապահական հաստատության ծառայություններ

Վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի կողմից տրամադրվող SMHS-ի մասին ավելին իմանալու համար, կարող եք զանգահարել Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագիր:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարներն առցանց գտնելու համար անցեք [dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContaktList.aspx](https://dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContaktList.aspx) հղմամբ: Եթե Blue Shield Promise-ում պարզեն, որ Ձեզ հարկավոր են ծառայություններ վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրից, Blue Shield Promise կօգնի Ձեզ կապ հաստատել շրջանի հոգեկան առողջության ծրագրի ծառայությունների հետ:

### **Թմրանյութերի օգտագործման խանգարման բուժման ծառայություններ**

Blue Shield Promise-ը խրախուսում է այն անդամներին, ովքեր օգնություն են ցանկանում ակոհոլի կամ այլ թմրանյութերի օգտագործմանն առնչվող խնամք ստանալ: Թմրանյութերի օգտագործմանը վերաբերող ծառայությունները կարող են տրամադրվել ընդհանուր խնամքի մատակարարների կողմից, ինչպիսիք են առաջնային խնամքը, ստացիոնար հիվանդանոցները և շտապ օգնության բաժանմունքները, ինչպես նաև թմրանյութերի օգտագործմանը վերաբերող հատուկ ծառայություններ մատուցողներից: Վարչաշրջանի վարքագծային առողջության ծրագրերը հաճախ տրամադրում են մասնագիտացված ծառայություններ:

Թմրամիջոցների օգտագործման խանգարումների բուժման տարբերակների մասին հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք Los Angeles վարչաշրջանի Թմրանյութերի օգտագործման խանգարման հարցերով օգնության հեռախոսագիծ՝ 1-800-854-7771 (TTY 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Blue Shield Promise-ի անդամները կարող են գնահատվել՝ նրանց համապատասխանեցնելու այն ծառայություններին, որոնք լավագույնս համապատասխանում են նրանց առողջական կարիքներին և նախընտրություններին: Բժշկական անհրաժեշտության դեպքում հասանելի ծառայությունները ներառում են ամբուլատոր բուժում, բուժում բնակության վայրում և դեղամիջոցներ՝ թմրանյութերի օգտագործման խանգարումների համար (նաև կոչվում են Կախվածության բուժման դեղորայք կամ MAT (Medications for Addiction Treatment)), ինչպիսիք են buprenorphine-ը, methadone-ը 7 naltrexone-ը:

Վարչաշրջանը մատուցում է Թմրանյութի օգտագործման խանգարման ծառայություններ Medi-Cal-ի անդամներին, ովքեր իրավասու են այս ծառայությունների համար: Անդամները, որոնք ճանաչվել են թմրանյութերի օգտագործման խանգարման բուժման ծառայությունների համար, կուղարկվեն իրենց



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

վարչաշրջանի վարչություն՝ բուժման նպատակով: Բոլոր շրջանների հեռախոսահամարների ցանկի համար անցեք

[https://www.dhcs.ca.gov/individuals/Pages/SUD\\_County\\_Access\\_Lines.aspx](https://www.dhcs.ca.gov/individuals/Pages/SUD_County_Access_Lines.aspx) հղմամբ:

Blue Shield Promise-ը կտրամադրի կամ կկազմակերպի MAT-ի տրամադրումը առաջնային բուժօգնությունում, ստացիոնար հիվանդանոցում, շտապ օգնության բաժանմունքում և այլ բժշկական հաստատություններում:

Թմրանյութի օգտագործման ծառայությունները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- Ամբուլատոր բուժում
- Ինտենսիվ ամբուլատոր բուժում
- Գործի կառավարում
- Կախվածության բուժման դեղամիջոցներ (MAT)
- Հեռացման կառավարում (դետոքս)
- Բնակության վայրում բուժում
- Վերականգնողական աջակցության ծառայություններ
- Վերականգնման կամուրջի բնակարան
- Կամավոր ստացիոնար դետոքսիկացիա, եթե համապատասխանում էք չափանիշներին

### **Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ (California Children's Services, CCS)**

CCS-ը Medi-Cal-ի ծրագիր է, որը բուժում է 21 տարեկանից ցածր տարիքի և որոշակի առողջական խնդիրներ, հիվանդություններ կամ քրոնիկ առողջական խնդիրներ ունեցող երեխաների, որոնք համապատասխանում են CCS ծրագրի կանոններին: Եթե Blue Shield Promise-ը կամ Ձեր PCP-ն կարծում է, որ Ձեր երեխան ունի CCS-ին համապատասխանող առողջական խնդիր, նրան կուղղորդեն վարչաշրջանի CCS ծրագիր՝ իրավասությունը գնահատելու նպատակով:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Վարչաշրջանի CCS-ի անձնակազմը կորոշի, թե արդյոք Դուք կամ Ձեր երեխան որակավորվում էք CCS ծառայությունների համար: Blue Shield Promise-ը չի որոշում CCS-ին համապատասխանությունը: Եթե Ձեր երեխան որակավորվում է այս տեսակի խնամք ստանալու համար, CCS-ի մատակարարները նրանց կբուժեն CCS-ին համապատասխանող խնդրի համար: Blue Shield Promise-ը կշարունակի ապահովագրել ծառայության այնպիսի տեսակներ, որոնք կապ չունեն CCS-ի խնդրի հետ, ինչպես, օրինակ, բժշկական ստուգումները, պատվաստումները և երեխայի առողջության ստուգումները:

Blue Shield Promise-ը չի ապահովագրում CCS ծրագրի կողմից ապահովագրվող ծառայությունները: Որպեսզի CCS-ն ապահովագրի այս ծառայությունները, CCS-ն պետք է հաստատի մատակարարին, ծառայությունները և սարքավորումները:

CCS-ն ապահովագրում է առողջական խնդիրների մեծ մասը: CCS-ին համապատասխանող առողջական խնդիրների օրինակները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- Սրտի բնածին հիվանդություն
- Քաղցկեղներ
- Նորագոյացություններ
- Արյունահոսականություն
- Մանգաղանման բջջային սակավարյունություն
- Վահանագեղձի խնդիրներ
- Շաքարախտ
- Երիկամների լուրջ քրոնիկական խնդիրներ
- Լյարդի հիվանդություն
- Աղիքային հիվանդություն
- Ճեղքված շրթունք (նապաստակի շրթունք)/քիմք
- Սպինա բիֆիդա (ողնաշարի և ողնուղեղի շուրջ թաղանթների թերի փակում)
- Լսողության կորուստ
- Կատարակտներ
- Մանկական ուղեղային կաթված
- Նոպաներ որոշակի հանգամանքների ներքո
- Ռևմատոիդ արթրիտ
- Մկանային դիստրոֆիա
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ (HIV/AIDS)
- Գլխի, ուղեղի կամ ողնաշարի ծանր վնասվածքներ
- Ծանր այրվածքներ
- Սաստիկ ծուռ ատամներ

Medi-Cal-ը վճարում է CCS ծառայությունների համար: Եթե Ձեր երեխան իրավասու չէ CCS ծրագրի ծառայությունների համար, նա կշարունակի բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամք ստանալ Blue Shield Promise-ից:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

CCS-ի մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք <https://www.dhcs.ca.gov/services/ccs>: Կամ զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

***Փոխադրման և երթևեկության ծախսեր CCS-ի համար***

Դուք կարող եք ստանալ փոխադրում, սնունդ, կացարան և այլ ծախսեր, ինչպիսիք են ավտոկայանատեղը, վճարները և այլն, եթե Դուք կամ Ձեր ընտանիքն օգնության կարիք ունեք՝ հասնելու բժշկական ժամադրության վայր՝ կապված CCS-ին իրավունակ լինելու վիճակի հետ, և չկա այլ հասանելի ռեսուրս: Չանգահարեք Blue Shield Promise և խնդրեք նախնական հաստատում (նախնական լիազորում)՝ նախքան փոխադրման, սննդի և կացարանի համար Ձեր գրպանից վճարելը: Blue Shield Promise-ը տրամադրում է ոչ բժշկական և ոչ-արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրումներ, ինչպես նշված է այս տեղեկագրի Գլուխ 4-ի «Նպաստներ և ծառայություններ» բաժնում:

Եթե Ձեր փոխադրման կամ ճանապարհորդական ծախսերը, որոնք Դուք վճարել եք ինքներդ Ձեզ համար, անհրաժեշտ համարվեն, և Blue Shield Promise-ը հաստատի, որ Դուք փորձել եք փոխադրում ստանալ Blue Shield Promise-ի միջոցով, Blue Shield Promise-ը Ձեզ հետ կվճարի: Մենք Ձեզ պետք է հետ վճարենք անհրաժեշտ անդորրագրերը և փոխադրման ծախսերի ապացույցը ներկայացնելու օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում:

***Տնային և համայնքահեն ծառայություններ (Home and community-based services, HCBS) CCS ծառայություններից դուրս***

Եթե Դուք իրավասու եք գրանցվել 1915(c)-ի հրաժարման մեջ, Դուք կարող եք ստանալ տնային և համայնքային ծառայություններ, որոնք չեն առնչվում CCS-ին իրավունակ լինելու վիճակին, սակայն անհրաժեշտ են, որպեսզի Դուք հաստատության փոխարեն մնաք համայնքային միջավայրում: Օրինակ, եթե Դուք պահանջում եք տան փոփոխություններ՝ Ձեր համայնքային կարիքները բավարարելու համար, Blue Shield Promise-ը չի կարող վճարել այդ ծախսերը՝ որպես CCS-ի հետ կապված վիճակ: Բայց եթե Դուք անդամագրված եք 1915(c) հրաժարման մեջ, տնային փոփոխությունները կարող են ապահովագրվել, եթե դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են՝ հիվանդանոցում մնալը կանխելու համար:



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Փոխադրման և երթևեկության ծախսեր CCS-ի համար**

Դուք կարող եք ստանալ փոխադրում, սնունդ, կացարան և այլ ծախսեր, ինչպիսիք են ավտոկայանատեղը, վճարները և այլն, եթե Դուք կամ Ձեր ընտանիքն օգնության կարիք ունեք՝ հասնելու բժշկական ժամադրության վայր՝ կապված CCS-ին իրավունակ լինելու վիճակի հետ, և չկա այլ հասանելի ռեսուրս: Դուք պետք է զանգահարեք Blue Shield Promise և խնդրեք նախնական հաստատում (նախնական լիազորում)՝ նախքան փոխադրման, սննդի և կացարանի համար Ձեր գրպանից վճարելը: Blue Shield Promise-ը տրամադրում է ոչ բժշկական և ոչ շտապ բժշկական փոխադրումներ, ինչպես նշված է Գլուխ 4-ի «Նպաստներ և ծառայություններ» բաժնում:

Եթե Ձեր փոխադրման կամ ճանապարհորդական ծախսերը, որոնք Դուք վճարել եք ինքներդ Ձեզ համար, անհրաժեշտ համարվեն, և Blue Shield Promise-ը հաստատի, որ Դուք փորձել եք փոխադրում ստանալ Blue Shield Promise-ի միջոցով, Blue Shield Promise-ը Ձեր գումարը հետ կվճարի: Մենք Ձեզ պետք է հետ վճարենք՝ Ձեր կողմից անհրաժեշտ անդորրագրերը և փոխադրման ծախսերի ապացույցը ներկայացնելու օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում:

**Տնային և համայնքային ծառայություններ (HCBS) WCM ծառայություններից դուրս**

Եթե Դուք իրավասու եք գրանցվել 1915(c)-ի հրաժարման մեջ, Դուք կարող եք ստանալ տնային և համայնքային ծառայություններ, որոնք չեն առնչվում CCS-ին իրավունակ լինելու վիճակին, սակայն անհրաժեշտ են, որպեսզի Դուք հաստատության փոխարեն մնաք համայնքային միջավայրում: Օրինակ, եթե Դուք պահանջում եք տան փոփոխություններ՝ Ձեր համայնքային կարիքները բավարարելու համար, Blue Shield Promise-ը չի կարող վճարել այդ ծախսերը՝ որպես CCS-ի հետ կապված վիճակ: Բայց եթե Դուք անդամագրված եք 1915(c) հրաժարման մեջ, տնային փոփոխությունները կարող են ապահովագրվել, եթե դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են՝ հիվանդանոցում մնալը կանխելու համար:

**1915(c) հրաժարում տնային և համայնքահեն ծառայություններից (HCBS)**

Կալիֆորնիայի Medi-Cal 1915(c) 6 հրաժարումները թույլ են տալիս նահանգին իրենց ընտրած համայնքահեն միջավայրում ծառայություններ մատուցել այն անձանց, որոնք այլ տարբերակում ինամքի կարիք կունենային ծերանոցում կամ հիվանդանոցում: Medi-Cal-ը համաձայնագիր ունի Դաշնային կառավարության հետ,



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

որը թույլ է տալիս հրաժարման ծառայություններ առաջարկել մասնավոր տանը կամ տնամերձ համայնքային հաստատությունում: Հրաժարումների ներքո առաջարկվող ծառայությունները չպետք է արժենան ավելին, քան խնամքի այլընտրանքային ինստիտուցիոնալ մակարդակը: HCBS հրաժարում ստացողները պետք է իրավասու լինեն լիարժեք Medi-Cal-ի համար: Որոշ 1915(c) հրաժարումներ ունեն սահմանափակ հասանելիություն ամբողջ Կալիֆոռնիա նահանգում և/կամ կարող են ունենալ սպասման ցուցակ: Medi-Cal 1915(c)-ի 6 հրաժարումներն են.

- Կալիֆոռնիայի Assisted Living Waiver-ը (ALW)
- Կալիֆոռնիայի Self-Determination Program (SDP) Waiver-ը՝ զարգացմանն առնչվող հաշմանդամություն ունեցող անձանց համար
- HCBS Waiver-ը զարգացմանն առնչվող հաշմանդամություն ունեցող Կալիֆոռնիայի բնակիչների համար (HCBS-DD)
- Տնային և համայնքային այլընտրանքներից (HCBA) հրաժարում
- Medi-Cal-ի հրաժարման ծրագիրը (Medi-Cal Waiver Program , MCWP), որը նախկինում կոչվում էր Մարդու իմունային անբավարարության վիրուսի/ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՄԻԱՎ/ՁԻԱՀ) հրաժարում
- Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագիր (Multipurpose Senior Services Program, MSSP)

Medi-Cal-ի հրաժարումների մասին ավելին իմանալու համար այցելեք <https://www.dhcs.ca.gov/services/Pages/HCBSWaiver.aspx>: Կամ զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

### Տնային աջակցության ծառայություններ (In-Home Supportive Services, IHSS)

Տնային աջակցության ծառայությունների (IHSS) ծրագիրը տրամադրում է տնային անձնական խնամքի օգնություն՝ որպես տնից դուրս մատուցվող խնամքի այլընտրանք Medi-Cal-ին համապատասխանող որակավորված անձանց, ներառյալ նրանց, ովքեր տարեց են, կույր և/կամ հաշմանդամ: IHSS-ը թույլ է տալիս, որ այս ծառայությունները ստացողները ապահով մնան իրենց տներում: Ձեր առողջապահական մատակարարը պետք է համաձայնի, որ Ձեզ անհրաժեշտ է տնային անձնական խնամքի օգնություն և որ Դուք տնից դուրս խնամքի համար որակավորվելու վտանգի տակ կլինեք, եթե չստանաք IHSS ծառայությունները: IHSS ծրագիրը նաև կկատարի կարիքների գնահատում:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



Ձեր վարչաշրջանում հասանելի IHSS-ի մասին ավելին իմանալու համար անցեք <https://www.cdss.ca.gov/in-home-supportive-services> հղմամբ: Կամ զանգահարեք Ձեր վարչաշրջանի սոցիալական ծառայությունների տեղական գործակալություն:

## Ծառայություններ, որոնք չեք կարող ստանալ Blue Shield Promise-ի կամ Medi-Cal-ի միջոցով

Blue Shield Promise-ը և Medi-Cal-ը չեն ապահովագրի որոշ ծառայություններ: Ծառայությունները, որոնք ապահովագրված են Blue Shield Promise-ի կողմից, ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- Արտամարմնային բեղմնավորում (In vitro fertilization, IVF), որը ներառում, բայց չի սահմանափակվում անպտղության ուսումնասիրություններով կամ բուժակարգերով՝ անպտղությունն ախտորոշելու կամ բուժելու համար
- Պտղաբերության պահպանում
- Փորձարարական ծառայություններ
- Փոխադրամիջոցների փոփոխություններ
- Կոսմետիկ վիրահատություն

Blue Shield Promise-ը կարող է ապահովագրել չապահովագրված ծառայությունը, եթե դա բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է: Ձեր մատակարարը պետք է նախնական հաստատման (նախնական լիազորման) հայտ ներկայացնի Blue Shield Promise-ին՝ բացատրելով, թե ինչու է չապահովագրվող նպաստը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ:

Ավելին իմանալու համար զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

## Նոր և ընթացիկ տեխնոլոգիաների գնահատում

Blue Shield Promise-ը հետևում է առողջական խնամքի բնագավառում զարգացումներին և առաջընթացին՝ ուսումնասիրելով նոր բուժումները, դեղերը, գործողություններն ու սարքերը: Սա նաև կոչվում է «նոր տեխնոլոգիա»: Blue Shield Promise-ը հետևում է նոր տեխնոլոգիայի, որպեսզի անդամների համար երաշխավորի ապահով և արդյունավետ խնամքի մատչելիությունը: Blue Shield Promise-ը նոր տեխնոլոգիան վերանայում է բժշկական և հոգեկան առողջության գործողությունների, դեղագիտական զարգացումների և սարքերի համար: Նոր



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

տեխնոլոգիայի վերանայման խնդրանքները կարող են գալ անդամից, գործնական մասնագետից, կազմակերպությունից, Blue Shield Promise-ի վերանայող բժիշկներից կամ անձնակազմի այլ անդամներից:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

# 5. Երեխաների և երիտասարդների խնամք

Մինչև 21 տարեկան երեխաներն ու երիտասարդները կարող են ստանալ հատուկ առողջապահական ծառայություններ՝ անդամագրվելուն պես: Սա ապահովում է, որ նրանք ստանան ճիշտ կանխարգելիչ, ատամնաբուժական և հոգեկան առողջության խնամք, ներառյալ զարգացման և մասնագիտացված ծառայությունները: Այս գլուխը բացատրում է այս ծառայությունները:

## Medi-Cal երեխաների և դեռահասների համար

Մինչև 21 տարեկան անդամները անվճար ապահովագրված են անհրաժեշտ խնամքի համար: Ստորև բերված ցանկը ներառում է բժշկական առումով անհրաժեշտ ծառայություններ՝ ցանկացած արատների և ֆիզիկական կամ մտավոր ախտորոշումների բուժման կամ խնամքի համար: Ապահովագրված ծառայությունները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- Երեխաների այցեր և դեռահասների ստուգումներ (կարևոր այցեր, որոնք անհրաժեշտ են երեխաներին)
- Իմունիզացիաներ (սրսկումներ)
- Վարքագծային առողջության գնահատում և բուժում
- Հոգեկան առողջության գնահատում և բուժում, ներառյալ անհատական, խմբային և ընտանեկան հոգեթերապիա (հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններն (specialty mental health services, SMHS) ապահովագրված են վարչաշրջանի կողմից)
- Մանկության անբարենպաստ փորձառությունների (Adverse childhood experiences, ACE) սրբինինգ



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Խնամքի ընդլայնված կառավարում (Enhanced Care Management, ECM) Focus-ի երեխաների և երիտասարդների համար (Populations of Focus, POFs) (Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրի (Medi-Cal managed care, MCP) նպաստ)
- Լաբորատոր հետազոտություններ, ներառյալ արյան մեջ կապարով թունավորման հետազոտություն
- Առողջապահական և կանխարգելիչ կրթություն
- Տեսողության ծառայություններ
- Ատամնաբուժական ծառայություններ (ապահովագրվում է Medi-Cal Dental-ի ներքո)
- Լսողության ծառայություններ (ապահովագրված Կալիֆորնիայի մանկական ծառայությունների (CCS) կողմից) իրավասու երեխաների համար: Blue Shield Promise-ը կապահովագրի ծառայություններ այն երեխաների համար, ովքեր չեն որակավորվում CCS-ի համար)
- Տնային առողջապահության ծառայություններ, ինչպիսիք են մասնավոր բուժքույրական ծառայությունը (private duty nursing, PDN), աշխատանքային թերապիան, ֆիզիկական թերապիան և բժշկական սարքավորումներն ու պարագաները

Այս ծառայությունները կոչվում են Medi-Cal երեխաների եւ դեռահասների համար (հայտնի են նաև որպես վաղ և պարբերաբար զննման, ախտորոշման և բուժման (Early and Periodic Screening, Diagnostic and Treatment, EPSDT) ծառայություններ: Երեխաների և դեռահասների համար նախատեսված Medi-Cal-ի վերաբերյալ անդամներին անհրաժեշտ լրացուցիչ տեղեկությունները կարող եք գտնել այստեղ՝ <https://www.dhcs.ca.gov/services/Medi-Cal-For-Kids-and-Teens/Pages/Member-Information.aspx>: Երեխաների և դեռահասների համար Medi-Cal-ի ծառայությունները, որոնք խորհուրդ են տրվում մանկաբույժների Bright Futures ուղեցույցներում, որոնք կօգնեն Ձեզ կամ Ձեր երեխային առողջ մնալ, ապահովագրվում են անվճար: Bright Futures ուղեցույցները կարդալու համար այցելեք [https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity\\_schedule.pdf](https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf):

Խնամքի ընդլայնված կառավարումը (Enhanced Care Management, ECM) Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրի (managed care plan, MCP) նպաստ է, որը հասանելի է Կալիֆորնիայի բոլոր վարչաշրջաններում՝ աջակցելու բարդ կարիքներ ունեցող MCP անդամների խնամքի համապարփակ կառավարմանը: Քանի որ բարդ կարիքներ ունեցող երեխաներն ու երիտասարդները հաճախ արդեն իսկ սպասարկվում են մեկ կամ մի քանի գործի կառավարիչների կամ այլ ծառայություններ մատուցողների



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

կողմից առանձին համակարգերում, ECM-ն առաջարկում է բոլոր համակարգերի միջև համաձայնեցում: Այս նպաստի համար Focus-ի իրավունակ երեխաների և երիտասարդների խմբերը ներառում են.

- Երեխաներ և երիտասարդներ, որոնք անօթևան են
- Հիվանդանոցից կամ շտապ օգնության բաժանմունքից (Emergency Department, ED) օգտվելու վտանգի տակ գտնվող երեխաներ և երիտասարդներ
- Հոգեկան առողջության և/կամ թմրամիջոցների օգտագործման խախտման (Substance Use Disorder, SUD) հետ կապված լուրջ կարիքներ ունեցող երեխաներ և երիտասարդներ
- Երեխաներ և երիտասարդներ, որոնք ընգրկված են Կալիֆորնիայի մանկական ծառայություններում (California Children's Service, CCS) կամ CCS-ի Երեխայի ամբողջական մոդելում (Whole Child Model, WCM) և ունեն լրացուցիչ կարիքներ՝ CCS-ի խնդիրներից բացի
- Երեխաները և երիտասարդները, որոնք ներգրավված են Երեխաների բարեկեցության (Child Welfare) ծրագրի մեջ

ECM-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել այստեղ.

<https://www.dhcs.ca.gov/CalAIM/ECM/Documents/ECM-Children-And-Youth-POFs-Spotlight.pdf>

Բացի այդ, ECM-ի առաջատար խնամքի կառավարիչներին խրախուսվում է ստուգել, թե արդյոք ECM անդամների կարիքները համապատասխանում են MCP-ների կողմից մատուցվող համայնքային աջակցության ծառայություններին, քանի որ դրանք ավանդական բժշկական ծառայությունների կամ հաստատությունների ծախսարդյունավետ այլընտրանքներն են: Եթե ծառայությունները հակապատասխանում են և հասանելի են, անհրաժեշտ է անդամներին ուղղորդել դեպի Համայնքային օժանդակությունների ծրագիր: Երեխաները և երիտասարդները կարող են օգտվել Համայնքային օժանդակությունների բազմաթիվ ծառայություններից, ներառյալ ասթմայի կարգավորումը, բնակարանում տեղաշարժվելը, բժշկական հանգիստը և սթափեցման կենտրոնները:

Համայնքային օժանդակությունները այն ծառայություններ են, որոնք մատուցվում են Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրերի (MCP) կողմից և հասանելի են Medi-Cal-ի իրավունակ անդամներին՝ անկախ նրանից, թե արդյոք նրանք որակավորվում են ECM ծառայությունների համար:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Համայնքային օժանդակությունների մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել այստեղ.

<https://www.dhcs.ca.gov/CalAIM/Documents/DHCS-Medi-Cal-Community-Supports-Supplemental-Fact-Sheet.pdf>

Որոշ ծառայություններ, որոնք հասանելի են երեխաների և դեռահասների համար Medi-Cal-ի միջոցով, օրինակ՝ PDN-ը, համարվում են լրացուցիչ ծառայություններ: Դրանք հասանելի չեն Medi-Cal-ի 21 տարեկան և ավելի բարձր տարիքի անդամներին: Այս ծառայությունների անվճար ստանալը շարունակելու համար Դուք կամ Ձեր երեխան պետք է ընդունեք 1915(c) Տնային և համայնքահեն ծառայությունների (Home and Community-Based Service, HCBS) հրաժարումը կամ այլ Երկարաժամկետ ծառայությունների և աջակցության (Long-Term Services and Supports, LTSS) ծրագիր՝ 21 տարեկանը լրանալու ժամանակ կամ մինչև այդ: Եթե Դուք կամ Ձեր երեխան լրացուցիչ ծառայություններ եք ստանում երեխաների և դեռահասների համար նախատեսված Medi-Cal-ի միջոցով, և շուտով պետք է լրանա 21 տարեկանը, դիմեք Blue Shield Promise-ին՝ խոսելու շարունակական խնամքի ընտրության մասին:

---

## Քաջատողջ երեխայի ստուգումները և կանխարգելիչ խնամքը

Կանխարգելիչ խնամքը ներառում է կանոնավոր առողջական ստուգումներ, զննումներ, որոնք կօգնեն Ձեր բժշկին ժամանակին հայտնաբերել խնդիրները, և խորհրդատվական ծառայություններ՝ հայտնաբերելու վատառողջություն, հիվանդություններ կամ բժշկական վիճակներ, նախքան դրանք խնդիրներ կառաջացնեն: Պարբերական ստուգումներն օգնում են Ձեզ կամ Ձեր երեխայի բժշկին ցանկացած խնդիր գտնել: Խնդիրները կարող են ներառել բժշկական, ատամնաբուժական, տեսողության, լսողության, հոգեկան առողջության և ցանկացած թմրանյութի օգտագործման (ալկոհոլ կամ թմրամիջոցներ) խանգարումներ: Blue Shield Promise-ն ապահովագրում է ստուգումներ՝ խնդիրներ հայտնաբերելու



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

համար (ներառյալ՝ արյան մեջ կապարի մակարդակի գնահատումը), երբ էլ որ դա անհրաժեշտ լինի, նույնիսկ եթե դա չի կատարվում Ձեր կամ Ձեր երեխայի սովորական ստուգման պահին:

Կանխարգելիչ խնամքը ներառում է նաև պատվաստումներ (սրսկումներ), որոնք անհրաժեշտ են Ձեզ կամ Ձեր երեխային: Blue Shield Promise-ը պետք է համոզված լինի, որ անդամագրված բոլոր երեխաները ժամանակին ստանում են իրենց անհրաժեշտ բոլոր պատվաստումները (սրսկումները), երբ այցելում են իրենց բժշկին: Կանխարգելիչ խնամքի ծառայությունները և գնումները մատուցվում են անվճար և առանց նախնական հաստատման (նախնական լիազորման):

Ձեր երեխան պետք է ստուգումներ անցնի հետևյալ տարիքում.

- Ծնվելուց 2-4 օր հետո
- 1 ամսական
- 2 ամսական
- 4 ամսական
- 6 ամսական
- 9 ամսական
- 12 ամսական
- 15 ամսական
- 18 ամսական
- 24 ամսական
- 30 ամսական
- Տարին մեկ անգամ՝ 3-ից 20 տարեկանում

Քաջառոջ երեխայի ստուգումները ներառում են՝

- Ամբողջական պատմություն և ոտքից գլուխ ֆիզիկական հետազոտություն
- Տարիքին համապատասխան պատվաստումներ (սրսկումներ) (Կալիֆորնիան հետևում է Մանկաբուժության ամերիկյան ակադեմիայի Bright Futures ժամանակացույցին՝ [https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity\\_schedule.pdf](https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf))
- Լաբորատոր հետազոտություններ, ներառյալ արյան մեջ կապարով թունավորման հետազոտություն
- Առողջապահական կրթություն
- Տեսողության և լսողության ստուգում
- Բերանի խոռոչի առողջության ստուգում
- Վարքագծային առողջության գնահատում

Եթե բժիշկը ստուգման կամ գնման ժամանակ հայտնաբերում է Ձեր կամ Ձեր երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջության հետ կապված խնդիր, Դուք կամ Ձեր երեխան պետք է հետագա բժշկական օգնություն ստանաք: Blue Shield Promise-ը կապահովագրի այդ խնամքն անվճար, ներառյալ՝



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Բժիշկ, առաջնային խնամք տրամադրող բուժքույր և հիվանդանոցային խնամք
- Պատվաստումներ (սրսկումներ)՝ Ձեզ առողջությունը պահպանելու համար
- Ֆիզիկական, խոսքի/լեզվի և աշխատանքային թերապիաներ
- Տնային առողջապահության ծառայություններ, ներառյալ բժշկական սարքեր, պաշարներ և գործիքներ
- Տեսողության խնդիրների բուժում, ներառյալ ակնոցները
- Լսողության խնդիրների բուժում, ներառյալ լսողական սարքերը, երբ դրանք ապահովագրված չեն CCS-ով
- Վարքագծային առողջության բուժում առողջական խնդիրների համար, ինչպիսիք են աուտիզմի սպեկտրի խանգարումները և զարգացման այլ խանգարումները
- Դեպքի կառավարում և առողջապահական կրթություն
- Վերականգնողական վիրահատություն, որը վիրահատություն է՝ ուղղելու կամ վերականգնելու մարմնի անբնականոն կառուցվածքները, որոնք առաջանում են բնածին թերություններից, զարգացման անոմալիաներից, տրավմայից, վարակից, նորագոյացություններից կամ հիվանդություններից՝ բարելավելու գործառույթը կամ ստեղծելու բնականոն տեսք:

## Արյան մեջ կապարով թունավորման հետազոտություն

Blue Shield Promise -ում անդամագրված բոլոր երեխաները պետք է արյան կապարային թունավորման թեստ անցնեն 12 և 24 ամսականում կամ 24-ից 72 ամսականում, եթե ավելի վաղ չեն հետազոտվել: Երեխաները կարող են արյան մեջ կապարի մակարդակի ստուգման թեստ հանձնել, եթե ծնողը կամ խնամակալը ցանկանում է: Երեխաները պետք է նաև հետազոտվեն, երբ բժիշկը կարծում է, որ կյանքի փոփոխությունը երեխային վտանգի տակ է դնում:

## Օգնություն երեխաների և երիտասարդների խնամքի ծառայություններ ստանալու վերաբերյալ

Blue Shield Promise-ը կօգնի մինչև 21 տարեկան անդամներին և նրանց ընտանիքներին ստանալ իրենց անհրաժեշտ ծառայությունները:  
Blue Shield Promise-ի խնամքի համակարգողը կարող է՝



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



- Ծանոթացնել Ձեզ հասանելի ծառայությունների մասին
- Անհրաժեշտության դեպքում օգնել գտնել ցանցային կամ արտացանցային մատակարարներ
- Օգնել նշանակումներ կատարել
- Կազմակերպել բժշկական փոխադրում, որպեսզի երեխաները կարողանան հասնել իրենց ժամադրություններին
- Օգնել համակարգել խնամքը վճարովի ծառայության (FFS) Medi-Cal-ի միջոցով հասանելի ծառայությունների համար, ինչպիսիք են՝
  - Բուժում և վերականգնողական ծառայություններ հոգեկան առողջության և թմրանյութի օգտագործման խանգարումների համար
  - Բուժում աստամնաբուժական խնդիրների համար, ներառյալ ձևախախտված աստամների ուղղում

## Այլ ծառայություններ, որոնք կարող եք ստանալ Fee-for-Service (FFS) Medi-Cal-ի կամ այլ ծրագրերի միջոցով

### Ատամնաբուժական ստուգումներ

Ձեր երեխայի լնդերը մաքուր պահեք՝ ամեն օր նրբորեն սրբելով լնդերը ատամները լվացող լաթով: Սոտավորապես 4-ից 6 ամսականում սկսվում է «ատամների ծկթումը» և դուրս են գալիս ատամները: Դուք պետք է նշանակեք Ձեր երեխայի առաջին ատամնաբուժական այցը, երբ նրա առաջին ատամը դուրս գա կամ երբ լրանա նրա առաջին տարեդարձը՝ կախված նրանից, թե որը ավելի շուտ կլինի:

Հետևյալ Medi-Cal ատամնաբուժական ծառայություններն անվճար կամ էժան ծառայություններ են՝

#### 0-3 տարեկան մանուկների համար

- Մանուկների առաջին ատամնաբուժական այցը
- Մանուկների առաջին ատամնաբուժական հետազոտությունը
- Ատամնաբուժական հետազոտություններ (6 ամիսը մեկ և երբեմն ավելի հաճախ)
- Ռենտգեններ
- Ատամների մաքրում (6 ամիսը մեկ և երբեմն ավելի շատ)



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Ֆտորիդով լաքապատում (6 ամիսը մեկ և երբեմն ավելի հաճախ)
- Ատամնալիցքեր
- Ատամի հեռացումներ (ատամի հեռացում)

- Արտակարգ իրավիճակի ատամնաբուժական ծառայությունները
- \*Հանգստացում դեղերով (բժշկական տեսանկյունից անհրաժեշտության դեպքում)

4-ից 12 տարեկան երեխաներ

- Ատամնաբուժական հետազոտություններ (6 ամիսը մեկ և երբեմն ավելի շատ)
- Ռենտգեններ
- Ֆտորիդային լաք (6 ամիսը մեկ և երբեմն ավելի շատ)
- Ատամների մաքրում (6 ամիսը մեկ և երբեմն ավելի շատ)
- Սեղանատամների պաշտպանիչ թաղանթներ

- Ատամնալիցքեր
- Ատամնարմատի խողովակներ
- Ատամի հեռացումներ (ատամի հեռացում)
- Արտակարգ իրավիճակի ատամնաբուժական ծառայությունները
- \*Հանգստացում դեղերով (բժշկական տեսանկյունից անհրաժեշտության դեպքում)

13-ից 20 տարեկան երիտասարդներ

- Ատամնաբուժական հետազոտություններ (6 ամիսը մեկ և երբեմն ավելի շատ)
- Ռենտգեններ
- Ֆտորիդային լաք (6 ամիսը մեկ և երբեմն ավելի շատ)
- Ատամների մաքրում (6 ամիսը մեկ և երբեմն ավելի շատ)
- Ձևախախտված ատամների ուղղում (ամրակներ) որակավորում ունեցող անձանց համար
- Ատամնալիցքեր

- Ատամի պսակներ
- Ատամնարմատի խողովակներ
- Մասնակի և ամբողջական պրոթեզներ
- Ատամնաքարի և լնդատակի մաքրում
- Ատամի հեռացումներ (ատամի հեռացում)
- Արտակարգ իրավիճակի ատամնաբուժական ծառայությունները
- \*Հանգստացում դեղերով (բժշկական տեսանկյունից անհրաժեշտության դեպքում)

\*Մատակարարները պետք է նկատի ունենան դեղերով սեղացիան և ընդհանուր անզգայացումը, երբ նրանք որոշում են և հիմնավորում են պատճառը, թե ինչու տեղային անզգայացումը բժշկական տեսանկյունից հարմար չէ, իսկ ատամնաբուժական բուժումը նախապես հաստատված է կամ նախնական հաստատման (նախնական լիազորման) կարիք չունի:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

Սրանք մի քանի պատճառներ են, թե ինչու տեղային անզգայացում չի կարող օգտագործվել, և դրա փոխարեն կարող են օգտագործվել դեղերով հանգստացում կամ ընդհանուր անզգայացում օգտագործվել:

- Ֆիզիկական, վարքագծային, զարգացման կամ էմոցիոնալ խնդիր, որը խանգարում է հիվանդին արձագանքել մատակարարի կողմից բուժում իրականացնելու փորձերին
- Խոշոր վերականգնողական կամ վիրաբուժական միջամտություններ
- Չհամագործակցող երեխա
- Սուր վարակ ներարկման տեղում
- Ցավը վերահսկելու տեղային անզգայացնող միջոցի անարդյունավետություն

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելին իմանալ ատամնաբուժական ծառայությունների վերաբերյալ, զանգահարեք Medi-Cal ատամնաբուժական ծրագրին 1-800-322-6384 (TTY 1-800-735-2922 կամ 711) հեռախոսահամարով: Կամ այցելեք <https://smilecalifornia.org/>:

### Կանխարգելիչ կրթության լրացուցիչ օգնության ծառայություններ

Եթե անհանգստանում եք, որ Ձեր երեխան չի մասնակցում և լավ չի սովորում դպրոցում, խոսեք երեխայի բժշկի, ուսուցիչների կամ դպրոցի վարիչների հետ: Ի լրումն Blue Shield Promise-ով ապահովագրվող Ձեր բժշկական նպաստների, կան ծառայություններ, որոնք դպրոցը պետք է տրամադրի, որպեսզի օգնի Ձեր երեխային սովորել և հետ չմնա: Ծառայությունները, որոնք կարող են տրամադրվել Ձեր երեխային սովորելու համար, ներառում են.

- Խոսքի և լեզվի ծառայություններ
- Հոգեբանական ծառայություններ
- Ֆիզիկական թերապիա
- Աշխատանքային թերապիա
- Օժանդակ տեխնոլոգիա
- Սոցիալական աշխատանքի ծառայություններ
- Խորհրդատվական ծառայություններ
- Դպրոցական բուժքրոջ ծառայություններ
- Փոխադրում դեպի դպրոց և դպրոցից տուն

Կալիֆորնիայի կրթության վարչությունը տրամադրում և վճարում է այդ ծառայությունների համար: Ձեր երեխայի բժիշկների և ուսուցիչների հետ միասին Դուք կարող եք կազմել անհատական ծրագիր, որը լավագույնս կօգնի Ձեր երեխային:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal/](https://blueshieldca.com/promise/medi-cal/):

# 6. Խնդիրների հաղորդում և լուծում

Խնդիրների հաղորդման և լուծելու երկու եղանակ կա.

- Օգտագործեք **գանգատը (բողոքը)**, երբ խնդիր ունեք կամ դժգոհ եք Blue Shield Promise-ից կամ մատակարարից, կամ մատակարարից ստացած Ձեր առողջական խնամքից կամ բուժումից:
- Օգտագործեք **բողոքարկման** հնարավորությունը, եթե համաձայն չեք Blue Shield Promise-ի որոշման հետ՝ փոխելու Ձեր ծառայությունները կամ չապահովագրելու դրանք:

Դուք իրավունք ունեք բողոքներ և բողոքարկումներ ներկայացնել Blue Shield Promise-ին, որպեսզի մեզ հայտնեք Ձեր խնդրի մասին: Սա Ձեզնից չի խլի Ձեր օրինական իրավունքներից կամ բուժումներից որևէ մեկը: Մենք խտրականություն չեն դրսևորի կամ վրեժ չենք լուծի Ձեզնից՝ մեզ բողոք ներկայացնելու կամ խնդիրների մասին հայտնելու համար: Ձեր խնդրի մասին մեզ տեղյակ պահելը կօգնի, որ բարելավենք խնամքը բոլոր անդամների համար:

Դուք կարող եք նախ կապ հաստատել Blue Shield Promise-ի հետ՝ մեզ տեղեկացնելով Ձեր խնդրի մասին: Զանգահարեք մեզ 08:00-ից 18:00-ը 1-800-605-2556 (TTY 711) համարով կամ անցեք [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal) հղմամբ: Պատմեք մեզ Ձեր խնդրի մասին:

Եթե Ձեր բողոքը կամ բողոքարկումը դեռևս չի լուծվել 30 օր հետո, կամ եթե դժգոհ եք արդյունքից, կարող եք զանգահարել Կալիֆորնիայի Կառավարվող առողջական խնամքի բաժին (DMHC): Խնդրեք DMHC-ին վերանայել Ձեր բողոքը կամ անցկացնել Անկախ բժշկական վերանայում (Independent Medical Review, IMR): Եթե Ձեր հարցը հրատապ է, ինչպիսին է Ձեր առողջությանը սպառնացող լուրջ վտանգը, Դուք կարող եք անմիջապես զանգահարել DMHC՝ առանց նախապես բողոք ներկայացնելու կամ



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

բողոքարկել Blue Shield Promise-ին: Դուք կարող եք զանգահարել DMHC՝ 1-888-466-2219 (TTY 1-877-688-9891 կամ 711) անվճար հեռախոսահամարով: Կամ այցելել՝ <https://www.dmhc.ca.gov>:

Կալիֆոռնիայի Առողջապահական խնամքի սպասարկման բաժնի (DHCS) Medi-Cal-ի Կառավարվող խնամքի Օմբուդսմենը ևս կարող է օգնել: Նրանք կարող են օգնել, եթե դժվարություն ունեք միանալու, փոխելու կամ հեռանալու առողջապահական ծրագրից: Նրանք նաև կարող են օգնել, եթե տեղափոխվել եք և դժվարություն ունեք Ձեր Medi-Cal-ը Ձեր նոր վարչաշրջան փոխանցելու առնչությամբ: Դուք կարող եք զանգահարել Օմբուդսմենին երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 17:00, 1-888-452-8609 հեռախոսահամարով: Հեռախոսագանգն անվճար է:

Կարող եք նաև Ձեր վարչաշրջանի իրավունակության գրասենյակին բողոք ներկայացնել Ձեր Medi-Cal-ի իրավունակության վերաբերյալ: Եթե վստահ չեք, թե ում կարող եք ներկայացնել Ձեր բողոքը, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Ձեր առողջության ապահովագրության սխալ տեղեկությունների մասին հաղորդելու համար զանգահարեք Medi-Cal-ին երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 17:00, 1-800-541-5555 հեռախոսահամարով:

---

## Գանգատներ

Գանգատը (բողոքը) այն է, երբ Դուք խնդիր ունեք կամ դժգոհ եք Blue Shield Promise-ից կամ մատակարարից ստացած Ձեր ծառայություններից: Գանգատ ներկայացնելու համար չկա ժամանակային սահմանափակում: Դուք ցանկացած ժամանակ կարող եք հեռախոսով, գրավոր՝ փոստով, կամ առցանց գանգատ ներկայացնել Blue Shield Promise-ին: Ձեր լիազորված ներկայացուցիչը կամ մատակարարը կարող է նաև Ձեր թույլտվությամբ բողոք ներկայացնել Ձեզ համար:

- **Հեռախոսով.** Զանգահարեք Blue Shield Promise 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով 08:00-ից 18:00: Նշեք Ձեր Առողջապահական ծրագրի ID համարը, Ձեր անունը և Ձեր գանգատի պատճառը:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- **Փոստով.** Չանգահարեք Blue Shield Promise 1-800-605-2556 (TTY 711) համարով և խնդրեք, որ Ձեզ ուղարկեն ձևաթուղթը: Ձևաթուղթն ստանալուց հետո, լրացրեք այն: Անպայման ընդգրկեք Ձեր անունը, առողջապահական ծրագրի նույնականացման համարը և Ձեր գանգատի պատճառը: Մեզ հայտնեք, թե ինչ է պատահել և ինչպես կարող ենք օգնել Ձեզ:

Ձևաթուղթը փոստով առաքեք հետևյալ հասցեով՝

Blue Shield of California Promise Health Plan  
Grievance Department  
3840 Kilroy Airport Way  
Long Beach, CA 90806-2452

Ձեր բժշկի ընդունարանը կունենա գանգատի ձևաթղթեր:

- **Առցանց.** Այցելեք Blue Shield Promise-ի կայքը՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե գանգատի լրացման համար օգնության կարիք ունեք, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք անվճար լեզվական ծառայություններ մատուցել Ձեզ: Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Ձեր գանգատն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում Blue Shield Promise-ը Ձեզ նամակ կուղարկի՝ տեղեկացնելով, որ ստացել ենք այն: 30 օրվա ընթացքում, մենք Ձեզ կուղարկենք մեկ այլ նամակ, որը կհայտնի, թե ինչպես ենք լուծել Ձեր խնդիրը: Եթե Blue Shield Promise զանգահարեք այն բողոքի մասին, որը չի վերաբերում առողջապահական խնամքի ապահովագրությանը, բժշկական անհրաժեշտությանը, փորձառական կամ հետազոտական բնույթ ունեցող բուժմանը, և Ձեր բողոքը լուծվում է մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, հնարավոր է, որ նամակ չստանաք:

Եթե Դուք ունեք հրատապ խնդիր, որը կապված է լուրջ առողջական խնդիրների հետ, մենք կսկսենք արագացված (արագ) վերանայում: Մենք որոշում կկայացնենք 72 ժամվա ընթացքում: Արագացված վերանայում խնդրելու համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Ձեր բողոքը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում մենք կորոշենք, թե ինչպես ենք վերաբերվելու Ձեր բողոքին և արդյոք արագացնելու ենք այն: Եթե մենք որոշենք, որ չենք արագացնելու Ձեր գանգատի գործընթացը, մենք Ձեզ տեղյակ կպահենք, որ Ձեր



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

գանգատը կլուծենք 30 օրվա ընթացքում: Դուք կարող եք ուղղակիորեն կապվել DMHC-ի հետ ցանկացած պատճառով, ներառյալ այն դեպքերը, երբ կարծում եք, որ Ձեր դիմումը համապատասխանում է արագացված վերանայման կանոններին, երբ Blue Shield Promise-ը չի պատասխանում Ձեզ 72 ժամվա ընթացքում կամ երբ դժգոհ եք Blue Shield Promise-ի որոշումից:

Medi-Cal Rx դեղատան նպաստների հետ կապված գանգատները ենթական չեն Blue Shield Promise-ի բողոքարկման գործընթացով անցնելուն և իրավասու չեն Անկախ բժշկական վերանայման համար: Անդամները կարող են գանգատներ ներկայացնել Medi-Cal Rx դեղատան նպաստների վերաբերյալ՝ գանգահարելով 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) և սեղմելով 7 կամ 711: Կամ այցելեք <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>:

Դեղատնային նպաստների հետ կապված գանգատները և բողոքարկումները, որոնք ենթակա չեն Medi-Cal Rx-ի, կարող են իրավասու լինել Անկախ բժշկական վերանայման համար: DMHC-ի անվճար հեռախոսահամարն է՝ 1-888-466-2219 (TTY 1-877-688-9891): Անկախ բժշկական վերանայման/գանգատի ձևաթուղթը և հրահանգները կարող եք գտնել առցանց DMHC-ի կայքում՝ <https://www.dmhc.ca.gov/>:

## Բողոքարկումներ

Բողոքարկումը տարբերվում է գանգատից: Բողոքարկումը իրենից ներկայացնում է դիմում, որի համաձայն Blue Shield Promise-ը պետք է վերանայի և փոխի Ձեզ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մեր կայացրած որոշումը: Եթե Ձեզ ուղարկել ենք Գործողության ծանուցագրի (NOA) նամակ, Ձեզ հայտնելով, որ մերժում, ուշացնում, փոխում կամ դադարեցնում ենք ծառայությունը, և Դուք համաձայն չեք մեր որոշման հետ, կարող եք խնդրել մեզ այն բողոքարկել: Ձեր լիազորված ներկայացուցիչը կամ մատակարարը ևս կարող են խնդրել մեզ բողոքարկել Ձեր անունից՝ Ձեր գրավոր թույլտվությամբ:

Դուք պետք է բողոքարկում խնդրեք Blue Shield Promise-ից ուղարկված NOA-ի ստացման ամսաթվին հաջորդող 60 օրացուցային օրվա ընթացքում: Եթե մենք որոշել ենք նվազեցնել, կասեցնել կամ դադարեցնել ծառայությունը, որը Դուք այժմ ստանում



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ գանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal/](https://blueshieldca.com/promise/medi-cal/):

Եք, Դուք կարող եք շարունակել ստանալ այդ ծառայությունը, քանի դեռ սպասում եք Ձեր բողոքարկման որոշմանը: Սա կոչվում է Առկախված վճարելի օգնություն (Aid Paid Pending): Առկախված վճարելի օգնություն ստանալու համար Դուք պետք է բողոքարկում խնդրեք մեզնից 10 օրվա ընթացքում՝ սկսած NOA-ի վրա նշված ամսաթվից կամ մինչև այն ամսաթիվը, երբ մենք Ձեզ տեղեկացրել ենք, որ Ձեր ծառայությունը կդադարեցվի, կախված այն բանից, թե դրանցից որն է ավելի ուշ տեղի ունեցել: Եթե այս հանգամանքներում բողոքարկում խնդրեք, Ձեր ծառայությունը կշարունակվի, քանի դեռ սպասում եք Ձեր բողոքարկման վերաբերյալ որոշմանը:

Բողոքարկումը կարող եք ներկայացնել հեռախոսով, փոստով (գրավոր) կամ առցանց.

- **Հեռախոսով.** Չանգահարեք Blue Shield Promise 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով 08:00-ից մինչև 18:00: Նշեք Ձեր անունը, առողջապահական ծրագրի ID համարը և Ձեր կողմից բողոքարկվող ծառայությունը:
- **Փոստով.** Չանգահարեք Blue Shield Promise 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով և խնդրեք, որ Ձեզ ուղարկեն ձևաթուղթը: Ձևաթուղթն ստանալուց հետո, լրացրեք այն: Անպայմանորեն ընդգրկեք Ձեր անունը, առողջապահական ծրագրի ID համարը և Ձեր կողմից բողոքարկվող ծառայությունը:

Ձևաթուղթը փոստով առաքեք հետևյալ հասցեով՝

Blue Shield of California Promise Health Plan  
Grievance Department  
3840 Kilroy Airport Way  
Long Beach, CA 90806-2452

Ձեր բժշկի ընդունարանը կունենա գանգատի մատչելի ձևաթղթեր:

- **Առցանց.** Այցելեք Blue Shield Promise-ի կայքը: Անցեք [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal) հղմամբ:

Եթե օգնության կարիք ունեք բողոքարկման կամ սպասվող վճարված օգնության, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք անվճար լեզվական ծառայություններ մատուցել Ձեզ: Չանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում Blue Shield Promise-ը նամակ կուղարկի Ձեզ՝ տեղեկացնելով, որ ստացել ենք այն: 30 օրվա ընթացքում մենք Ձեզ կտեղեկացնենք մեր բողոքարկման որոշման մասին և կուղարկենք բողոքարկման մասին ծանուցման (NAR) նամակ: Եթե



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



մենք Ձեզ չտրամադրենք մեր բողոքարկման որոշումը 30 օրվա ընթացքում, Դուք կարող եք պահանջել Նահանգային լսումներ Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների բաժնից (CDSS) և Անկախ բժշկական վերանայում (IMR) DMHC-ից:

Սակայն եթե սկզբում Նահանգային լսում եք խնդրեք, և Ձեր կոնկրետ հարցերը լուծելու նպատակով անցկացված լսումն արդեն իսկ կայացել է, Դուք չեք կարող IMR խնդրել DMHC-ից նույն հարցերի վերաբերյալ: Այս դեպքում վերջնական խոսքը կպատկանի Նահանգային լսմանը: Բայց Դուք դեռ կարող եք բողոք ներկայացնել DMHC-ին, եթե Ձեր խնդիրները չեն համապատասխանում IMR-ի կանոններին, նույնիսկ եթե Նահանգային լսումն արդեն իսկ տեղի է ունեցել:

Եթե Դուք կամ Ձեր բժիշկը ցանկանում եք, որ մենք կայացնենք արագ որոշում, քանի որ Ձեր բողոքարկման լուծման համար պահանջված ժամանակը Ձեր կյանքը, առողջությունը կամ գործելու կարողությունը վտանգի կենթարկի, կարող եք արագացված (արագ) վերանայում խնդրել: Արագացված վերանայում խնդրելու համար զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Մենք որոշում կկայացնենք Ձեր բողոքարկումն ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:

## Ինչ անել բողոքարկման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում

Եթե բողոքարկում եք խնդրել և ստացել եք NAR նամակ, որը Ձեզ հայտնում է, որ մենք չենք փոխել մեր որոշումը, կամ այդպես էլ չեք ստացել NAR նամակ, և անցել է 30 օր, ապա կարող եք.

- **Նահանգային լսում** խնդրել Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժնից (Department of Social Services, CDSS), և դատավորը կվերանայի Ձեր գործը: CDSS-ի անվճար հեռախոսահամարն է 1-800-743-8525 (TTY 1-800-952-8349): Դուք կարող եք նաև խնդրել Նահանգային լսումներ առցանց՝ <https://www.cdss.ca.gov> հղմամբ: Նահանգային լսում խնդրելու ավելի շատ տեղանակներ կարելի է գտնել ստորև, այս գլխի «Նահանգային լսումներ» բաժնում:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Ներկայացրեք Անկախ բժշկական վերանայման/գանգատի ձևաթուղթը Կառավարվող առողջական խնամքի բաժին (DMHC), որպեսզի Blue Shield Promise-ը վերանայի որոշումը: Եթե Ձեր բողոքը համապատասխանում է DMHC-ի Անկախ բժշկական վերանայման (IMR) գործընթացին, արտաքին բժիշկը, որը Blue Shield Promise-ի անդամ չէ, կվերանայի Ձեր գործը և որոշում կկայացնի, որին պետք է հետևի Blue Shield Promise-ը:

DMHC-ի անվճար հեռախոսահամարն է՝ 1-888-466-2219 (TTY 1-877-688-9891): IMR-ի/Գանգատի ձևաթուղթը և հրահանգները կարող եք գտնել առցանց՝ DMHC-ի կայքում՝ <https://www.dmhc.ca.gov>:

Դուք ոչ մի վճարում չեք կատարի Նահանգային լսման կամ IMR-ի համար:

Կարող եք միաժամանակ և՛ Նահանգային լսում, և՛ IMR խնդրել: Սակայն եթե սկզբում Նահանգային լսում եք խնդրեք, և Ձեր կոնկրետ հարցերը լուծելու նպատակով անցկացված լսումն արդեն իսկ կայացել է, Դուք չեք կարող IMR խնդրել DMHC-ից նույն հարցերի վերաբերյալ: Այս դեպքում վերջնական խոսքը կպատկանի Նահանգային լսմանը: Բայց Դուք դեռ կարող եք բողոք ներկայացնել DMHC-ին, եթե խնդիրները չեն համապատասխանում IMR-ին, նույնիսկ եթե նահանգային լսումն արդեն իսկ տեղի է ունեցել:

Ստորև տրված բաժինները Ձեզ հավելյալ տեղեկություններ կտան Նահանգային լսման և IMR խնդրելու կերպի մասին:

Medi-Cal Rx դեղատան նպաստների հետ կապված գանգատներ և բողոքարկումները չեն քննարկվում Blue Shield Promise-ի կողմից: Medi-Cal Rx դեղատան նպաստների վերաբերյալ բողոքներ և բողոքարկումներ ներկայացնելու համար գանգահարեք 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) և սեղմեք 7 կամ 711: Դեղատնային նպաստների հետ կապված գանգատները և բողոքարկումները, որոնք ենթակա չեն Medi-Cal Rx-ի, կարող են իրավասու լինել Անկախ բժշկական վերանայման համար (Independent Medical Review, IMR) DMHC-ի կողմից:

Եթե Դուք համաձայն չեք Ձեր Medi-Cal Rx դեղատան նպաստի հետ կապված որոշման հետ, կարող եք նահանգային լսում խնդրել: Դուք չեք կարող DMHC-ից խնդրել IMR՝ Medi-Cal Rx դեղատան նպաստների որոշումների համար:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Գանգատներ և Անկախ բժշկական վերանայումներ կառավարվող առողջապահական խնամքի վարչության (DMHC) հետ

IMR-ը այն է, երբ Ձեր գործը վերանայում է Blue Shield Promise-ի հետ կապ չունեցող, երրորդ կողմ հանդիսացող բժիշկ: IMR ստանալու ցանկության դեպքում Դուք նախ պետք է ոչ շտապ խնդիրների հետ կապված բողոքարկում ներկայացնեք Blue Shield Promise-ին: Եթե Blue Shield Promise-ից 30 օրացուցային օրվա ընթացքում պատասխան չեք ստացել, կամ եթե դժգոհ եք Blue Shield Promise-ի որոշումից, ապա կարող եք դիմել IMR-ի համար: IMR-ի համար պետք է դիմեք բողոքարկման վերաբերյալ որոշման մասին Ձեզ ծանուցող նամակի ամսաթվին հաջորդող 6 ամսվա ընթացքում, բայց Դուք ունեք ընդամենը 120 օր՝ Նահանգային լսում խնդրելու համար: Այսպիսով, եթե ցանկանում եք դիմել IMR-ի և Նահանգային լսման համար, Ձեր բողոքը ներկայացրեք որքան հնարավոր է շուտ:

Հիշեք, որ եթե սկզբում Նահանգային լսում եք խնդրեք, և Ձեր կոնկրետ հարցերը լուծելու նպատակով անցկացված լսումն արդեն իսկ կայացել է, Դուք չեք կարող IMR խնդրել DMHC-ից նույն հարցերի վերաբերյալ: Այս դեպքում վերջնական խոսքը կպատկանի Նահանգային լսմանը: Բայց Դուք դեռ կարող եք բողոք ներկայացնել DMHC-ին, եթե խնդիրները չեն համապատասխանում IMR-ին, նույնիսկ եթե նահանգային լսումն արդեն իսկ տեղի է ունեցել:

Թերևս կարողանաք IMR ստանալ անմիջապես՝ առանց նախ բողոքարկում ներկայացնելու Blue Shield Promise-ին: Սա պատահում է այնպիսի դեպքերում, երբ Ձեր առողջական խնդիրը հրատապ է, ինչպես օրինակ՝ Ձեր առողջությանը սպառնացող լուրջ վտանգը:

Եթե Ձեր բողոքը DMHC-ին չի որակավորում Ձեզ IMR-ի համար, DMHC-ը դեռ կվերանայի Ձեր բողոքը՝ համոզվելու, որ Blue Shield Promise-ը ճիշտ որոշում է կայացրել, երբ բողոքարկում եք դրա մերժումը:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Կալիֆորնիայի Կառավարվող առողջապահական խնամքի բաժինը պատասխանատու է առողջապահական խնամքի սպասարկման ծրագրերի կարգավորման համար: Եթե Ձեր առողջապահական ծրագրի դեմ բողոք ունեք, ապա նախքան բաժին դիմելը, պետք է զանգահարեք Ձեր առողջապահական ծրագրին՝ **Հաճախորդների սպասարկման բաժնի 1-800-605-2556 (TTY 711)** հեռախոսահամարով, և օգտագործեք Ձեր առողջապահական ծրագրի բողոքի գործընթացը: Բողոքի այս գործընթացից օգտվելը չի սահմանափակի Ձեզ հասանելի որևէ օրինական իրավունքը կամ միջոցները: Շտապ օգնության հետ կապված բողոքի, Ձեր առողջապահական ծրագրի կողմից անբավարար լուծում ստացած բողոքի կամ 30 օրվա ժամկետում չլուծված բողոքի կապակցությամբ օգնություն ստանալու համար կարող եք զանգահարել բաժին: Կարող եք նաև Անկախ բժշկական վերանայման (Independent Medical Review, IMR) համար իրավունակ լինել: Եթե IMR-ի իրավունակ եք, ապա IMR-ի գործընթացը Ձեզ կընձեռի առողջապահական ծրագրի կողմից կայացված բժշկական որոշումների անաչառ վերանայման հնարավորություն՝ առաջարկված ծառայության կամ բուժման բժշկական անհրաժեշտության, փորձնական կամ հետազոտական բնույթի բուժումն ապահովագրելու որոշումների, ինչպես նաև արտակարգ իրավիճակի կամ հրատապ բժշկական ծառայությունները փոխհատուցելու վեճերի առնչությամբ: Բաժինը նաև ունի անվճար հեռախոսահամար՝ **(1-888-466-2219)** և TDD հեռախոսագիծ՝ **(1-877-688-9891)**՝ լսողության կամ խոսքի դժվարություններ ունեցող անձանց համար: Բաժնի կայքէջում՝ [www.dmhc.ca.gov](http://www.dmhc.ca.gov), առկա են զանգատի ձևաթղթեր, IMR-ի դիմումի ձևաթղթեր և առցանց հրահանգներ:

## Նահանգային լուծումներ

Նահանգային լուծումը իրենից ներկայացնում է հանդիպում Blue Shield Promise-ի և Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժնի (CDSS) դատավորի հետ: Դատավորը կօգնի լուծել Ձեր խնդիրը և կորոշի, թե արդյոք Blue Shield Promise-ը ճիշտ որոշում է կայացրել: Դուք իրավունք ունեք Նահանգային լուծում խնդրել այն բանից հետո, երբ արդեն բողոքարկում եք ներկայացրել Blue Shield Promise-ին և այնուամենայնիվ դժգոհ եք մեր որոշումից, կամ եթե 30 օր անց չեք ստացել Ձեր բողոքարկման վերաբերյալ որոշումը:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժնի 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](http://blueshieldca.com/promise/medi-cal):

Դուք պետք է նահանգային լսում խնդրեք մեր NAR նամակի ամսաթվին հաջորդող 120 օրում: Եթե մենք Ձեր բողոքարկման ընթացքում տվել ենք Ձեզ առկախված վճարելի օգնությունը, և Դուք ցանկանում եք, որ այն շարունակվի մինչև Ձեր նահանգային լսումների վերաբերյալ որոշում կայացվի, Դուք պետք է խնդրեք նահանգային լսում անցկացնել մեր NAR նամակը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում կամ մինչև մեր կողմից նշված ամսաթիվը Ձեր ծառայություն(ներ)ը կդադարեցվի (կդադարեցվեն), կախված նրանից, թե որն է ավելի ուշ:

Եթե օգնության կարիք ունեք, որպեսզի վստահ լինեք, որ առկախված վճարելի օգնությունը կշարունակվի այնքան ժամանակ, մինչև Ձեր նահանգային լսումների վերաբերյալ վերջնական որոշում կայացվի, դիմեք Blue Shield Promise-ին 08:00-ից 18:00՝ զանգահարելով 1-800-605-2556 հեռախոսահամարով: Եթե լսելու կամ խոսելու հետ խնդիր ունեք, հավաքեք 711: Ձեր լիազորված ներկայացուցիչը կամ մատակարարը կարող է Ձեզ համար նահանգային լսումներ խնդրել Ձեր գրավոր թույլտվությամբ:

Երբեմն Դուք կարող եք խնդրել Նահանգային լսում՝ առանց մեր բողոքարկման գործընթացը ավարտելու:

Օրինակ, Դուք կարող եք խնդրել նահանգային լսում՝ առանց մեր բողոքարկման գործընթացն ավարտելու, եթե Blue Shield Promise-ը Ձեզ ճիշտ կամ ժամանակին չի տեղեկացրել Ձեր ծառայությանների մասին: Սա կոչվում է Հարմար սպառում (Deemed Exhaustion): Ահա Հարմար սպառման որոշ օրինակներ՝

- Մենք NOA կամ NAR նամակը հասանելի չենք դարձրել Ձեր նախընտրած լեզվով:
- Մենք սխալ ենք թույլ տվել, որը ազդեցություն ունի Ձեր որևէ իրավունքի վրա:
- Մենք Ձեզ NOA նամակ չենք տվել:
- Մենք Ձեզ NAR նամակ չենք տվել:
- Մենք սխալ ենք թույլ տվել մեր NAR նամակում:
- Մենք որոշում չենք կայացրել Ձեր բողոքարկման վերաբերյալ 30 օրվա ընթացքում:
- Մենք որոշեցինք, որ Ձեր գործը հրատապ է, բայց չպատասխանեցինք Ձեր բողոքարկման 72 ժամվա ընթացքում:

Նահանգային լսումը կարող եք խնդրել հետևյալ ձևերով.

- **Հեռախոսով.** Չանգահարեք CDSS-ի Նահանգային լսումների բաժին 1-800-743-8525 (TTY 1-800-952-8349 կամ 711) հեռախոսահամարով



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:

Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- **Փոստով.** Լրացրեք ձևաթուղթը, որը ստացել էք Ձեր բողոքարկման որոշման ծանուցագրի հետ, և այն փոստով ուղարկեք հետևյալ հասցեով՝  
California Department of Social Services  
State Hearings Division  
P.O. Box 944243, MS 09-17-433  
Sacramento, CA 94244-2430
- **Առցանց.** Կարող եք լսում խնդրել առցանց՝ [www.cdss.ca.gov](http://www.cdss.ca.gov) կայքում:
- **Փոստով.** Լրացրեք ձևաթուղթը, որը ստացել էք Ձեր բողոքարկման որոշման ծանուցագրի հետ, և փոստով ուղարկեք այն [Scopeofbenefits@dss.ca.gov](mailto:Scopeofbenefits@dss.ca.gov) հասցեով
  - Նշում. Եթե այն ուղարկում եք էլ. փոստով, խնդրում ենք հասկանալ, որ կա վտանգ, որ Նահանգային լսումների բաժնից բացի՝ մեկ այլ անձ նույնպես կարող է մուտք գործել Ձեր էլ. փոստ: Դիտարկեք Ձեր հայտն ուղարկելու ավելի անվտանգ եղանակ:
- **Ֆաքսով.** Լրացրեք ձևաթուղթը, որը ստացել էք Ձեր բողոքարկման վերաբերյալ որոշման ծանուցագրի հետ, և ֆաքսով ուղարկեք այն Նահանգային լսումների բաժին՝ 916-309-3487 համարով, կամ զանգահարեք 1-833-281-0903 անվճար հեռախոսահամարով:

Եթե Նահանգային լսում խնդրելու համար օգնության կարիք ունեք, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք անվճար լեզվական ծառայություններ մատուցել Ձեզ: Զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Լսման ընթացքում Դուք դատավորին պետք է հայտնեք, թե ինչու համաձայն չեք Blue Shield Promise-ի որոշման հետ: Blue Shield Promise-ը դատավորին պետք է տեղեկացնի, թե ինչպես ենք մենք կայացրել մեր որոշումը: Ձեր գործի որոշման համար դատավորից կարող է մինչև 90 օր պահանջվել: Blue Shield Promise-ը պարտավոր է հետևել դատավորի որոշման:

Եթե ցանկանում եք, որ CDSS-ը կայացնի արագ որոշում, քանի որ Նահանգային լսում ունենալու համար պահանջված ժամանակը Ձեր կյանքը, առողջությունը կամ լրիվ գործելու կարողությունը վտանգի կենթարկի, Դուք, Ձեր լիազոր ներկայացուցիչը կամ Ձեր մատակարարը կարող եք CDSS-ին դիմելով արագացված (արագ) Նահանգային լսում խնդրել: CDSS-ը պետք է որոշում կայացնի ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, երբ նրանք կստանան Ձեր ամբողջական գործը Blue Shield Promise-ից:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](http://blueshieldca.com/promise/medi-cal):

## Խարդախություն, վատնում և չարաշահում

Եթե կասկածում եք, որ մատակարարը կամ Medi-Cal ստացող անձը կատարել է խարդախություն, վատնում կամ չարաշահում, Ձեր պարտավորությունն է հայտնել այդ մասին՝ զանգահարելով գաղտնի և անվճար 1-800-822-6222 հեռախոսահամարին կամ զանգատ ներկայացնելով առցանց՝ <https://www.dhcs.ca.gov/>:

Մատակարարի խարդախությունը, վատնումը և չարաշահումը ներառում է՝

- Բժշկական արձանագրությունների կեղծումը
- Ավելի մեծ քանակով դեղեր նշանակելը, քան բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է
- Բժշկական անհրաժեշտությունից ավելի մեծ ծավալի առողջական խնամքի ծառայությունների մատուցելը
- Չմատուցված ծառայությունների համար հաշիվ ուղարկելը
- Մասնագիտական ծառայությունների համար հաշիվ ուղարկելը, երբ մասնագետը չի մատուցել ծառայությունը
- Անվճար կամ զեղչված ապրանքներ և ծառայություններ առաջարկել անդամներին՝ ազդելու անդամի կողմից մատակարարի ընտրության վրա:
- Փոխել անդամի առաջնային խնամքի մատակարարին՝ առանց անդամի իմացության

Խարդախությունը, վատնումը և չարաշահումը նպաստներ ստացող անձի կողմից ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- Առողջապահական ծրագրի նույնականացման քարտը կամ Medi-Cal-ի Նպաստների նույնականացման քարտը (BIC) փոխ տալը, վաճառելը կամ այլ անձի տալը
- Նման կամ նույն բուժումներն ու դեղերը մեկից ավելի մատակարարից ստանալը
- Շտապ օգնության կայան գնալը, երբ այն արտակարգ իրավիճակ չէ
- Ուրիշի Սոցիալական ապահովության համարի կամ առողջապահական ծրագրի ճանաչողական համարի օգտագործումը
- Բժշկական և ոչ բժշկական փոխադրումներ կատարելը ոչ առողջապահական ծառայությունների համար, Medi-Cal-ի կողմից չապահովագրված ծառայությունների համար, կամ երբ բժշկական ժամադրություն կամ դեղատոմս վերցնելու անհրաժեշտություն չկա



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal/](https://blueshieldca.com/promise/medi-cal/):

Խարդախության, վատնման կամ չարաշահման մասին հաղորդելու համար նշեք այն անձի անունը, հասցեն և ID համարը, որը կատարել է խարդախությունը, վատնումը կամ չարաշահումը: Տվեք ինչքան հնարավոր է շատ տեղեկություններ տվյալ անձի մասին, ինչպես օրինակ՝ հեռախոսահամարը կամ մասնագիտությունը, եթե նա մատակարար է: Տվեք միջադեպերի ամսաթվերը և ամփոփումը, թե ինչ է իսկապես պատահել:

Ձեր տեղեկագիրը ուղարկեք հետևյալ հասցեով՝

Blue Shield Promise Health Plan  
Special Investigations Unit  
3840 Kilroy Airport Way  
Long Beach, CA 90806-2452

Կարող եք նաև զանգահարել Համապատասխանության օգնության գիծ՝ 1-855-296-9083 հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, կամ տեղեկատվությունը ուղարկել [PromiseStopfraud@blueshieldca.com](mailto:PromiseStopfraud@blueshieldca.com) հասցեով, կամ հաղորդել տեղեկատվությունն առցանց՝ [Blueshieldcaexternal.ethicspoint.com](https://blueshieldcaexternal.ethicspoint.com) հղմամբ: Բոլոր հաղորդումները կարելի է ուղարկել անանուն:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



# 7. Իրավունքներ և պարտավորություններ

Որպես Blue Shield Promise-ի անդամ, Դուք ունեք որոշակի իրավունքներ և պարտավորություններ: Այս գլուխը կբացատրի այդ իրավունքները և պարտավորությունները: Այս գլուխը նաև ներառում է օրինական ծանուցումներ, որոնց իրավունքն ունեք որպես Blue Shield Promise-ի անդամ:

## Ձեր իրավունքները

Սրանք են Ձեր իրավունքները և պարտավորությունները որպես Blue Shield Promise-ի անդամ:

- Արժանանալ հարգալից և արժանապատիվ վերաբերմունքի՝ պատշաճ ուշադրություն դարձնելով Ձեր գաղտնիության իրավունքին և Ձեր բժշկական այնպիսի տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտությանը, ինչպիսիք են բժշկական պատմությունը, հոգեկան և ֆիզիկական վիճակը կամ բուժումը, ինչպես նաև վերարտադրողական կամ սեռական առողջությունը
- Տեղեկություններ ստանալ առողջապահական ծրագրի և դրա ծառայությունների վերաբերյալ, ներառյալ՝ ապահովագրված ծառայությունները, մատակարարները, գործող բժիշկները և անդամի իրավունքներն ու պարտավորությունները
- Ձեր նախընտրած լեզվով ամբողջությամբ թարգմանված անդամների մասին գրավոր տեղեկությունները ստանալ, ներառյալ բոլոր բողոքների և բողոքարկման ծանուցումները
- Խորհուրդներ տալ Blue Shield Promise-ի անդամի իրավունքների և պարտավորությունների քաղաքականության վերաբերյալ:
- Հնարավորություն ունենալ առաջնային խնամքի մատակարար ընտրել Blue Shield Promise-ի ցանցում



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Ունենալ ժամանակին մուտք ցանցի մատակարարներին
- Մատակարարների հետ մասնակցել այն որոշումների կայացմանը, որոնք կապված են Ձեր սեփական առողջապահական խնամքի հետ, ներառյալ բուժումից հրաժարվելու իրավունքը
- Բողոքներ հայտնել բանավոր կամ գրավոր եղանակով, կազմակերպության կամ ստացված խնամքի մասին
- Իմանալ բժշկական խնամքը մերժելու, հետաձգելու, դադարեցնելու (ավարտելու) կամ փոխելու վերաբերյալ Blue Shield Promise-ի որոշման բժշկական հիմնավորումը
- Ստանալ խնամքի համակարգում
- Խնդրել ծառայությունների կամ նպաստների մերժման, հետաձգման կամ սահմանափակման վերաբերյալ որոշումների բողոքարկում
- Ստանալ անվճար բանավոր և գրավոր թարգմանչական ծառայություններ Ձեր լեզվով
- Ստանալ անվճար օրինական օգնություն Ձեր տեղական օրինական օգնության գրասենյակից կամ ուրիշ խմբերից
- Կազմել նախնական հրահանգները
- Նահանգային լսում խնդրել, եթե ծառայությունը կամ նպաստը մերժվել է, և Դուք արդեն բողոք եք ներկայացրել Blue Shield Promise-ին, սակայն դժգոհ եք մնացել որոշումից, կամ եթե 30 օր հետո որոշում չէք ստացել Ձեր բողոքարկման վերաբերյալ, ներառյալ տեղեկությունների այն հանգամանքների վերաբերյալ, որոնց դեպքում հնարավոր է իրականացնել արագացված լսում
- Ապասնդամագրվել (դուրս գալ) Blue Shield Promise-ից և անհրաժեշտության դեպքում վարչաշրջանի մեկ այլ առողջապահական ծրագրի անցնել
- Մուտք ունենալ անչափահասների համաձայնությամբ ծառայություններին
- Դիմել և ստանալ անդամների իրազեկման անվճար գրավոր նյութեր այլ ձևաչափերով (ներառյալ՝ բրայլյան այբուբենով, խոշոր տառատեսակով, աուդիո տարբերակով և հասանելի էլեկտրոնային ձևաչափերով) և տվյալ ձևաչափին համապատասխան ժամանակամիջոցում՝ համաձայն Բարեկեցության և հաստատությունների (Welfare and Institutions, W&I) օրենսգրքի 14182 (b)(12) բաժնի
- Ձերձ մնալ ֆիզիկական ճնշման կամ մեկուսացման ցանկացած դրսևորումից, որն օգտագործվում է որպես հարկադրանքի, կարգապահության, հարմարության կամ վրեժխնդրության միջոց
- Ճշմարտորեն քննարկել տեղեկությունները տրամադրելի բուժման ընտրանքների և այլընտրանքների մասին, ներկայացված Ձեր վիճակին և այն հասկանալու Ձեր կարողությանը հարմար եղանակով՝ անկախ ծախսերից և ապահովագրությունից



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

- Մատչելի գտնել և ստանալ պատճենը Ձեր բժշկական արձանագրությունների, ե խնդրել, որ դրանք փոփոխվեն կամ ուղղվեն, ինչպես հատկորոշվել է 45 Դաշնային կանոնակարգերի Օրենսգրքի (Code of Federal Regulations, CFR) §164.524 և 164.526 բաժիններում
- Այս իրավունքները կիրառելու ազատություն, ինչը բացասապես չի ազդի Blue Shield Promise-ի, Ձեր մատակարարների կամ Նահանգի կողմից Ձեր նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի վրա
- Օգտվելու իրավունք ունենալ ընտանիքի պլանավորման ծառայություններից, ծննդաբերության անկախ կենտրոններից, դաշնային որակավորում ունեցող առողջապահական կենտրոններից, հնդկացիների առողջապահական մատակարարներից, մանկաբարձի ծառայություններից, գյուղական առողջապահական կենտրոններից, սեռական ճանապարհով փոխանցվող վարակներով զբաղվող ծառայություններից և շտապ օգնության ծառայություններից Blue Shield Promise-ի ցանցից դուրս՝ դաշնային օրենսդրության համաձայն
- Ձերձ մնալ ամեն տեսակի հետևանքներից՝ Ձեր խնամքին վերաբերող որոշումներ կայացնելիս
- 10 րոպեից ավել չսպասել՝ խոսելու համար Հաճախորդի սպասարկման բաժնի
- ներկայացուցչի հետ Blue Shield Promise-ի սովորական աշխատանքային ժամերին
- Որոշել ինչպես եք ցանկանում խնամք ստանալ Ձեր կյանքին վտանգ սպառնացող հիվանդություն կամ վնասվածք ստանալու դեպքում
- Անկեղծորեն քննարկել Ձեր վիճակների համար պատշաճ և բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բուժման ընտրանքները՝ անկախ ծախսերից կամ նպաստի ապահովագրությունից
- Խնդրել ծառայությունների կամ նպաստների մերժման, հետաձգման կամ սահմանափակման բողոքարկումը
- Ստանալ անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ Ձեր լեզվի համար:
- Ծրագրի նյութերն անվճար ստանալ Ձեր նախընտրած լեզվով կամ այլընտրանքային ձևաչափով (օրինակ՝ աուդիո, բրայլյան կամ խոշոր տպագիր)
- Բողոք կամ գանգատ ներկայացնել, եթե Ձեր լեզվական կարիքները չեն բավարարվում, ինչպես, օրինակ, բայց չսահմանափակելով՝ բողոքների ընթացակարգերի, ձևաթղթերի թարգմանություն, բանավոր թարգմանիչների հասանելիություն և հեռախոսային փոխանցման համակարգեր
- Ձեզ անվճար օժանդակ օգնություն և ծառայություններ ստանալու համար



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Ձեր պարտավորությունները

Blue Shield Promise-ի անդամներն ունեն հետևյալ պարտավորությունները՝

- Քաղաքավարի և հարգալիք վերաբերմունք ցուցաբերել Ձեր բժշկի, բոլոր մատակարարների և անձնակազմի նկատմամբ Դուք պարտավոր եք ժամանակին ներկայանալ բժշկի ընդունարան կամ այցելությունից առնվազն 24 ժամ առաջ զանգահարել բժշկի ընդունարան՝ այցելությունը չեղարկելու կամ վերապլանավորելու նպատակով:
- Ճշգրիտ և հնարավորինս շատ տեղեկություններ տրամադրել Ձեր բոլոր մատակարարներին և Blue Shield Promise-ին: Դուք պարտավոր եք անցնել պարբերական բժշկական ստուգումներ և տեղեկացնել բժշկին Ձեր առողջական խնդիրների մասին՝ նախքան դրանց լրջանալը:
- Ենթարկվել կանոնավոր բժշկական ստուգումների և տեղեկացնել Ձեր բժշկին Ձեր առողջական խնդիրների մասին՝ նախքան դրանց լրջանալը
- Ձեր բժշկի հետ քննարկել Ձեզ առողջական խնամքի կարիքները, մշակել և համաձայնվել թիրախների շուրջ, անել հնարավոր ամեն բան՝ հասկանալու Ձեր առողջական խնդիրները և հետևել բուժման ծրագրերին և հրահանգներին, որոնց շուրջ համաձայնվել եք երկուսդ:
- Տրամադրել տեղեկատվություն (հնարավորության սահմաններում), որը կազմակերպությանը և նրա բժիշկներին և մատակարարներին անհրաժեշտ է՝ խնամք տրամադրելու համար
- Հետևել խնամքի ծրագրերին և հրահանգներին, որոնք նրանք համաձայնեցրել են իրենց բժիշկների հետ
- Հասկանալ Ձեր առողջական խնդիրները և հնարավորինս մասնակցել բուժման համաձայնեցված նպատակների մշակմանը
- Առողջական խնամքի խարդախությունը կամ իրավախախտումները տեղեկագրել Blue Shield Promise-ին: Դուք սա կարող եք անել առանց Ձեր անունը նշելու զանգահարելով Blue Shield Promise-ի Համապատասխանության թեժ գծի անվճար համարով՝ 1-855-296-9083, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, էլ. նամակ ուղարկելով հետևյալ հասցեով՝ [PromiseStopFraud@blueshieldca.com](mailto:PromiseStopFraud@blueshieldca.com), կամ զանգահարելով Կալիֆոռնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժնի (Department of Health Care Services, DHCS)՝ Medi-Cal-ի հետ կապված խարդախությունների և չարաշահումների թեժ գիծ հետևյալ անվճար համարով՝ 1-800-822-6222:
- Շտապ օգնության կայանն օգտագործել միայն արտակարգ իրավիճակի դեպքում կամ ըստ Ձեր բժշկի ցուցմունքի:
- Տրամադրել Ձեր ճշգրիտ, ֆիզիկական փոստային հասցեն



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Ոչ խտրականության ծանուցագիր

Խտրականությունը դեմ է օրենքին: Blue Shield Promise-ը հետևում է նահանգի և դաշնային քաղաքացիական իրավունքների մասին օրենքներին: Blue Shield Promise-ը անօրինական կերպով խտրականություն չի դնում, չի բացառում մարդկանց կամ նրանց այլ կերպ չի վերաբերվում սեռի, ցեղի, գույնի, դավանանքի, ծագման, ազգային ծագման, էթնիկական խմբի նույնականացման, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական վիճակի, գենետիկական տեղեկատվության, ընտանեկան կարգավիճակի, գենդերի, սեռական ինքնության կամ սեռական կողմնորոշման պատճառով:

Blue Shield Promise-ը կարող է՝

- Անվճար օգնություն և ծառայություններ հաշմանդամներին՝ օգնելու նրանց ավելի լավ հաղորդակցվել, այդ թվում՝
  - Ժեստերի լեզվի որակյալ թարգմանիչներ
  - Տարբեր ձևաչափերով գրավոր տեղեկություն (խոշոր տառատեսակ, ձայնագրություն, մատչելի էլեկտրոնային ձևաչափեր և այլ ձևաչափեր)
- Անվճար լեզվական ծառայություններ այն անձանց, որոնց հիմնական լեզուն անգլերենը չէ, այդ թվում՝
  - Որակյալ բանավոր թարգմանիչներ
  - Այլ լեզուներով գրված նյութեր

Եթե Ձեզ անհրաժեշտ են այս ծառայությունները, դիմեք Blue Shield Promise, 08:00-ից 18:00, երկուշաբթիից ուրբաթ՝ զանգահարելով 1-800-605-2556 հեռախոսահամարով: Կամ, եթե լավ լսելու և խոսելու հետ կապված խնդիր ունեք, հավաքեք 711՝ օգտվելու համար California Relay Service-ից:

### Ինչպես ներկայացնել բողոքը

Եթե կարծում եք, որ Blue Shield Promise-ը չի կարողացել մատուցել այդ ծառայությունները կամ որևէ այլ կերպ խտրականություն է դրսևորել՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, կրոնի, ծագման, ազգային արմատների, էթնիկական խմբի պատկանելության, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական խնդրի, գենետիկական տեղեկատվության, ընտանեկան կարգավիճակի, սեռի, գենդերային ինքնության կամ սեռական



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

կողմնորոշման պատճառով, կարող եք բողոք ներկայացնել

Blue Shield Promise Health Plan-ի քաղաքացիական իրավունքների համակարգողին:

Բողոքը կարող եք ներկայացնել հեռախոսով, փոստով, անձամբ կամ առցանց.

- **Հեռախոսով՝** Կապվեք Blue Shield of California Promise Health Plan-ի քաղաքացիական իրավունքների համակարգողի հետ 08:00-ից 18:00՝ զանգահարելով 1-800-605-2556: Կամ, եթե լավ լսելու և խոսելու հետ կապված խնդիր ունեք, հավաքեք 711՝ օգտվելու համար California Relay Service-ից:
- **Փոստով՝** Լրացրեք բողոքի ձևաթուղթը կամ նամակ գրեք և փոստով ուղարկեք այս հասցեով՝  
Blue Shield of California Promise Health Plan Civil Rights Coordinator

Blue Shield Promise Health Plan  
Civil Rights Coordinator  
3840 Kilroy Airport Way  
Long Beach, CA 90806-2452

- **Անձամբ.** Այցելեք Ձեր բժշկի ընդունարան կամ Blue Shield Promise-ը և ասեք, որ ուզում եք բողոք ներկայացնել:
- **Առցանց.** Այցելեք Blue Shield Promise-ի կայքը այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Քաղաքացիական իրավունքների գրասենյակ. Կալիֆորնիայի

### Առողջապահական խնամքի սպասարկման բաժին

Կարող եք նաև քաղաքացիական իրավունքներին վերաբերող զանգատ ներկայացնել

Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժնի (DHCS)

Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝ հեռախոսով, փոստով կամ առցանց.

- **Հեռախոսով.** Չանգահարեք 916-440-7370 հեռախոսահամարով: Եթե լավ լսելու և խոսելու հետ կապված խնդիր ունեք, հավաքեք 711 (Հեռահաղորդակցության հեռարձակման ծառայություն):
- **Փոստով.** Լրացրեք բողոքի ձևաթուղթը կամ նամակ գրեք և փոստով ուղարկեք այս հասցեով՝



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

- Deputy Director, Office of Civil Rights  
Department of Health Care Services  
Office of Civil Rights  
P.O. Box 997413, MS 0009  
Sacramento, CA 95899-7413

Գանգատի ձևաթղթերը առկա են այս այստեղ՝  
[https://www.dhcs.ca.gov/Pages/Language\\_Access.aspx](https://www.dhcs.ca.gov/Pages/Language_Access.aspx):

- **Առցանց.** Նամակ ուղարկեք հետևյալ հասցեով՝ [CivilRights@dhcs.ca.gov](mailto:CivilRights@dhcs.ca.gov):

### **Քաղաքացիական իրավունքների գրասենյակ. Միացյալ Նահանգների Առողջապահության և մարդկանց մատուցվող ծառայությունների դեպարտամենտ**

Եթե կարծում եք, որ ենթարկվել եք խտրական վերաբերմունքի ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի պատճառով, կարող եք նաև քաղաքացիական իրավունքների վերաբերյալ գանգատ ներկայացնել Միացյալ Նահանգների Առողջապահության և մարդկանց մատուցվող ծառայությունների դեպարտամենտի (United States Department of Health and Human Services) Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝ հեռախոսով, փոստով կամ առցանց.

- **Հեռախոսով.** Զանգահարեք 1-800-368-1019 համարով: Եթե չեք կարող լավ խոսել կամ լսել, զանգահարեք TTY 1-800-537-7697 կամ 711 համարով՝ Կալիֆորնիայի խոսքի կամ լսողության դժվարություններ ունեցող անձանց հատուկ ծառայությունից օգտվելու համար:
- **Փոստով.** Լրացրեք բողոքի ձևաթուղթը կամ նամակ գրեք և փոստով ուղարկեք այս հասցեով՝  
U.S. Department of Health and Human Services  
200 Independence Avenue, SW  
Room 509F, HHH Building  
Washington, D.C. 20201

Գանգատի ձևաթղթերն առկա են այստեղ՝  
<https://www.hhs.gov/ocr/complaints/index.html>:

- **Առցանց.** Այցելեք Քաղաքացիական իրավունքների գրասենյակի գանգատների հարթակը՝ <https://ocrportal.hhs.gov/ocr/cp>:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## Որպես անդամ ներգրավվելու եղանակները

Blue Shield Promise -ը ցանկանում է լսել Ձեզ: Յուրաքանչյուր եռամսյակ Blue Shield Promise -ը հանդիպումներ է անցկացնում՝ խոսելու այն մասին, թե ինչն է արդյունավետ և ինչպես Blue Shield Promise-ը կարող է բարելավել իր աշխատանքը: Անդամները հրավիրվում են մասնակցելու: Եկե՛ք հանդիպման:

### **Blue Shield Promise-ի Համայնքային խորհրդատվական կոմիտե, Հանրային քաղաքականության կոմիտե և Որակի բարելավման և առողջապահության հավասար հասանելիության հարցերով կոմիտե**

Blue Shield Promise-ն ունի երեք խումբ, որոնք են՝ Blue Shield Promise-ի Համայնքային խորհրդատվական կոմիտե, Հանրային քաղաքականության կոմիտե և Որակի բարելավման և առողջապահության հավասար հասանելիության հարցերով կոմիտե: Այս խմբերը կազմված են անդամներից, Blue Shield Promise-ի աշխատակիցներից, համայնքային գործակալություններից և մատակարարներից: Ցանկության դեպքում կարող եք միանալ այս խմբերին: Խմբերը քննարկում են, թե ինչպես բարելավել Blue Shield Promise-ի քաղաքականությունները և պատասխանատու է հետևյալի համար՝

- Անդամի և առողջապահական ծրագրի ծրագրերի քննարկում
- Մշակութային և լեզվաբանական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում
- Առողջապահության հավասարության թեմաներ
- Համայնքի հետ առողջապահական տեղեկատվության փոխանակում
- Խորհուրդներ տալ Blue Shield Promise-ի տնօրենների խորհրդին քաղաքականության հետ կապված այն հարցերի վերաբերյալ, որոնք ազդում են առողջապահական ծրագրի և անդամների վրա:

Եթե ցանկանում եք մաս կազմել այս խմբին, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711): Մասնակցության այլ եղանակների մասին ավելին իմանալու համար այցելեք Blue Shield Promise Connect առցանց՝

<https://www.blueshieldca.com/en/bsp/medi-cal-members/member-resources/committees>



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:

Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):



## L.A. Care-ի Տարածաշրջանային համայնքային խորհրդատու հանձնաժողովներ

L.A. Care-ն ունի ութ Տարածաշրջանային համայնքային խորհրդատվական հանձնաժողովներ (Regional Community Advisory Committees, RCAC) Los Angeles վարչաշրջանում (RCAC-ը արտասանվում է որպես «ռաք»): Այս խումբը կազմված է L.A. Care-ի անդամներից, մատակարարներից և առողջապահության ոլորտի պաշտպաններից: Նրանց նպատակն է իրենց համայնքների ձայնը հասցնել L.A. Care-ի Կառավարիչների խորհրդին, որը ուղղություն է տալիս առողջական խնամքի ծրագրերին՝ մեր անդամներին ծառայելու համար: Խումբը քննարկում է ինչպես բարելավել L.A. Care-ի քաղաքականությունները և պատասխանատու է հետևյալին՝

- Օգնել, որ L.A. Care-ը հասկանա Ձեր տարածքում բնակվող անձանց ազդող առողջական խնամքի հարցերը
- Գործել որպես աչքերն ու ականջները L.A. Care-ի՝ 11 RCAC շրջաններում, Լոս Անջելես վարչաշրջանի ողջ տարածքում
- Առողջապահական տեղեկություններ մատուցել Ձեր համայնքի անձանց

Եթե ցանկանում եք մաս կազմել այս խմբին, զանգահարեք L.A. Care-ի Հաճախորդների սպասարկման բաժին 1-888-839-9909 (TTY 711) հեռախոսահամարով:

## L.A. Care-ի Կառավարիչների խորհրդի նիստեր

Կառավարիչների խորհուրդը սահմանում է քաղաքականություններ L.A. Care-ի համար: Որևէ անձ կարող է մասնակցել նիստերին:

Կառավարիչների խորհրդի նիստերն անցկացվում են յուրաքանչյուր ամսվա առաջին հինգշաբթի 14:00-ին: Կառավարիչների խորհրդի նիստերի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ և դրանց ժամանակացույցի թարմացումները կարող եք գտնել [lacare.org](http://lacare.org) կայքում:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](http://blueshieldca.com/promise/medi-cal):

## Գաղտնիության գործելակերպի ծանուցագիր

Բժշկական արձանագրությունների գաղտնիությունը պահպանելու Blue Shield Promise-ի քաղաքականություններն ու ընթացակարգերը նկարագրող հայտարարությունը տրամադրելի է և Ձեզ կներկայացվի խնդրվելու դեպքում:

Եթե Դուք հասել եք այդ տարիքի և կարող եք համաձայնություն տալ գաղտնի ծառայություններին, Ձեզանից չի պահանջվում թույլտվություն ստանալ որևէ այլ մասնակցից՝ գաղտնի ծառայություններ ստանալու կամ գաղտնի ծառայությունների համար դիմելու համար: Դուք կարող եք ավելին կարդալ զգայուն ծառայությունների մասին տեղեկագրքի «Զգայուն խնամք» բաժնում:

Դուք կարող եք խնդրել Blue Shield Promise-ին ուղարկել գաղտնի ծառայությունների մասին տեղեկատվությունը Ձեր ընտրած որևէ այլ փոստային հասցեով, էլ. հասցեով կամ հեռախոսահամարով: Սա կոչվում է «գաղտնի հաղորդակցության հարցում»: Եթե Դուք համաձայնեք խնամքին, Blue Shield Promise-ը որևէ մեկին չի տրամադրի Ձեր զգայուն խնամքի ծառայությունների մասին տեղեկատվությունը առանց Ձեր գրավոր թույլտվության: Եթե Դուք փոստային հասցե, էլ.փոստի հասցե կամ հեռախոսահամար չտաք, Blue Shield Promise-ը Ձեր անունից հաղորդակցություններ կուղարկի նշված հասցեին կամ հեռախոսահամարին:

Blue Shield Promise-ը կկատարի Ձեր խնդրանքները՝ Ձեր խնդրած ձևով և ձևաչափով գաղտնի հաղորդակցություններ ստանալու համար: Կամ մենք կհամոզվենք, որ Ձեր հաղորդակցությունները հեշտությամբ տեղադրվեն Ձեր խնդրած ձևով և ձևաչափով: Մենք դրանք կուղարկենք Ձեր ընտրած այլ հասցեով: Գաղտնի հաղորդակցության Ձեր հարցումը ուժի մեջ է այնքան ժամանակ, մինչև չեղարկեք այն կամ ներկայացնեք գաղտնի հաղորդակցության նոր հարցում:

Գաղտնի հաղորդակցության հարցում կատարելու համար դիմեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:

Blue Shield Promise-ի հայտարարությունը Ձեր բժշկական տեղեկատվության պաշտպանության քաղաքականության և ընթացակարգերի մասին (որը կոչվում է «Գաղտնիության կանոնների մասին ծանուցում») ներառված է ստորև.



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

### Մեր գաղտնիության պարտավորությունը

Blue Shield Promise-ում մենք հասկանում ենք Ձեր անձնական տեղեկությունները գաղտնի պահելու կարևորությունը, և մեր այդ պարտավորությանը շատ լուրջ ենք վերաբերվում:

Բիզնես վարելու բնականոն ընթացքի ժամանակ մենք գրառումներ ենք ստեղծում Ձեր, Ձեր բժշկական բուժման և Ձեզ մատուցած ծառայությունների մասին: Այդ գրառումների տեղեկատվությունը կոչվում է «պաշտպանված առողջապահական տեղեկություններ» (protected health information, PHI) և ներառում է Ձեր անհատական նույնականացնող անձնական տվյալները, ինչպիսիք են Ձեր անունը, հասցեն, հեռախոսահամարը և սոցիալական ապահովության համարը, ինչպես նաև Ձեր առողջական տվյալները, ինչպիսիք են առողջապահական ախտորոշումը կամ հայցի մասին տեղեկությունները:

Դաշնային և նահանգային օրենքով մեզնից պահանջվում է տրամադրել Ձեզ մեր իրավական պարտականությունների և գաղտնիության գործելակերպի մասին այս ծանուցումը, քանի որ դրանք վերաբերում են Ձեր PHI-ին: Մեզնից պահանջվում է պահպանել Ձեր PHI-ի գաղտնիությունը և ծանուցել Ձեզ այն դեպքում, երբ Ձեզ վրա ազդում է անապահով PHI-ի խախտումը: Երբ մենք օգտագործում կամ տրամադրում ենք («բացահայտում») Ձեր PHI-ը, մենք պարտավորված ենք սույն ծանուցման պայմաններով, որոնք վերաբերում են բոլոր գրառումներին, որոնք մենք ստեղծում, ձեռք ենք բերում և/կամ պահպանում ենք, որոնք պարունակում են Ձեր PHI-ը:

### Ինչպե՞ս ենք մենք պաշտպանում Ձեր գաղտնիությունը

Մենք պահպանում ենք ֆիզիկական, տեխնիկական և վարչական երաշխիքներ՝ Ձեր PHI-ի գաղտնիությունն ապահովելու համար: Ձեր գաղտնիությունը պաշտպանելու համար միայն Blue Shield Promise-ի աշխատուժի անդամները, ովքեր լիազորված և վերապատրաստված են, կարող են մուտք գործել մեր թղթային և էլեկտրոնային գրառումները և ոչ հրապարակային տարածքները, որտեղ պահվում է այս տեղեկատվությունը:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Աշխատակիցները վերապատրաստվել են հետևյալ թեմաներով.

- Գաղտնիության և տվյալների պաշտպանության քաղաքականություններ և ընթացակարգեր, ներառյալ այն, թե ինչպես են թղթային և էլեկտրոնային գրառումները պիտակավորվում, պահվում, ներկայացվում և հասանելի դառնում:
- Գործում են ֆիզիկական, տեխնիկական և վարչական երաշխիքներ՝ Ձեր PHI-ի գաղտնիությունն ու անվտանգությունը պահպանելու համար:

Մեր կորպորատիվ Գաղտնիության գրասենյակը վերահսկում է, թե ինչպես ենք մենք հետևում մեր գաղտնիության քաղաքականությանն ու ընթացակարգերին, և մեր կազմակերպությանը կրթում այս կարևոր թեմայի շուրջ:

### **Ինչպես ենք մենք օգտագործում և բացահայտում Ձեր PHI-ը**

PHI-ի օգտագործումն առանց Ձեր թույլտվության

Մենք կարող ենք բացահայտել Ձեր PHI-ն՝ առանց Ձեր գրավոր թույլտվության, եթե անհրաժեշտ լինի՝ Ձեզ առողջապահական նպաստներ և ծառայություններ տրամադրելիս: Մենք կարող ենք բացահայտել Ձեր PHI-ը հետևյալ նպատակների համար.

### ***Բուժում***

- Բուժքույրերի, բժիշկների, դեղագործների, ակնաչափողների, առողջության դաստիարակների և առողջապահության այլ մասնագետների հետ կիսվելու համար, որպեսզի նրանք կարողանան որոշել Ձեր խնամքի ծրագիրը:
- Ծառայություններ և բուժում ստանալու համար, երբ Ձեզ կարող է օրինակ, անհրաժեշտ լինել պատվիրել լաբորատոր թեստեր և օգտագործել արդյունքները:
- Ձեր առողջապահական խնամքը և հարակից ծառայությունները առողջապահական հաստատության կամ մասնագետի հետ համակարգելու համար:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

### *Վճարում*

- Ձեր ապահովագրության համար հավելավճարներ ստանալու համար:
- Ապահովագրության որոշումներ կայացնելու համար, օրինակ՝ խոսել առողջապահական մասնագետի հետ Ձեզ տրամադրված ծառայությունների դիմաց վճարման մասին:
- Նպաստները այլ ապահովագրականների հետ համաձայնեցնելու համար, օրինակ՝ խոսել մեկ այլ առողջապահական ծրագրի կամ ապահովադրի հետ՝ որոշելու Ձեր իրավասությունը կամ ապահովագրությունը:
- Վճարում ստանալու երրորդ անձից, որը կարող է պատասխանատու լինել վճարման համար, օրինակ՝ ընտանիքի անդամից:
- Հակառակ դեպքում սահմանելու և կատարելու մեր պարտավորությունը՝ տրամադրել Ձեզ առողջական նպաստներ, ինչպես օրինակ՝ հայցեր ներկայացնելը:

### *Առողջական խնամքի գործողություններ*

- Հաճախորդների սպասարկում ապահովելու:
- Աջակցելու և/կամ բարելավելու մեր կողմից առաջարկվող ծրագրերը կամ ծառայությունները:
- Օգնելու Ձեզ կառավարել Ձեր առողջությունը, օրինակ՝ տրամադրել Ձեզ տեղեկատվություն բուժման այլընտրանքների մասին, որոնց իրավունքը կարող էք ունենալ, կամ առողջապահական ծառայություններ կամ բուժման հիշեցումներ տրամադրելու համար:
- Աջակցել մեկ այլ առողջապահական ծրագրի, ապահովադրի կամ առողջապահական մասնագետի, որը կապ ունի Ձեզ հետ՝ բարելավելու այն ծրագրերը, որոնք նա առաջարկում է Ձեզ, օրինակ՝ գործի կառավարման, հաշվետու խնամքի



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

կազմակերպությանը (accountable care organization, ACO) աջակցելու կամ հիվանդին անհրաժեշտ բժշկական խնամքը տանը կազմակերպելու համար:

- Ապահովագրության, տուրքերի կամ ապահովավճարի վարկանիշի կամ այլ գործողությունների համար, որոնք վերաբերում են առողջության ապահովագրության կամ ապահովագրության պայմանագրի ստեղծմանը, երկարաձգմանը կամ փոխարինմանը:  
Խնդրում ենք նկատի ունենալ, որ մենք, այնուամենայնիվ, չենք օգտագործի կամ բացահայտի Ձեր PHI-ը, որը գենետիկական տեղեկատվություն է ապահովագրության ռիսկերը ծածկելու նպատակով, քանի որ դա արգելված է դաշնային օրենքով:

Մենք կարող ենք նաև բացահայտել Ձեր PHI-ն առանց Ձեր գրավոր թույլտվության այլ նպատակների համար, ինչպես դա թույլատրվում կամ պահանջվում է օրենքով: Սրանք ընդգրկում են՝

***Տեղեկությունների տրամադրում այլ կողմերի, որոնք ներգրավված են Ձեր առողջապահական խնամքի մեջ***

- Եթե Դուք ներկա եք կամ այլ կերպ հասանելի եք՝ մեզ ցուցումներ տալու դա անելու համար, մենք կարող ենք Ձեր PHI-ը հայտնել ուրիշներին, օրինակ՝ ընտանիքի անդամին, մտերիմ ընկերոջը կամ Ձեր խնամողին:
- Եթե Դուք գտնվում եք արտակարգ իրավիճակում, ներկա չեք կամ անաշխատունակ եք կամ եթե մահացել եք, մենք կօգտագործենք մեր մասնագիտական դատողությունը՝ որոշելու, թե արդյոք Ձեր PHI-ի բացահայտումը բխում է Ձեր լավագույն շահերից: Եթե մենք բացահայտենք Ձեր PHI-ն այնպիսի իրավիճակում, երբ Դուք անհասանելի եք, մենք կբացահայտենք միայն այն տեղեկությունները, որոնք անմիջականորեն առնչվում են Ձեր բուժմանը անձի մասնակցության կամ Ձեր բուժման հետ կապված վճարմանը: Մենք կարող ենք նաև բացահայտել Ձեր PHI-ը, որպեսզի ծանուցենք (կամ օգնենք տեղեկացնել) այդպիսի



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

անձանց Ձեր գտնվելու վայրի, Ձեր ընդհանուր առողջական վիճակի կամ Ձեր մահվան մասին:

- Մենք կարող ենք բացահայտել Ձեր անչափահաս երեխայի PHI-ն երեխայի մյուս ծնողին:

***Տեղեկատվության տրամադրում առողջապահական տեղեկատվության փոխանակման նպատակով***

Blue Shield Promise-ը կարող է բացահայտել Ձեր PHI-ը Manifest MedEx-ին, որը առողջապահական տեղեկատվության փոխանակում է (Health Information Exchange, HIE): Manifest MedEx-ի նման HIE-ներն օգնում են Ձեր առողջապահական ծառայություններ մատուցողներին և առողջապահական ծրագրերին ապահով կերպով վերանայել, վերլուծել և կիսել Ձեր մասին բժշկական տեղեկությունները:

Ձեր PHI-ի այս վերանայումը, վերլուծությունը և համօգտագործումը թույլ է տալիս Ձեր առողջապահական ծառայություններ մատուցողներին և առողջապահական ծրագրերին բարելավել Ձեր խնամքի որակը, կարող է օգնել նվազեցնել բժշկական սխալները և կարող է խնայել Ձեզ գումար՝ կանխելով անհարկի և կրկնակի բուժումը: Դուք միշտ հնարավորություն ունեք հրաժարվելու Ձեր PHI-ի օգտագործումից HIE-ում՝ կապվելով Manifest Medex-ի հետ և անցնելով հետևյալ հղմամբ՝ [manifestmedex.org/opt-out/](https://manifestmedex.org/opt-out/) կամ զանգահարելով **510-683-1333**:

***Տեղեկատվության տրամադրում մատակարարներին և հավատարմագրային կազմակերպություններին***

Մենք կարող ենք բացահայտել Ձեր PHI-ը հետևյալ մարդկանց.

- Այն ընկերություններին, որոնք կատարում են որոշակի ծառայություններ Blue Shield Promise-ի անունից: Օրինակ՝ մենք կարող ենք ներգրավել վաճառողներին՝ օգնելու մեզ տեղեկատվություն և ուղեցույց տրամադրել քրոնիկական հիվանդություններ ունեցող անդամներին, ինչպիսիք են շաքարախտը և ասթման:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal/](https://blueshieldca.com/promise/medi-cal/):

- Հավատարմագրող կազմակերպություններին, ինչպիսիք են Որակի ապահովման ազգային կոմիտեն (National Committee for Quality Assurance, NCQA)՝ որակի չափման նպատակներով:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ նախքան Ձեր PHI-ը կիսելը, մենք ձեռք կբերենք վաճառողի կամ հավատարմագրման կազմակերպության գրավոր համաձայնությունը՝ Ձեր PHI-ի գաղտնիությունը պաշտպանելու համար:

### ***Հաղորդակցություններ***

Մենք կարող ենք օգտագործել Ձեր PHI-ը՝ Ձեզ հետ կապվելու համար՝ Ձեր առողջապահական ծրագրի ապահովագրության, նպաստների, առողջության հետ կապված ծրագրերի և ծառայությունների, բուժման հիշեցումների կամ բուժման այլընտրանքների մասին տեղեկություններ ստանալու նպատակով, որոնք հասանելի են Ձեզ:

### ***Դրամահավաք***

Մենք չենք օգտագործում Ձեր PHI-ը դրամահավաքի նպատակով:

### ***Առողջություն կամ անվտանգություն***

Մենք կարող ենք բացահայտել Ձեր PHI-ը՝ կանխելու կամ նվազեցնելու Ձեր առողջությանը կամ անվտանգությանը կամ լայն հասարակության առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող լուրջ և անմիջական վտանգը:

### ***Հանրային առողջությանն ուղղված գործունեություն***

Մենք կարող ենք բացահայտել Ձեր PHI-ը հետևյալ մարդկանց.

- Առողջության մասին տեղեկություններ հաղորդելու համար հանրային առողջապահական մարմիններին, որոնք օրենքով լիազորված են ստանալու նման տեղեկատվություն՝ կանխարգելելու կամ վերահսկելու նպատակով



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



հիվանդությունները, վնասվածքները, հաշմանդամությունը կամ պատվաստումները:

- Ջեկուցելու երեխաների չարաշահման կամ անտեսման, կամ չափահասների նկատմամբ բռնության, ներառյալ ընտանեկան բռնության մասին, պետական մարմին, որը լիազորված է օրենքով նման հաշվետվություններ ստանալու համար:
- Պրոդուկտի կամ գործողության որակի, անվտանգության կամ արդյունավետության համար պատասխանատու անձին հաղորդելու համար պրոդուկտի կամ գործողության մասին տեղեկատվություն, ինչը կարգավորվում է ԱՄՆ Սննդի և դեղերի վարչության կողմից (Food and Drug Administration, FDA):
- Ջգուշացնենք այն անձին, որը կարող է ենթարկվել վարակիչ հիվանդության, եթե մենք օրենքով լիազորված ենք նման ծանուցում տալու համար:

### ***Առողջապահական վերահսկողության գործողություններ***

Մենք կարող ենք բացահայտել Ձեր PHI-ը հետևյալ մարդկանց.

- Պետական գործակալությանը, որն օրինականորեն պատասխանատու է առողջապահական համակարգի նկատմամբ վերահսկողության կամ պետական նպաստների ծրագրերի կանոններին համապատասխանությունն ապահովելու համար, ինչպիսիք են Medicare-ը կամ Medicaid-ը:
- Այլ կարգավորող ծրագրերին, որոնց համապատասխանությունը որոշելու համար անհրաժեշտ է առողջապահական տեղեկատվություն:

### ***Հետազոտություն***

Մենք կարող ենք բացահայտել Ձեր PHI-ը հետազոտական նպատակներով, բայց միայն համաձայն և ինչպես թույլատրվում է օրենքով:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

### ***Օրենքներին հետևելը***

Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել Ձեր PHI-ը՝ օրենքին հետևելու համար:

### **Պատական և վարչական վարույթներ**

Մենք կարող ենք բացահայտել Ձեր PHI-ը դատական կամ վարչական վարույթի շրջանակում կամ ի պատասխան դատարանի վավեր հրամանի:

### ***Իրավապահ մարմինների աշխատակիցներ***

Մենք կարող ենք բացահայտել Ձեր PHI-ը ոստիկանությանը կամ իրավապահ մարմինների այլ պաշտոնյաներին, ինչպես պահանջվում է օրենքով կամ դատարանի որոշմամբ կամ օրենքով լիազորված այլ գործընթացի համաձայն:

### ***Կառավարության գործառույթներ***

Մենք կարող ենք բացահայտել Ձեր PHI-ը կառավարության տարբեր գերատեսչություններին, ինչպիսիք են ԱՄՆ զինված ուժերը կամ ԱՄՆ Պետդեպարտամենտը, ինչպես պահանջվում է օրենքով:

### ***Աշխատակիցների փոխհատուցում***

Մենք կարող ենք բացահայտել Ձեր PHI-ն, երբ անհրաժեշտ է աշխատողների փոխհատուցման մասին օրենքներին հետևելու համար:

### ***PHI-ի օգտագործման դեպքեր, որոնք պահանջում են Ձեր թույլտվությունը***

Բացի վերը նկարագրված նպատակներից, մենք պետք է ստանանք Ձեր գրավոր թույլտվությունը՝ օգտագործելու կամ բացահայտելու Ձեր PHI-ը: Օրինակ՝ մենք չենք օգտագործի Ձեր PHI-ն մարքեթինգային նպատակներով՝ առանց Ձեր նախնական գրավոր թույլտվության, ինչպես նաև չենք տրամադրի Ձեր PHI-ն ապագա գործատուին՝ առանց Ձեր գրավոր թույլտվության:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

***Որոշակի տեսակի PHI-ի օգտագործումն ու բացահայտումը, որը համարվում է «հույժ գաղտնի»***

PHI-ի որոշակի տեսակների համար դաշնային և նահանգային օրենքը կարող է պահանջել գաղտնիության ուժեղացված պաշտպանություն: Սա ներառում է PHI, որը.

- Պահպանվում է հոգեթերապիայի նշումներում
- Ալկոհոլի և թմրամիջոցների չարաշահման, կանխարգելման, բուժման և ուղղորդման մասին է
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի թեստավորման, ախտորոշման կամ բուժման մասին է
- Վեներական և/կամ վարակիչ հիվանդություն(ների) մասին է
- Գենետիկական հետազոտության մասին է

Մենք կարող ենք բացահայտել այս տեսակի հատուկ պաշտպանված PHI-ը միայն Ձեր նախնական գրավոր թույլտվությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ թույլատրված կամ պահանջվում է օրենքով:

***Լիազորման չեղարկում***

Ցանկացած ժամանակ Դուք կարող եք չեղարկել գրավոր թույլտվությունը, որը նախկինում տվել եք մեզ: Երբ մեզ գրավոր ներկայացվում է, չեղարկումը կկիրառվի Ձեր PHI-ի հետագա օգտագործման և բացահայտումների նկատմամբ: Այն չի ազդի նախկինում կատարված օգտագործման կամ բացահայտումների վրա, քանի դեռ Ձեր թույլտվությունն ուժի մեջ էր:

**Ձեր անհատական իրավունքները**

Դուք ունեք հետևյալ իրավունքները PHI-ի վերաբերյալ, որը Blue Shield Promise-ը ստեղծում, ձեռք է բերում և/կամ պահպանում Ձեր մասին.



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

***Սահմանափակումներ պահանջելու իրավունք***

Դուք կարող եք խնդրել մեզ սահմանափակել բուժման, վճարման և առողջապահական գործառնությունների համար Ձեր PHI-ի օգտագործման և բացահայտման եղանակը, ինչպես բացատրված է այս ծանուցման մեջ: Մեզնից չի պահանջվում համաձայնել Ձեր սահմանափակման խնդրանքներին, բայց մենք դրանք ուշադիր կքննարկենք:

Եթե մենք համաձայնում ենք սահմանափակման խնդրանքին, մենք կկատարենք այն այնքան ժամանակ, մինչև Դուք չխնդրեք կամ չհամաձայնեք դադարեցնել սահմանափակումը: Մենք կարող ենք նաև տեղեկացնել Ձեզ, որ մենք դադարեցնում ենք մեր համաձայնագիրը սահմանափակման համար: Այդ դեպքում դադարեցումը կտարածվի միայն PHI-ի վրա, որը ստեղծվել կամ ստացվել է այն բանից հետո, երբ մենք Ձեզ տեղեկացրել ենք դադարեցման մասին:

***Գաղտնի հաղորդակցություններ ստանալու իրավունք***

Դուք կարող եք խնդրել ստանալ PHI պարունակող Blue Shield Promise-ի հաղորդակցությունները այլընտրանքային միջոցներով կամ այլընտրանքային վայրերում: Ինչպես պահանջում է օրենքը, և երբ դա հնարավոր է, մենք կբավարարենք հիմնավորված պահանջները: Մենք կարող ենք պահանջել, որ Ձեր խնդրանքը գրավոր ներկայացնեք: Եթե Ձեր հարցումը վերաբերում է անչափահաս երեխային, մենք կարող ենք խնդրել Ձեզ տրամադրել իրավական փաստաթղթեր՝ Ձեր խնդրանքին աջակցելու համար:

***Ձեր PHI-ին մուտք գործելու իրավունք***

Դուք կարող եք խնդրել ստուգել կամ ստանալ որոշակի PHI-ի պատճենը, որը մենք պահպանում ենք Ձեր մասին «նշանակված գրառումների հավաքածուում»: Սա ներառում է, օրինակ, գրանցման, վճարումների, հայցերի դատավճիռների և դեպքերի կամ բժշկական կառավարման գրառումների համակարգերը և ցանկացած տեղեկատվություն, որը մենք օգտագործել ենք Ձեր մասին որոշումներ կայացնելու համար: Ձեր խնդրանքը պետք է գրավոր լինի:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Հնարավորության դեպքում, և ինչպես պահանջվում է օրենքով, մենք Ձեզ կտրամադրենք Ձեր PHI-ի պատճենը Ձեր պահանջած ձևով (թղթային կամ էլեկտրոնային եղանակով): Եթե Դուք խնդրեք Ձեր PHI-ի պատճենը, մենք կարող ենք Ձեզնից գանձել ողջամիտ, ծախսերի վրա հիմնված վճար՝ այն պատրաստելու, պատճենելու և/կամ Ձեզ ուղարկելու համար: Որոշակի սահմանափակ հանգամանքներում, որոնք թույլատրվում են օրենքով, մենք կարող ենք Ձեզ մերժել մուտքը Ձեր գրառումների մի մասին:

***Ձեր տվյալները փոփոխելու իրավունք***

Դուք իրավունք ունեք մեզ խնդրելու ուղղել կամ փոփոխել PHI-ը, որը մենք պահպանում ենք Ձեր մասին սահմանված գրառումների հավաքածուում: Ձեր խնդրանքը պետք է կատարվի գրավոր և բացատրվի, թե ինչու եք ցանկանում փոփոխել Ձեր PHI-ը: Եթե մենք որոշենք, որ PHI-ը ճշգրիտ կամ թերի է, մենք կուղղենք այն, եթե դա թույլատրվում է օրենքով: Եթե բժիշկը կամ առողջապահական հաստատությունը ստեղծել է PHI, որը Դուք ցանկանում եք փոխել, Դուք պետք է խնդրեք նրանց փոփոխել տեղեկատվությունը:

***Բացահայտման դեպքերի հաշվառում ստանալու իրավունք***

Ձեր գրավոր խնդրանքով մենք Ձեզ կտրամադրենք այն բացահայտումների ցանկը, որոնք մենք կատարել ենք Ձեր PHI-ի վերաբերյալ որոշակի ժամանակահատվածի համար՝ Ձեր հարցման ամսաթվից մինչև վեց տարի առաջ: Այնուամենայնիվ, ցուցակը կբացառի.

- Բացահայտումներ, որոնք Դուք լիազորել եք:
- Բացահայտումներ, որոնք արվել են ավելի վաղ, քան Ձեր հարցման ամսաթվից վեց տարի առաջ:
- Բացահայտումներ, որոնք արվում են բուժման, վճարման և առողջապահական գործառնությունների նպատակներով, բացառությամբ այն դեպքերի, երբ պահանջվում է օրենքով:
- Որոշ այլ բացահայտումներ, որոնք օրենքով մեզ թույլատրվում է բացառել հաշվապահությունից:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե ցանկացած 12 ամսվա ընթացքում մեկից ավելի անգամ հաշվապահական հաշվառում եք պահանջում, մենք Ձեզնից կգանձենք ողջամիտ ծախսերի վրա հիմնված վճար առաջինից հետո յուրաքանչյուր հաշվապահական հաշվետվության համար:

### **Անձնական ներկայացուցիչ նշանակելու իրավունք**

Դուք կարող եք նշել մեկ այլ անձի՝ գործելու որպես Ձեր անձնական ներկայացուցիչ: Ձեր ներկայացուցչին կթույլատրվի մուտք գործել Ձեր PHI, շփվել առողջապահական մասնագետների և Ձեր խնամքն ապահովող հաստատությունների հետ, ինչպես նաև Ձեր անունից օգտվել HIPAA-ի մնացած բոլոր իրավունքներից: Կախված նրանից, թե ինչ լիազորություններ եք տալիս Ձեր ներկայացուցչին, նա կարող է նաև իրավասություն ունենալ Ձեր փոխարեն առողջապահական որոշումներ կայացնելու:

**Այս ծանուցման թղթային պատճենը ստանալու իրավունք** Ձեր խնդրանքով մենք կտրամադրենք այս Ծանուցման թղթային պատճենը, նույնիսկ եթե Դուք համաձայնել եք ստանալ այս Ծանուցումը էլեկտրոնային եղանակով: Տե՛ս այս Ծանուցման «Ծանուցման հասանելիություն և տևողություն» բաժինը:

### **Գործողություններ, որոնք կարող եք ձեռնարկել**

Կապվեք Blue Shield Promise-ի հետ, եթե հարցեր ունեք Ձեր գաղտնիության իրավունքների վերաբերյալ, եթե կարծում եք, որ մենք, հնարավոր է, խախտել ենք Ձեր գաղտնիության իրավունքները, կամ եթե համաձայն չեք Ձեր PHI-ին մուտք գործելու վերաբերյալ մեր կայացրած որոշման հետ: Կարող եք կապվել մեզ հետ հետևյալ հասցեով՝



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Blue Shield of California Promise Health Plan Privacy Office**

P.O. Box 272540 Chico, CA 95927-2540

Հեռախոս՝ (888) 266-8080 (անվճար)

Թեժ գիծ՝ (855) 296-9086 (անվճար)

Ֆաքս՝ (800) 201-9020

(անվճար), Էլ. փոստ՝

[privacy@blueshieldca.com](mailto:privacy@blueshieldca.com)

Որոշ տեսակների հարցումների դեպքում Դուք պետք է լրացնեք և ուղարկեք մեզ ձևաթուղթ, որը ստանալու համար պետք է զանգահարեք Ձեր Promise Health Plan-ի անդամի նույնականացման (ID) քարտի վրա նշված Հաճախորդների սպասարկման բաժնի հեռախոսահամարով կամ այցելեք մեր կայքէջ՝ [blueshieldca.com/bsca/bsc/wcm/connect/sites/Sites\\_Content\\_EN/bsp/about-promise/privacy](https://www.blueshieldca.com/bsca/bsc/wcm/connect/sites/Sites_Content_EN/bsp/about-promise/privacy):

<https://www.blueshieldca.com/en/bsp/about-blue-shield-promise-health-plan/notice-of-privacy-practice>

**Կապվեք դաշնային կառավարության գործակալության հետ**

Դուք կարող եք նաև գրավոր բողոք ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդկային ծառայությունների (Health & Human Services, HHS) նախարարության Քաղաքացիական իրավունքների գրասենյակի քարտուղարին, եթե կարծում եք, որ մենք կարող ենք խախտել Ձեր գաղտնիության իրավունքները.

**Office for Civil Rights**

U.S. Department of Health & Human Services 200 Independence Avenue, S.W. Washington, D.C. 20201

Հեռախոս՝ (877) 696-6775

Կայք՝ <https://www.hhs.gov/civil-rights/filing-a-complaint/index.html>



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

Եթե Կալիֆորնիայի բնակիչ եք, կարող եք նաև կապվել Կալիֆորնիայի OCR տարածաշրջանային տնօրենի հետ.

**Region IX Regional Manager**

Office for Civil Rights  
U.S. Department of Health & Human Services 90 7th St., Suite 4-100  
San Francisco, CA 94103  
Հեռախոս՝ (800) 368-1019  
Ֆաքս՝ (202) 619-3818, TTY՝ (800) 537-7697

Դուք կարող եք նաև գրավոր բողոք ներկայացնել Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունների վարչություն (DHCS).

**DHCS**

Privacy Officer  
c/o Office of HIPAA Compliance DHCS  
P.O. Box 997413, MS 4721 Sacramento, CA 95899-7413  
Հեռախոս՝ (916) 445-4646  
Ֆաքս՝ (916) 440-7680

Կայք՝ [Data Privacy \(ca.gov\)](https://www.ca.gov)

Մենք վրեժխնդրական քայլի չենք դիմի Ձեր դեմ, եթե զանգաստ ներկայացնեք մեր գաղտնիության գործելակերպերի վերաբերյալ:

**Ծանուցում առկայության և տևողության մասին**

**Ծանուցում առկայության մասին**

Այս Ծանուցման օրինակը կտրամադրվի Ձեզ, եթե զանգահարեք Promise Health Plan-ի անդամի ID քարտի վրա նշված՝ Հաճախորդների սպասարկման բաժնի համարով կամ այցելեք մեր կայքէջ՝ [Notice of Privacy Practices | Blue Shield of CA Promise Health Plan \(blueshieldca.com\)](https://www.blueshieldca.com/notice-of-privacy-practices):



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):



## Սույն Ծանուցման դրույթները փոխելու իրավունք

Մեզնից պահանջվում է պահպանել սույն Ծանուցման դրույթները, քանի դեռ այն գործում է: Մենք ցանկացած պահի կարող ենք փոխել այս Ծանուցման դրույթները, և մեր հայեցողությամբ մենք կարող ենք նոր դրույթներ ուժի մեջ մտցնել մեր ձեռքի տակ գտնվող Ձեր բոլոր PHI-ների համար, ներառյալ ցանկացած PHI, որը մենք ստեղծել կամ ստացել ենք մինչև նոր ծանուցումը հրապարակելը:

Եթե մենք փոխենք այս ծանուցման դրույթները, մենք կթարմացնենք ծանուցումը մեր կայքում, և եթե Դուք այդ պահին գրանցված եք Blue Shield Promise նպաստների շրագրում, մենք Ձեզ կուղարկենք նոր ծանուցումը, երբ և ինչպես պահանջվում է օրենքով:

<https://www.dhcs.ca.gov/formsandpubs/laws/priv/Documents/Notice-of-Privacy-Practices-English.pdf>:

## Օրենքների մասին ծանուցագիր

Շատ օրենքներ են կիրառվում այս Անդամի տեղեկագրի նկատմամբ: Այս օրենքները կարող են ազդել Ձեր իրավունքների և պարտավորությունների վրա, նույնիսկ եթե օրենքներն այս տեղեկագրում չեն ներառված կամ չեն բացատրված: Այս տեղեկագրին վերաբերող հիմնական օրենքները Medicare և Medi-Cal ծրագրերին վերաբերող դաշնային օրենքներն են: Այլ դաշնային և նահանգային օրենքներ նույնպես կարող են կիրառվել:

## Ծանուցում Medi-Cal-ի մասին՝ որպես վերջին ելքի վճարողի, ուրիշ առողջապահական ապահովագրության և վնասի վերականգնման մասին

Medi-Cal ծրագիրը ենթարկվում է նահանգային և դաշնային օրենքներին և կանոնակարգերին, որոնք վերաբերում են անդամներին առողջական խնամքի համար երրորդ կողմի իրավական պարտավորություններին: Blue Shield Promise-ը կկիրառի



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

բոլոր հիմնավորված միջոցները՝ վստահ լինելու համար, որ Medi-Cal ծրագիրը վերջին փուլի վճարողն է:

Medi-Cal-ի անդամները կարող են ունենալ նաև ուրիշ առողջապահական ապահովագրություն (other health coverage, OHC), որը նաև կոչվում է մասնավոր առողջության ապահովագրություն: Որպես Medi-Cal-ի իրավասության պայման, Դուք պետք է դիմեք կամ պահպանեք ցանկացած հասանելի OHC, եթե դա անվճար է:

Դաշնային և նահանգային օրենքները պահանջում են, որ Medi-Cal-ի անդամները զեկուցեն OHC-ին և OHC-ում ցանկացած փոփոխության մասին: Եթե Դուք անհապաղ չտեղեկացնեք OHC-ի մասին, հնարավոր է, որ ստիպված լինեք վերադարձնել DHCS-ին սխալ վճարված ցանկացած նպաստ: Ներկայացրեք Ձեր OHC-ն առցանց՝ <http://dhcs.ca.gov/OHC>:

Եթե ինտերնետ չունեք, կարող եք OHC-ի մասին հայտնել Blue Shield Promise-ին՝ զանգահարելով 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Կամ կարող եք զանգահարել DHCS-ի OHC-ների մշակման կենտրոն՝ 1-800-541-5555 (TTY 1-800-430-7077 կամ 711) կամ 1-916-636-1980 հեռախոսահամարով:

Կալիֆորնիայի Առողջական խնամքի ծառայությունների դեպարտամենտը (DHCS) իրավունք և պարտավորություն ունի հետ գանձել գումարը Medi-Cal-ի այն ապահովագրված ծառայությունների համար, որոնց դեպքում Medi-Cal-ը առաջին վճարողը չէ: Օրինակ, եթե Դուք վնասվածք եք ստացել ավտոմեքարի ժամանակ կամ աշխատավայրում, մեքենայի կամ աշխատողների փոխհատուցման ապահովագրությունը պետք է նախ վճարի Ձեր առողջապահական խնամքի համար կամ հետ վճարի Medi-Cal-ին, եթե Medi-Cal-ը վճարի:

Եթե վնասվել եք, և մյուս կողմը պատասխանատու է վնասվածքի համար, Դուք կամ Ձեր օրինական ներկայացուցիչը պարտավոր եք DHCS-ին տեղեկացնել օրինական գործողության կամ հայցի դիմելուց հետո 30 օրվա ընթացքում: Ձեր ծանուցագիրը առցանց ներկայացրեք հետևյալ հասցեով՝

- Անձնական վնասվածքների ծրագրի դեպքում (Personal Injury Program)՝ <https://dhcs.ca.gov/PIForms>
- Աշխատողների փոխհատուցման վերականգնման ծրագրի դեպքում (Workers Compensation Recovery Program)՝ <https://dhcs.ca.gov/WC>



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Ավելին իմանալու համար այցելեք DHCS-ի Երրորդ կողմից պատասխանատվության և վերականգնման (Third Party Liability and Recovery) բաժնի կայք՝

<https://dhcs.ca.gov/tplrd> կամ զանգահարեք 1-916-445-9891:

## Ծանուցագիր անշարժ գույքի միջոցով վճարված գումարի վերադարձման վերաբերյալ

Medi-Cal ծրագիրը պետք է փոխհատուցում պահանջի որոշ մահացած անդամների վավերացված գույքից Medi-Cal նպաստների համար, որոնք ստացվել են նրանց 55-ամյակի օրը կամ դրանից հետո: Փոխհատուցումը ներառում է Ծառայության վճար և կառավարվող խնամքի հավելավճարներ կամ կապիտալ վճարումներ բուժքույրական հաստատության ծառայությունների, տնային և համայնքային ծառայությունների և հարակից հիվանդանոցային և դեղատոմսով դեղերի ծառայությունների համար, որոնք ստացվել են, երբ անդամը ստացիոնար բուժքույրական հաստատությունում էր կամ ստանում էր տնային և համայնքահեն ծառայություններ: Փոխհատուցումը չի կարող գերազանցել անդամի վավերացված գույքի արժեքը:

Ավելին իմանալու համար այցելեք DHCS-ի գույքի վերականգնման ծրագրի (Estate Recovery Program) կայք՝ <https://dhcs.ca.gov/er> կամ զանգահարեք 1-916-650-0590:

## Գործողության ծանուցագիր

Blue Shield Promise-ը Ձեզ Գործողության ծանուցագրի (Notice of Action, NOA) նամակ կուղարկի ամեն անգամ, որ Blue Shield Promise-ը մերժի, ուշացնի, դադարեցնի կամ բարեփոխի առողջական խնամքի ծառայությունների համար խնդրանքը: Եթե համաձայն չեք Blue Shield Promise-ի որոշման հետ, միշտ կարող եք բողոք ներկայացնել Blue Shield Promise-ին: Անցեք այս տեղեկագրի 6-րդ գլխի «Բողոքարկումներ» բաժինը՝ Ձեր բողոքարկումը ներկայացնելու վերաբերյալ կարևոր տեղեկություններ ստանալու համար: Երբ Blue Shield Promise-ը Ձեզ կուղարկի NOA-ն, այն Ձեզ կտեղեկացնի Ձեր ունեցած բոլոր իրավունքների մասին, եթե համաձայն չեք մեր կայացրած որոշման հետ:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:

Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Ծանուցումների բովանդակությունը**

Եթե Blue Shield Promise-ը հիմնավորում է Ձեր ծառայությունների ամբողջությամբ կամ մասամբ (բժշկական անհրաժեշտության դեպքում) մերժումը, ուշացումը, փոփոխումը, դադարեցումը, կասեցումը կամ նվազեցումը, Ձեր NOA-ն պետք է պարունակի հետևյալը՝

- Գործողությունների հայտարարություն, որոնք Blue Shield Promise-ը մտադիր է ձեռնարկել
- Blue Shield Promise-ի որոշման պատճառների պարզ և հակիրճ բացատրություն
- Ինչպես որոշում կայացրեց Blue Shield Promise-ը, ներառյալ Blue Shield Promise-ի կողմից օգտագործված կանոնները
- Որոշման բժշկական պատճառները: Blue Shield Promise-ը պետք է հստակ նշի, թե ինչպես է, որ Ձեր խնդիրը չի համապատասխանում կանոններին կամ ուղեցույցներին:

**Թարգմանություններ**

Blue Shield Promise-ը պարտավոր է ամբողջությամբ թարգմանել և տրամադրել անդամների գրավոր տեղեկությունները ընդհանուր նախընտրելի լեզուներով, ներառյալ բոլոր բողոքների և բողոքարկման ծանուցումները:

Ամբողջությամբ թարգմանված ծանուցումը պետք է ներառի Blue Shield Promise-ի բժշկական հիմնավորումը՝ մերժել, հետաձգել, փոփոխել, դադարեցնել, կասեցնել կամ նվազեցնել առողջապահական ծառայությունների հարցումը:

Եթե Ձեր նախընտրած լեզվով թարգմանությունը հասանելի չէ, Blue Shield Promise-ից պահանջվում է բանավոր օգնություն առաջարկել Ձեր նախընտրած լեզվով, որպեսզի կարողանաք հասկանալ ստացած տեղեկատվությունը:

## Ծանուցում գաղտնի հաղորդակցության հարցումների մասին

Այն անդամներից, ովքեր կարող են համաձայնել զգայուն ծառայություններ ստանալ, չի պահանջվում ստանալ որևէ այլ անդամի, բաժանորդի կամ ապահովադրի թույլտվությունը զգայուն ծառայություններ ստանալու կամ զգայուն ծառայությունների համար պահանջ ներկայացնելու համար: Blue Shield Promise-ը կուղարկի զգայուն ծառայությունների վերաբերյալ հաղորդակցությունները անդամի



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

կողմից նշված այլընտրանքային փոստային հասցեին, էլ. փոստի հասցեին կամ հեռախոսահամարին, իսկ դրանց բացակայության դեպքում՝ անդամի անունով գրանցված հասցեով կամ հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը որևէ այլ անդամի, բաժանորդի կամ ապահովադրի չի բացահայտի զգայուն ծառայությունների հետ կապված բժշկական տվյալները՝ առանց ինամք ստացող անդամի գրավոր թույլտվության: Blue Shield Promise-ը կբավարարի գաղտնի հաղորդակցության հարցումները պահանջվող ձևով և ձևաչափով, եթե այն հեշտությամբ հասանելի է տվյալ ձևով և ձևաչափով կամ այլընտրանքային աղբյուրներից: Անդամի խնդրանքը գաղտնի ծառայությունների հետ կապված գաղտնի հաղորդակցությունների վերաբերյալ վավեր կլինի այնքան ժամանակ, մինչև անդամը չեղարկի հարցումը կամ չներկայացնի նոր հարցում գաղտնի հաղորդակցության համար:

Գաղտնի հաղորդակցության հարցումը կարող է գրավոր ներկայացվել Blue Shield Promise-ին այս էջի ներքևում գտնվող փոստային հասցեով, էլփոստի հասցեով կամ ֆաքսի համարով: Անդամը կարող է, բայց պարտավոր չէ պահանջել գաղտնի հաղորդակցություն՝ լրացնելով Գաղտնի հաղորդակցության հարցման ձևը: Օգնության համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով և խնդրեք, որպեսզի ձևաթուղթը փոստով ուղարկեն Ձեզ: Կարող եք նաև ձևաթուղթը գտնել առցանց և ներբեռնել առցանց՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Դուք կարող եք լրացված և ստորագրված ձևաթուղթը վերադարձնել Blue Shield of California-ի գաղտնիության գրասենյակ՝ օգտագործելով հետևյալ տարբերակներից մեկը.

- Փոստ՝ Blue Shield of California Privacy Office, PO Box 272540, Chico CA, 95927-2540
- Էլ. փոստ՝ [privacy@blueshieldca.com](mailto:privacy@blueshieldca.com)
- Ֆաքս՝ 1-800-201-9020

Էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով ստանալու դեպքում, գաղտնի հաղորդակցության Ձեր հարցումն ուժի մեջ կմտնի ստանալուց հետո 7 օրացուցային օրվա ընթացքում: Առաջին կարգի փոստով ստանալու դեպքում, Ձեր հարցումն ուժի մեջ կմտնի ստանալուց հետո 14 օրացուցային օրվա ընթացքում: Եթե կապվեք մեզ հետ Ձեր հարցման վերաբերյալ, Blue Shield Promise-ը կհաստատի Ձեր գաղտնի հաղորդակցության հարցումը ստանալու մասին և Ձեզ կտեղեկացնի Ձեր հարցման կարգավիճակի մասին:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Գաղտնի հաղորդակցության հարցումը կկիրառվի բոլոր հաղորդակցությունների նկատմամբ, որոնք բացահայտում են բժշկական տեղեկատվություն կամ մատակարարի անունը և հասցեն՝ կապված գաղտնի հաղորդակցություն հայցող անդամի կողմից բժշկական ծառայությունների ստացման հետ:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

# 8. Կարևոր համարներ և բառեր, որոնք պետք է իմանալ

## Կարևոր հեռախոսահամարներ

- Blue Shield Promise-ի Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 (TTY 711)
- L.A. Care-ի Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-888-839-9909 (TTY 711)
- Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) և սեղմեք 7 կամ 711

Blue Shield Promise	
Հաճախորդների սպասարկում	1-800-605-2556 (TTY 711)
Տեսողական ծառայության ծրագիր	1-800-877-7195
24-ժամյա Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ	1-800-609-4166 (TTY 711)
Համապատասխանության թեժ հեռախոսագիծ	1-855-296-9083
L.A. Care/Blue Shield of California-ի համայնքային ռեսուրս կենտրոններ	1-877-287-6290 East L.A. 1-213-438-5570 El Monte 1-213-428-1495 Inglewood 1-310-330-3130 Lincoln Heights 1-213-294-2840 Long Beach 1-562-256-9810 Lynwood 1-310-661-3000 Metro LA 1-213-428-1457



Չանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

8 | Կարևոր համարներ և բառեր, որոնք պետք է իմանալ

	Norwalk 1-562-651-6060 Pacoima 1-213-438-5497 Palmdale 1-213-438-5580 Pomona 1-909-620-1661 Wilmington 1-213-428-1490
--	---

Կառավարական աղբյուրներ	
Հաշմանդամ ամերիկացիների օրենքի (ADA) մասին տեղեկություններ	1-800-514-0301 (ձայնային) 1-800-514-0383 (TDD)
ԱՄՆ Քաղաքացիական իրավունքների գրասենյակ	1-866-627-7748
Սոցիալական Ապահովության վարչության Լրացուցիչ սոցիալական եկամուտ (SSI)	1-800-772-1213 հեռախոսահամարով:
Հաշմանդամության ծառայություններ	California Relay Service (CRS) TTY` 711, Sprint` 1-888-877-5379 MCI 1-800-735-2922
Երեխաների առողջություն և հաշմանդամության կանխում (CHDP)	1-800-993-2437
Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ (CCS)	1-800-288-4584
Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժին (DHCS)	1-916-449-5000
Los Angeles վարչաշրջան, Հանրային և հասարակական սպասարկման բաժին (DPSS). Հաճախորդի սպասարկման կենտրոն	1-866-613-3777 (TTY` 1-800-660-4026)
Los Angeles վարչաշրջանի Առողջապահական սպասարկման բաժին	1-213-240-8101



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ` 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով` [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):



8 | Կարևոր համարներ և բառեր, որոնք պետք է իմանալ

Los Angeles վարչաշրջանի հոգեկան առողջության բաժին	1-800-854-7771
Կանայք, նորածիններ և երեխաներ ծրագիր Women, Infants and Children (WIC)	1-800-852-5770
Medi-Cal ատամնաբուժական ծրագիր (Denti-Cal)	1-800-322-6384 հեռախոսահամարով: (TTY՝ 1-800-735-2922 հեռախոսահամարով:
Կալիֆորնիայի սոցիալական սպասարկության բաժին (CDSS)	1-800-952-5253
Medi-Cal-ի Կառավարվող խնամքի Օմբուդսմանի գրասենյակ	1-888-452-8609
Medi-Cal Rx	1-800-977-2273 TTY՝ 1-800-977-2273 և սեղմել 7 կամ 711
Կառավարվող առողջական խնամքի բաժին (DMHC)	1-888-466-2219 (1-888-HMO-2219) (TTY/TDD 1-877-688-9891)
Health Care Options	Արաբերեն 1-800-576-6881 Հայերեն 1-800-840-5032 Կամբոջերեն/Քմերերեն 1-800-430-5005 Կանտոներեն 1-800-430-6006 Անգլերեն 1-800-430-4263 Պարսկերեն 1-800-840-5034 Հմոնգերեն 1-800-430-2022 Կորերեն 1-800- 576-6883 Լատներեն 1-800-430-4091



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

## 8 | Կարևոր համարներ և բառեր, որոնք պետք է իմանալ

	Մանդարին 1-800-576-6885 Ռուսերեն 1-800-430-7007 Իսպաներեն 1-800-430-3003 Տազալերեն 1-800-576-6890 Վիետնամերեն 1-800-430-8008 TTY՝ 1-800-430-7077
--	---



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

## Բառեր, որոնք պետք է իմանալ

**Ակտիվ երկուսք.** Այն ժամանակամիջոցը, երբ հղի անդամը գտնվում է ծննդաբերության երեք փուլերում և նրան հնարավոր չէ ապահով կերպով փոխադրել մեկ այլ հիվանդանոց ծննդաբերությունից առաջ, կամ փոխադրումը կարող է վնասել անդամի կամ չճշմունք երեխայի առողջությանը և անվտանգությանը:

**Ամբուլատոր խնամք.** Երբ անդամը ստիպված չէ գիշերել հիվանդանոցում կամ այլ վայրում՝ անհրաժեշտ բժշկական խնամք ստանալու համար:

**Ամերիկյան հնդկացի.** Անհատ, ով համապատասխանում է «հնդիկ» սահմանմանը դաշնային օրենքով՝ 42 CFR 438.14 բաժնում, որը սահմանում է անձին որպես «հնդիկ», եթե անձը համապատասխանում է հետևյալներից որևէ մեկին.

- Դաշնային մարմինների կողմից ճանաչված հնդկական ցեղի անդամ է,
- Ապրում է քաղաքային կենտրոնում և համապատասխանում է հետևյալներից մեկին կամ մի քանիսին.
  - Հնդկացիների ցեղի, խմբի կամ այլ կազմակերպված խմբի անդամ է, ներառյալ այն ցեղերը, խումբը կամ խմբերը, որոնք դադարել են գոյություն ունենալ 1940 թվականից ի վեր, և նրանք, որոնք ներկայում կամ ապագայում ճանաչված են այն նահանգի կողմից, որտեղ բնակվում են, կամ որոնք հանդիսանում է այդպիսի որևէ անդամի առաջին կամ երկրորդ սերնդի ժառանգ
  - Էսկիմոս է կամ ալեուտ կամ Ալյասկայի այլ բնիկ ցեղից է
  - Ներքին գործերի քարտուղարի կողմից համարվում է հնդիկ՝ ցանկացած նպատակով
  - Սահմանվել է որպես հնդիկ՝ համաձայն ներքին գործերի քարտուղարի կողմից թողարկված կանոնակարգի
- Ներքին գործերի քարտուղարի կողմից համարվում է հնդիկ՝ ցանկացած նպատակով
- Առողջապահության և մարդկային ծառայությունների քարտուղարի կողմից համարվում է հնդիկ՝ հնդկական առողջապահական ծառայություններին համապատասխանելու համար, ներառյալ որպես Կալիֆորնիայի հնդիկ, էսկիմոս, ալեուտ կամ Ալյասկայի այլ բնիկ:

**Այլ առողջապահական ապահովագրություն (OHC).** Ուրիշ առողջական ապահովագրությունը (OHC) վերաբերում է մասնավոր առողջական ապահովագրության և ծառայությունների վճարողներին, բացի Medi-Cal-ից:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:

Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

Ծառայությունները կարող են ներառել բժշկական, ատամնաբուժական, տեսողության, դեղատան, Medicare Advantage ծրագրեր (Part C), Medicare դեղերի ծրագրեր (Part D) կամ Medicare լրացուցիչ ծրագրեր (Medigap):

**Անդամ.** Որևէ իրավասու Medi-Cal-ի նպաստառու, ով անդամագրվել է Blue Shield Promise-ին և իրավունք ունի ստանալու ապահովագրված ծառայություններ:

**Անդամագրյալ.** Անձ, ով անդամ է առողջապահական ծրագրին և ծառայություններ է ստանում ծրագրի միջոցով:

**Անկախ ծննդաբերության կենտրոններ (FBCs).** Առողջապահական հաստատություններ, որտեղ նախատեսվում է ծննդաբերություն իրականացնել հղի անդամի բնակության վայրից դուրս, որոնք նահանգի կողմից արտոնագրվել կամ այլ կերպ վավերացվել են՝ մատուցելու նախածննդաբերական և ծննդաբերության ծառայություններ կամ հետծննդաբերական խնամք և ծրագրում ընդգրկված այլ ամբուլատոր ծառայություններ: Այս հաստատությունները հիվանդանոցներ չեն:

**Ապաանդամագրում.** Առողջապահական ծրագրի օգտագործման դադարեցում, քանի որ անդամն այլևս չի որակավորվում կամ անցնում է այլ առողջապահական ծրագրի: Անդամը պետք է ստորագրի մի ձևաթուղթ, որտեղ ասվում է, որ նրանք այլևս չեն ցանկանում օգտվել առողջապահական ծրագրից կամ կարող է զանգահարել Health Care Options և ապաանդամագրվել հեռախոսագանգի միջոցով:

**Ապահովագրվող ծառայություններ.** Medi-Cal ծառայություններ, որոնց վճարման համար պատասխանատու է Blue Shield Promise-ը: Ապահովագրված ծառայությունները ենթակա են Medi-Cal-ի պայմանագրի ընդհանուր դրույթների, պայմանների, սահմանափակումների և բացառությունների, ցանկացած պայմանագրի փոփոխության՝ ինչպես նշված է այս Անդամի տեղեկագրքում (նաև հայտնի է որպես Միասնական ապահովագրության ապացույց (Evidence of Coverage, EOC) և Բացահայտման ձևաթուղթ):

**Առաջնային խնամք.** Անցեք «Սովորական խնամք»:

**Առաջնային խնամքի մատակարար (PCP).** Արտոնագրված մատակարար, որը պատասխանատու է անդամի հիմնական առողջական խնամքի համար: PCP-ն օգնում է անդամին ստանալ իրեն անհրաժեշտ խնամքը:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

PCP-ը կարող է լինել՝

- Ընդհանուր բժշկության մասնագետ
- Ներքին հիվանդությունների մասնագետ
- Մանկաբույժ
- Ընտանեկան բժշկության մասնագետ
- Մանկաբարձ/Գինեկոլոգ
- Հնդկացիների առողջապահական մատակարար (IHCP)
- Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (FQHC)
- Գյուղական առողջապահական կլինիկա (RHC)
- Առաջնային խնամք տրամադրող բուժքույր
- Օգնական բժիշկ
- Կլինիկա

**Առողջական խնամքի ընտրանքներ (HCO).** Ծրագիր, որը կարող է անդամին ընդգրկել կամ հանել առողջապահական ծրագրից:

**Առողջապահական ապահովագրություն.** Ապահովագրական ծածկույթ, որը վճարում է բժշկական և վիրաբուժական ծախսերը, ապահովագրված անձին փոխհատուցելով հիվանդության կամ վնասվածքի պատճառած ծախսերը, կամ ուղղակի վճարելով խնամքի մատակարարին:

**Արտակարգ իրավիճակի բժշկական խնդիր.** Բժշկական կամ հոգեկան խնդիր այնպիսի սուր ախտանիշներով, ինչպիսիք են ընթացող երկունքի ցավերը (սահմանումը տեսք վերևում) կամ սուր ցավը, երբ առողջապահական և բժշկական միջին մակարդակի գիտելիքների տեր տրամաբանող հասարակ անձը կարող է հիմնավորված կերպով ենթադրել, որ բժշկական խնամք անմիջապես չստանալը կարող է՝

- Անդամի առողջությունը կամ չճնված երեխայի առողջությունը լուրջ վտանգի տակ դնել
- Մարմնի ֆունկցիայի խանգարում առաջացնել
- Պատճառ դառնալ, որ մարմնի մասը կամ օրգանը լավ չգործի
- Ունենալ մահացու ելք

**Արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրություն.** Հիվանդակառքով կամ արտակարգ իրավիճակի մեքենայով փոխադրում դեպի շտապ օգնության կայան՝ արտակարգ իրավիճակի բժշկական խնամք ստանալու համար:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

**Արտատարաձրային ծառայություններ.** Ծառայություններ, որոնք մատուցվում են, երբ անդամը գտնվում է Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից դուրս որևէ վայրում:

**Արտացանցային մատակարար.** Blue Shield Promise-ի ցանցում չգտնվող մատակարար:

**Բժշկական տեսակավորում (տրիաժ) (կամ զննում).** Անդամի առողջական վիճակի գնահատումը այն բժշկի կամ բուժքրոջ կողմից, որը հատուկ պատրաստություն է անցել՝ որոշելու Ձեր խնամքի անհրաժեշտության աստիճանը:

**Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ (կամ բժշկական անհրաժեշտություն).** Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներկայացնում է կարևոր ծառայություններ, որոնք տրամաբանական են և պաշտպանում են կյանքը: Խնամքն անհրաժեշտ է արգելելու համար հիվանդների լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը: Այս խնամքը նվազեցնում է սաստիկ ցավերը՝ ախտորոշելով կամ բուժելով խնդիրը, հիվանդությունը կամ վնասվածքը: 21 տարեկանից ցածր անդամների համար Medi-Cal-ի բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներառում են խնամք, որն անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը շտկելու կամ օգնելու համար, ներառյալ թմրանյութի օգտագործման խանգարումները:

**Բժշկական տուն.** Խնամքի մոդել, որն ապահովում է առաջնային առողջության խնամքի հիմնական գործառույթները: Այն ներառում է համապարփակ խնամք, հիվանդի վրա կենտրոնացած, համակարգված խնամք, մատչելի ծառայություններ, ինչպես նաև որակ և անվտանգություն:

**Բժշկական փոխադրում.** Փոխադրում, որը մատակարարը նշանակում է անդամի համար, երբ անդամը ֆիզիկապես կամ բժշկական առումով չի կարող օգտվել մեքենայից, ավտոբուսից, գնացքից կամ տաքսիից՝ ապահովագրված բժշկական այցի գնալու կամ դեղատոմսը վերցնելու համար: Blue Shield Promise-ը վճարում է ամենից էժան փոխադրման համար Ձեր բժշկական կարիքների համար, երբ Ձեզ փոխադրություն է հարկավոր Ձեր ժամադրության համար:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Բժշկի ծառայություններ.** Ծառայություններ, որոնք մատուցվում են այն անձանց կողմից, որոնք նահանգային օրենքի համաձայն արտոնագրված են բժշկական կամ օտբեռպատիկ ծառայություններ մատուցելու համար՝ առանց ներառելու այն ծառայությունները, որոնք մատուցվում են բժշկների կողմից, երբ անդամը ընդունվել է հիվանդանոց և դրանց համար ծախս է սահմանվել հիվանդանոցային հաշվում:

**Բողոք.** Անդամի բանավոր կամ գրավոր դժգոհությունը Medi-Cal-ի, Blue Shield Promise-ի, վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի կամ Medi-Cal-ի մատակարարի կողմից ապահովագրված ծառայության վերաբերյալ: Ցանցի մատակարարի դեմ Blue Shield Promise-ում ներկայացված գանգատը բողոքի օրինակ է:

**Բողոքարկում.** Անդամի խնդրանքն է, որ Blue Shield Promise-ը վերանայի և փոխի մի որոշում, որը մենք կայացրել ենք խնդրված ծառայության ապահովագրման վերաբերյալ:

**Գանգատ.** Անդամի բանավոր կամ գրավոր դժգոհությունը Medi-Cal-ի, Blue Shield Promise-ի, վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի կամ Medi-Cal-ի մատակարարի կողմից ապահովագրված ծառայության վերաբերյալ: Գանգատը նույնն է, ինչ բողոքը:

**Գյուղական առողջապահական կլինիկա (RHC).** Առողջապահական կենտրոն այնպիսի վայրում, որտեղ չկան մեծաթիվ մատակարարներ: RHC-ում կարող եք ստանալ առաջնային և կանխարգելիչ խնամք:

**Գործի կառավարիչ.** Գրանցված բուժքույրեր կամ սոցիալական աշխատողներ, որոնք կարող են օգնել անդամին հասկանալ գլխավոր առողջական խնդիրները և խնամք կազմակերպել անդամի մատակարարների հետ:

**Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (Federally Qualified Health Center, FQHC).** Առողջապահական կենտրոն այնպիսի վայրում, որտեղ չկան մեծաթիվ մատակարարներ: Անդամը կարող է FQHC-ում ստանալ առաջնային և կանխարգելիչ խնամք:

**Դատական վնասի վերականգնում.** Երբ նպաստները տրամադրվում են կամ կտրամադրվեն Medi-Cal-ի անդամին վնասվածքի պատճառով, որի համար պատասխանատու է մեկ այլ կողմ, DHCS-ը վերականգնում է այդ վնասվածքի համար անդամին տրամադրված նպաստների ողջամիտ արժեքը:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Ղեղատոմսով դեղեր.** Դեղամիջոց, որը դուրս գրելու համար օրենքի համաձայն պահանջվում է արտոնագրված մատակարարի՝ դեղի դուրս գրման պատվերը, ի տարբերություն առանց դեղատոմսի դեղերի (over-the-counter, OTC), որոնք դեղատոմս չեն պահանջում:

**Ղեղատոմսով դեղի ապահովագրություն.** Ապահովագրություն մատակարարի կողմից նշանակված դեղերի համար:

**Երկարատև խնամք.** Խնամք, որը ստացվում է հաստատություն ընդունման օրվանից հետո մեկ ամսից ավել ժամանակահատվածում՝ գումարած 1 ամիս:

**Զգայուն ծառայություններ.** Ծառայություններ՝ կապված հոգեկան կամ վարքային առողջության, սեռական և վերարտադրողական առողջության, ընտանիքի պլանավորման, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI), ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի, սեռական ոսնձգությունների և աբորտների, թմրանյութերի օգտագործման չարաշահման, սեռը հաստատող խնամքի և ինտիմ գործընկերոջ կողմից բռնության հետ:

**Ընտանիքի ծրագրման ծառայություններ.** Հղիությունը կանխարգելելու կամ ուշացնելու ծառայություններ: Ծառայությունները մատուցվում են պտղաբեր տարիքի անդամներին, որպեսզի նրանք կարողանան որոշել երեխաների քանակը և ծննդյան պարբերականությունը:

**Ինտենսիվ խնամքի հաստատություն (չափահասների կամ մանկական).** Երկարատև խնամքի հաստատություն, որն ապահովում է համապարփակ խնամք բժշկական առումով վատառողջ անդամների համար, որոնք հատուկ ծառայությունների կարիք ունեն, ինչպիսիք են ինհալացիոն թերապիան, տրախեոտոմիան, ներերակային խողովակով կերակրումը և վերքերի բուժման համապարփակ խնամքը:

**Լուրջ հիվանդություն.** Հիվանդություն կամ վիճակ, որը պետք է բուժել և կարող է մահացություն պատճառել:

**Խարդախություն.** Խաբելու կամ ապակողմնորոշելու միտումնավոր արարք անձի կողմից, ով գիտի, որ խաբեությունը կարող է հանգեցնել չլիազորված նպաստի սվյալ անձի կամ ուրիշի համար:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):



**Խնամքի շարունակում.** Ծրագրի անդամի կարողությունը՝ շարունակելու Medi-Cal-ի ծառայություններն ստանալ իր ընթացիկ արտացանցային մատակարարից մինչև 12 ամիս, առանց ծառայությունների ընդմիջման, եթե մատակարարն ու Blue Shield Promise-ը համաձայնվեն:

**Ծրագիր.** Անցեք «Կառավարվող խնամքի ծրագիր»:

**Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ (CCS).** Medi-Cal ծրագիր, որը ծառայություններ է տրամադրում մինչև 21 տարեկան երեխաներին, որոնք ունեն որոշակի առողջական խնդիրներ, հիվանդություններ կամ քրոնիկ առողջական խնդիրներ:

**Կառավարվող խնամքի ծրագիր.** Medi-Cal-ի առողջապահական ծրագիր, որն օգտվում է միայն որոշակի բժիշկներից, մասնագետներից, կլինիկաներից, դեղատներից և հիվանդանոցներից՝ ծրագրին անդամագրված Medi-Cal անդամների համար: Blue Shield Promise-ը կառավարվող խնամքի ծրագիր է:

**Կլինիկա.** Մի հաստատություն, որը անդամները կարող են ընտրել որպես իրենց Առաջնային խնամքի մատակարար (PCP): Այն կարող է լինել Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (FQHC), համայնքային կլինիկա, Գյուղական առողջապահական կլինիկա (RHC), Հնդկացիների առողջապահական խնամքի մատակարար (IHCP) կամ առաջնային խնամքի այլ հաստատություն:

**Համավճարում (համավճար).** Այն վճարը, որը կատարում է անդամը, հիմնականում ծառայության պահին՝ ի հավելումն ապահովագրող կողմի վճարման:

**Հանրային առողջապահական ծառայություններ.** Առողջապահական ծառայություններ, որոնք ուղղված են ողջ բնակչության: Մրանք ընդգրկում են, ուրիշների կարգին, առողջական վիճակի անալիզ, առողջության հսկում, առողջության խթանում, կանխարգելիչ ծառայություններ, վարակիչ հիվանդության կառավարում, միջավայրի պաշտպանություն և առողջագիտություն, աղետի պատրաստվածություն և հակազդում, և աշխատանքային առողջապահություն:

**Հաստատված հիվանդ.** Հիվանդ, ով հաստատված կապ ունի մատակարարի հետ և այցելել է այդ մատակարարին առաողջապահական ծրագրով սահմանված որոշակի ժամկետում:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Հետազոտական բուժում.** Բուժող դեղամիջոց, կենսաբանական արտադրանք կամ սարք, որը հաջողությամբ անցել է Դեղամիջոցների վերահսկման դաշնային վարչության (Federal Drug Administration, FDA) կողմից հաստատված կլինիկական հետազոտության առաջին փուլը, սակայն հաստատված չէ FDA-ի կողմից ընդհանուր օգտագործման համար և մնում է FDA-ի կողմից հաստատված կլինիկական հետազոտության փուլում:

**Հետբուժական ստուգման խնամք.** Բժշկի ընթացիկ խնամք՝ ստուգելու համար անդամի վիճակի բարելավումը հիվանդանոցային բուժումից հետո կամ բուժման ընթացքում:

**Հետ-կայունացման ծառայություններ.** Շտապ բուժօգնության հետ կապված ապահովագրության ծառայություններ, որոնք տրամադրվում են անդամի կայունացումից հետո՝ անդամի կայունացված վիճակը պահպանելու համար: Հետ-կայունացման խնամքի ծառայությունները ապահովագրվում և վճարվում են: Արտացանցային հիվանդանոցներին կարող է անհրաժեշտ լինել նախավավերացում (նախօրոք լիազորում):

**Հիվանդանոց.** Վայր, որտեղ անդամը ստանում է ստացիոնար և ամբուլատոր խնամք բժիշկների և բուժքույրերի կողմից:

**Հիվանդանոցային բուժում.** Հիվանդանոց ընդունում՝ որպես ստացիոնար հիվանդ բուժման համար:

**Հիվանդանոցի ամբուլատոր խնամք.** Բժշկական կամ վիրաբուժական խնամք, որը հիվանդանոցում իրականացվում է առանց այնտեղ որպես ստացիոնար ընդունվելու:

**Հմուտ բուժքույրական խնամք.** Ապահովագրված ծառայություններ, որոնք մատուցվում են արտոնագրված բուժքույրերի, տեխնիկների կամ թերապևտների կողմից՝ հմուտ բուժքույրական հաստատությունում կամ անդամի տանը կեցության ընթացքում:

**Հմուտ բուժքույրական հաստատություն.** Վայր, որը մատուցում է 24-ժամյա բուժքույրական խնամք, որը կարող են տալ միայն պատրաստված առողջապահական պրոֆեսիոնալները:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

**Հնդկացիների առողջապահական մատակարար (Indian Health Care Providers, IHCP).** Առողջապահական ծրագիր, որը գործում է Ամերիկյան հնդկացիների առողջապահական ծառայության (Indian Health Service, IHS), ցեղային կազմակերպության, հնդկացիների ցեղի, ցեղային կազմակերպության կամ քաղաքային հնդկացիների կազմակերպության (Urban Indian Organization, UIO) կողմից, քանի որ այդ տերմինները սահմանված են Հնդկացիների Առողջապահության բարելավման ակտի 4-րդ բաժնում (25 U.S.C. բաժին 1603):

**Հոգեբուժական արտակարգ իրավիճակի խնդիր.** Հոգեկան խանգարում, որի դեպքում ախտանիշներն այնքան լուրջ կամ սաստիկ են, որ անդամի կամ այլոց համար ներկայացնում են անմիջական վտանգ, կամ երբ անդամը հոգեկան խանգարման պատճառով ընդհանրապես չի կարող իրեն ապահովել սննդով, ապաստարանով կամ հագուստով:

**Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ.** Ամբուլատոր ծառայություններ անդամների համար, ովքեր ունեն մեղմից չափավոր հոգեկան առողջության վիճակներ, ներառյալ՝

- Անհատական կամ խմբային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեբուժություն)
- Հոգեբանական ստուգում՝ հոգեկան առողջության խնդրի գնահատման համար, երբ կլինիկական տեսանկյունից ցուցված է
- Ամբուլատոր ծառայություններ, որոնք նպատակ ունեն դեղաբուժումը հսկել
- Հոգեբուժական խորհրդատվություն
- Ամբուլատոր լաբորատորային անալիզներ, պաշարներ և լրացուցիչներ

**Հոգեկան առողջության ծառայությունների մատակարար.** Առողջական խնամքի մասնագետներ, որոնք հիվանդներին մատուցում են հոգեկան առողջության և վարքագծային առողջության ծառայություններ:

**Հոսփիս (Անբուժելի հիվանդների խնամք).** Մահացու հիվանդություն ունեցող անդամի համար ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհանգստությունները նվազեցնող խնամք: Հոսփիսը հասանելի է, եթե անդամն ունի 6 ամիս կամ նվազ ապրելու ակնկալություն:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

**Հրատապ խնամք (կամ հրատապ ծառայություններ).** Ծառայություններ, որոնք մատուցվում են բժշկական խնամք պահանջող ոչ-արտակարգ իրավիճակի հիվանդության, վնասվածքի կամ առողջական խնդրի համար: Անդամները կարող են հրատապ խնամք ստանալ արտացանցային մատակարարից, եթե ցանցային մատակարարները ժամանակավորապես անհասանելի կամ անմատչելի են:

**Մահացու հիվանդություն.** Բժշկական խնդիր, որը հնարավոր չէ բուժել, և շատ հավանական է, որ այն մահի կհանգեցնի 1 տարվա ընթացքում կամ ավելի վաղ, եթե հիվանդությունը ընթանա իր բնական ընթացքով:

**Մանկաբարձական ծառայություններ.** Նախածնական, ծննդաբերության և հետծննդաբերական խնամք, որը ներառում է ընտանիքի պլանավորման ծառայություններ մայրիկների համար և անմիջական խնամք նորածինների համար և մատուցվում է վկայագրված բուժքույր-մանկաբարձների (certified nurse midwives, CNM) և արտոնագրված մանկաբարձների (licensed midwife, LM) կողմից:

**Մասնագետ (կամ մասնագիտացած բժիշկ).** Բժիշկ, ով բուժում է որոշ տեսակի առողջական խնամքի խնդիրներ: Օրինակ, ոսկրաբույժ վիրաբույժը բուժում է կոտրած ոսկորները. ալերգիաների մասնագետը բուժում է ալերգիաները. և սրտաբանը բուժում է սրտի խնդիրները: Հիմնականում անդամին անհրաժեշտ է լինում ուղեգիր իր PCP-ից՝ մասնագետի մոտ գնալու համար:

**Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ (Specialty mental health services, SMHS).** Հոգեկան առողջության ծառայությունների կարիք ունեցող անդամների ծառայություններ, որոնք ավելի բարձր մակարդակի խանգարում ունեն, քան թեթևից միջին:

**Մասնակից հիվանդանոց.** Արտոնագրված հիվանդանոց, որը պայմանագիր է կնքել Blue Shield Promise-ի հետ, որպեսզի ծառայություններ մատուցի անդամին՝ անդամի խնամք ստանալու պահին: Ապահովագրված ծառայությունները, որոնք մի շարք մասնակից հիվանդանոցներ թերևս առաջարկում են անդամներին, սահմանափակվում են Blue Shield Promise-ի օգտագործման վերանայումով և որակի երաշխավորման քաղաքականություններով կամ հիվանդանոցի հետ Blue Shield Promise-ի ունեցած պայմանագրով:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Մասնակից մատակարար (կամ մասնակից բժիշկ).** Մի բժիշկ, հիվանդանոց կամ ուրիշ արտոնագրված առողջական խնամքի պրոֆեսիոնալ կամ արտոնագրված առողջապահական հաստատություն, ներառյալ՝ ենթասուր խնամքի հաստատությունները, որոնք պայմանագիր ունեն **Blue Shield Promise**-ի հետ՝ անդամներին առաջարկելու ապահովագրված ծառայություններ, երբ անդամը խնամք է ստանում:

**Մատակարարների հասցեագիրք.** **Blue Shield Promise**-ի ցանցում գտնվող մատակարարների ցանկ:

**Միջանկյալ խնամքի հաստատություն կամ տուն.** Խնամք տրամադրվում է երկարատև խնամքի հաստատությունում կամ տանը, որը տրամադրում է 24-ժամյա բնակելի ծառայություններ: Միջանկյալ խնամքի հաստատությունների կամ տների տեսակները ներառում են միջանկյալ խնամքի հաստատություն/զարգացման հաշմանդամություն (ICF/DD), միջանկյալ խնամքի հաստատություն/զարգացման հաշմանդամություն. հաբիլիտատիվ (ICF/DD-H) և միջանկյալ խնամքի հաստատություն/զարգացման հաշմանդամություն ունեցող. բուժքույրական (ICF/DD-N):

**Նախավավերացում (նախօրոք լիազորում).** Գործընթաց, որով անդամը կամ նրա մատակարարը պետք է հաստատում խնդրի **Blue Shield Promise**-ից որոշակի ծառայությունների համար՝ համոզված լինելու համար, որ **Blue Shield Promise**-ը դրանք ապահովագրելու է: Ուղեգիրը հաստատում չէ: Նախավավերացումը նույնն է, ինչ նախօրոք լիազորումը:

**Նախնական լիազորություն (նախօրոք լիազորում).** Գործընթաց, որով անդամը կամ նրա մատակարարը պետք է հաստատում խնդրեն **Blue Shield Promise**-ից որոշակի ծառայությունների համար՝ համոզված լինելու, որ **Blue Shield Promise**-ը դրանք ապահովագրելու է: Ուղեգիրը հաստատում չէ: Նախնական լիազորությունը նույնն է, ինչ նախավավերացումը:

**Նպաստներ.** Առողջական խնամքի ծառայություններ և դեղեր, որոնք ապահովագրվում են այս առողջապահական ծրագրի ներքո:

**Նպաստների համակարգում (COB).** Որոշման գործընթացը՝ թե ո՞ր ապահովագրական ծածկույթը (**Medi-Cal**, **Medicare**, առևտրային ապահովագրություն կամ այլ) ունի առաջնային բուժման և վճարման պարտավորություններ անդամների համար, ովքեր ունեն մեկից ավելի առողջական ապահովագրության ծածկույթ:



Ջանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: **Blue Shield Promise**-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով:  
Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Շտապ օգնություն.** Քննություն, որը կատարում է բժիշկը (կամ օրենքի թույլատրության համաձայն բժշկի ցուցմունքի ներքո գործող անձնակազմը), պարզելու համար արտակարգ իրավիճակի բժշկական վիճակի առկայությունը: Բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ, որոնք հարկավոր են հաստատության հնարավորությունների ծիրում Ձեր վիճակը դարձնելու կլինիկականորեն կայուն:

**Ոչ-բժշկական փոխադրում.** Փոխադրում, որն անհրաժեշտ է, երբ Medi-Cal-ի ապահովագրված ծառայություն ստանալու համար անդամի մատակարարի կողմից հաստատված այցի եք գնում և այնտեղից վերադառնում, ինչպես նաև երբ դեղատոմսեր և բժշկական պարագաներ եք վերցնում:

**Ոչ-մասնակից մատակարար.** Blue Shield Promise-ի ցանցում չգտնվող որևէ մատակարար:

**Ոսկրահարդար.** Մատակարար, որը ողնաշարը բուժում է ձեռքով մանիպուլյացիայի միջոցով:

**Որակյալ մատակարար.** Բժիշկ, որը որակավորված է պրակտիկայի ոլորտում և կարող է բուժել անդամի խնդիրը:

**Չապահովագրված ծառայություն.** Ծառայություն, որը Blue Shield Promise-ը չի ապահովագրում:

**Չափահասների համայնքահեն ծառայությունների (CBAS).** Աբուլատոր, հաստատությունում տրամադրվող ծառայություններ հմուտ բուժքույրական խնամքի համար, սոցիալական ծառայություններ, թերապիաներ, անձնական խնամք, ընտանիքի անդամի և խնամակալի վերապատրաստում և աջակցություն, սննդային ծառայություններ, փոխադրումներ և այլ ծառայություններ որակավորվող անդամների համար:

**Պայմանագրային դեղերի ցանկ (CDL).** Medi-Cal Rx-ի վավերացված դեղերի ցանկ, որից մատակարարը կարող է պատվիրել ապահովագրված դեղեր՝ ըստ անդամի կարիքների:

**Պրոթեզային սարք.** Մի արհեստական սարք, որը կցվում է մարմնին՝ մարմնի բացակա մասը փոխարինելու համար:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Սպասարկման տարածք՝ Blue Shield Promise-ի սպասարկած աշխարհագրական տարածքը:** Սա ներառում է Los Angeles վարչաշրջանը:

**Ստացիոնար խնամք.** Երբ անդամը պետք է գիշերի հիվանդանոցում կամ այլ վայրում՝ անհրաժեշտ բժշկական խնամք ստանալու համար:

**Սովորական խնամք.** Բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ և կանխարգելիչ խնամք, քաջատողջ երեխայի այցեր, կամ խնամք, ինչպես՝ սովորական հետբուժական խնամքը: Սովորական խնամքի նպատակն է առողջական խնդիրների կանխարգելումը:

**Սուր.** Բժշկական վիճակ, որը կարճ և հանկարծահաս է, պահանջում է արագ բժշկական ուշադրություն և երկար չի տևում:

**Վաղ և պարբերաբար զննում, ախտորոշում և բուժում (EPSDT).** Անցեք «Medi-Cal երեխաների և դեռահասների համար»:

**Վերականգնողական ծառայություններ և սարքեր.** Առողջական խնամքի ծառայություններ, որոնք օգնում են անդամին պահպանել, ձեռք բերել կամ բարելավել հմտությունները և ֆունկցիոնալությունը առօրյա կյանքի համար:

**Վերականգնողական թերապիայի ծառայություններ և սարքեր.** Ծառայություններ և սարքեր, որոնք օգնում են վնասվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկ հիվանդություններ ունեցող անդամներին ձեռք բերել կամ վերականգնել մտավոր և ֆիզիկական հմտությունները:

**Վերականգնողական վիրահատություն.** Վիրահատություն՝ ուղղելու կամ վերանորոգելու մարմնի անբնականոն կառուցվածքներ, որպեսզի բարելավվի գործառույթը կամ ստեղծի հնարավորինս բնականոն տեսք: Մարմնի անբնականոն կառուցվածքները նրանք են, որոնք առաջանում են մի բնածին թերությունից, զարգացական անբնականոնություններից, տրավմայից, վարակից, նորագոյացություններից կամ հիվանդությունից:

**Վկայագրված բուժքույր-մանկաբարձ (CNM).** Մի անհատ, ով արտոնագրվել է որպես Գրանցված բուժքույր և վկայագրվել է որպես բուժքույր-մանկաբարձ Կալիֆորնիայի Գրանցված բուժքույրերի խորհրդի կողմից: Վկայագրված բուժքույր-մանկաբարձին արտոնվում է հաճախել բնականոն ծննդաբերության դեպքերի:



Զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):

**Վճարովի ծառայությամբ (Fee-for-Service, FFS) Medi-Cal.** Երբեմն Blue Shield Promise-ը չի ապահովագրում ծառայությունները, բայց անդամը դեռ կարող է դրանք ստանալ FFS Medi-Cal-ի միջոցով, ինչպես օրինակ՝ Medi-Cal Rx-ի միջոցով դեղատոների բազմաթիվ ծառայություններ:

**Տանը մատուցվող առողջական խնամք.** Տանը մատուցվող հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ:

**Տանը մատուցվող առողջական խնամքի մատակարարներ.** Մատակարարներ, որոնք անդամների տանը մատուցում են հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ:

**Տեսական օգտագործման բժշկական սարքեր (DME).** Բժշկական սարքավորումներ, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և պատվիրված են անդամի բժշկի կամ այլ մատակարարի կողմից, և որոնք անդամն օգտագործում է տանը, համայնքում կամ այն հաստատությունում, որը տուն է հանդիսանում:

**Ցանց.** Բժիշկների, կլինիկաների, հիվանդանոցների և ուրիշ մատակարարների մի խումբ, որը խնամքի մատուցման համար պայմանագիր է կնքել Blue Shield Promise-ի հետ:

**Ցանցի մատակարար (կամ ներքանցային մատակարար).** Տեսեք «Մասնակից մատակարար»:

**Ցավամոքիչ խնամք.** Լուրջ հիվանդություն ունեցող անդամի ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգեկան անհարմարությունները նվազեցնող խնամք: Ցավամոքիչ խնամքը անդամից չի պահանջում ունենալ 6 ամիս կամ նվազ ապրելու ակնկալություն

**Ուղեգիր.** Երբ անդամի PCP-ն ասում է, որ անդամը կարող է խնամք ստանալ մեկ այլ մատակարարից: Մի շարք ապահովագրված խնամքներ և ծառայություններ պահանջում են ուղեգիր և նախավավերացում (նախօրոք լիազորում):

**Փորձարարական բուժում.** Դեղորայք, սարքավորումներ, ընթացակարգեր կամ ծառայություններ, որոնք գտնվում են փորձարկման փուլում՝ անցնում են լաբորատոր և/կամ կենդանիների վրա հետազոտություններ՝ նախքան մարդկանց վրա փորձարկումը: Փորձարարական ծառայությունները կլինիկական հետազոտություն չեն անցնում:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):



**Քրոնիկական վիճակ.** Հիվանդություն կամ այլ բժշկական խնդիր, որը հնարավոր չէ լրիվ բուժել կամ որը վատթարանում է ժամանակի ընթացքում կամ անհրաժեշտ է այն բուժել, որպեսզի անդամի վիճակը չբարդանա:

**Օրթոգային սարք.** Որպես հենարան օգտագործվող մի սարք կամ դրսից մարմնին ամրացված ամրակ՝ նեցուկ ընծայելու կամ ուղղելու մի խիստ շատ վնասված կամ ախտահարված մարմնի մաս և որը բժշկականորեն անհրաժեշտ է անդամի բժշկական ապաքինման համար:

**DHCS.** Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժնի ծառայություններ: Սա Նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է

**DMHC.** Կալիֆորնիայի Կառավարվող առողջական խնամքի բաժին: Սա Նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է կառավարվող խնամքի առողջապահական ծրագրերը:

**Medi-Cal երեխաների և դեռահասների համար** Նպաստ Medi-Cal-ի՝ 21 տարեկանից փոքր անդամների համար նրանց առողջությունը պահպանելու նպատակով Անդամները պարտավոր են հարմար առողջական ստուգումներն ստանալ իրենց տարիքին հարմար գնումների համար, որպեսզի վաղ հայտնաբերվեն առողջական խնդիրներն ու բուժվեն հիվանդությունները: Նրանք պետք է բուժում ստանան, որպեսզի խնամքի կամ օգնության հնարավորություն ունենան այն խնդիրների դեպքում, որոնք կարող են հայտնաբերվել ստուգումների ժամանակ: Այս նպաստը հայտնի է նաև որպես Վաղ և պարբերական զննման, ախտորոշման և բուժման (Early and Periodic Screening, Diagnostic, and Treatment, EPSDT) նպաստ՝ նահանգային օրենսդրության ներքո:

**Medi-Cal Rx.** Դեղատնային նպաստների ծառայություն, որը FFS Medi-Cal-ի մաս է և հայտնի է որպես «Medi-Cal Rx», որը տրամադրում է դեղատնային նպաստներ և ծառայություններ, ներառյալ դեղատոմսով դեղերը և որոշ բժշկական պարագաների մատուցումը Medi-Cal-ի բոլոր շահառուներին:

**Medicare.** Դաշնային առողջության ապահովագրության ծրագիր՝ 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց, որոշ ավելի երիտասարդ տարիքի հաշմանդամների և վերջին աստիճանի երիկամային հիվանդություն (խրոնիկ երիկամային անբավարարություն, որը պահանջում է դիալիզ կամ երիկամի փոխպատվաստում և երբեմն կոչվում է վերջին աստիճանի երիկամային հիվանդություն (End-Stage Renal Disease, ESRD)) ունեցող անձանց համար:



Ձանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով: Blue Shield Promise-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ, 08:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք California փոխանցման հեռախոսագիծ՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal):